



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



✓ Lt n
1579

1999



ՎԻՉԷԼՍ ՏԷԼԼ

Դ Ր Ա Մ Ա

ՀԻՆԳ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

Հեղինակություն

Շ Ի Լ Լ Ե Ր Ի

1885.

S-CHILLER'S
WILHELM TELL

Թարգմանություն

ԳԵՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑԻ

1873

Թ Ի Յ Լ Ի Զ

ՀԱՄԱՐՑՈՒՄ ԷՆՖԻՍՃԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ. ՏԳԱՐԱՆՈՒՄ






Дозволено цензурою, г. Тифлисъ, 20 Сентября 1873 года.

41579 - 60

3 р. 1585



S. P. U. S. T. U. S. S.

S. P. U. S. T. U. S. S.



SCHILLER'S
WILHELM TELL

—
Armenische Uebersetzung
von
Georg Barchudarjanz
—

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Անմահ Շ ի Լ Լ է թ ի Թատրոնական դրուած-
ների մէջ իւր դաղափարի վսէմութեամբ ան-
կասկած ամենապատուականներից մինն է նորա
Վ Ի Լ Հ Ե Լ Մ Տ Ե Լ Լ դրաման, որի հայերէն Թարգ-
մանութիւնը ահա ընծայում եմ հայ հասա-
րակութեանը:

»Բանաստեղծական դրուածքը պէտք է
ինքն իրան արդարացնէ, և ինչտեղ գործը չէ
խօսում իւր համար, այնտեղ բառերը շատ չեն
օգնի:« Ա. յսպէս է սկսում Շիլլէրը իւր «Մէսն-
նական հարս» ողբերգութեան յառաջաբանը.
Ես էլ չեմ ձանձրացնի ընթերցողին երկար յա-
ռաջաբանով, այլ միայն կը բաւականանամ հե-
տեւեալ կարճ նկատողութեամբ:

Խոստովանում եմ, որ հեշտ չէր իմ, յանձն
առած գործը, աչքի առաջ ունենալով մեր
այժմեան լեզուի մանուկ հասակը, որ դեռ ևս
այնքան դարդացած չէ Շիլլէրի պէս մի համաշ-
խարհային հանձարի բարձր և վսէմ մտքերը
ճշտութեամբ արտայայտել իւր, կարելի է ասել,
Թոթովանքով: Բայց այնու ամենայնիւ ես իմ

կողմից չեմ խնայել ոչ ինչ աշխատանք որքան
հասր էր մօտ մնալ բնագրին առանց բառայի
ճշտութեան ետեւից ընկնելու: Բայցի դորանից
թարգմանութեանս մէջ դոյժ եմ ածել այն-
պիսի լեզու, որ հասկանալի լինի ամեն դրագէտ
հային: Թէ որքան յաջողել է ինձ այդ բանը,
թողնում եմ վճռել հասարակութեանը, որի
արդար դատաստանին առաջարկում եմ իմ
աշխատութիւնը:

Գ. Բարխուդարեանց :

1873 Մեղակոմիտի 15-ին

Քիֆլիզ:

ԱՆՁԻՆՔՆԵՐ

ՀԵՐՄԱՆ ԳԵՍԼԷՐ, *կայսերական կուսակալ (սկզբախօսա) շվից*
և *Ուրի դաւաններումը:*

ՎԵՐՆԷՐ, ԲԱՌՈՆ ՖՅՆ ԱՏՏԻՆԳՀԱՌԻՋԷՆ,
ՈՒՂՐԻԽ ՖՅՆ ԲՈՒԴԷՆՅ, *նորա եղբորորդին:*

ՎԵՐՆԷՐ ՇՏԱՌԻՖԱԽԷՐ,

ԿՕՆՐԱԴ ՀՈՒՆ,

ԻԴԷԼ ԲԵԴԻՆԳ,

ՀԱՆՍ ՏՈՒՖ ԴԷՐ ՄԱՌԻԷՐ,

ԻՈՐԳ ԻՄ ՀՕՖԷ,

ՈՒՂՐԻԽ ԴԵՌ ՇՄԻԴ,

ԻՈՍՏ ՖՅՆ ՎԵՅԼԷՐ,

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՄՏ,

ՎԻԼՀԷԼՄ ՏԷԼԼ,

ԲԵՍԷԼՄԱՆ, *քահանայ,*

ՊԵՏԷՐՄԱՆ, *տիրացու,*

ԿՈՒՌՆԻ, *հովիտ,*

ՎԵՐՆԻ, *որսորդ,*

ԲՈՒՌԴԻ, *ձկնորս,*

ԱՌՆՈՂԴ ՖՅՆ ՄԷԼԻԹԱԼ,

ԿՈՆՐԱՏ ԲԱՌԻՄԳԱՐՏԷՆ

ՄԷՅԵՐ ՖՅՆ ՍԱՐՆԷՆ,

ՍՏՐՈՒՏ ՖՅՆ ՎԻՆԿԷԼՐԻԴ

ԿՂԱՌԻՍ ՖՅՆ ԴԷՐ ՖԼԻԻԷ

ԲՈՒՐԿՀԱՐՏ ԱՄԲԻԻՀԷԼ,

ԱՌՆՈՂԴ ՖՅՆ ՍԷՎԱ,

ՊՖԷՅՖԷՐ ՖՅՆ ԼՈՒՑԷՐՆ:

ԿՈՒՆՅ ՖՅՆ ԳԷՐՋԱՌԻ

ՓԷՆԻ, *ձկնորսի տղայ*

ՍԷՊՊԻ, *հովիտի տղայ:*

ԳԷՐՏԸՌԻԴ, *շտաուֆախէրի կինը:*

ՀԷԴՎԻԳ, *Տէլի կինը, վաղաէր Ֆիւրտի դուստրը:*

ԲԷՐԹԱ ՖՅՆ ԲԸՌԻՆԷԿ, *հարուստ տղնուական աղջիկ:*

գիւղացիներ

շվից

գաւարից

Ուրի գաւարից

Ունտէրակալ

դէնից:

ԱՐՄԳԱՐՏ,
ՄԷԻԹԻԼԴ,
ԷԼՍԲԷԹ,
ՀԻԼԴԵԳԱՐԴ,

} *գիւղացի կանայք:*

ՎԱԼՏԵՐ
ՎԻԼՀԷԼՄ,

} *Տէսի տղերքը:*


ՖՐԻՍՏՆԻՍ,
ԼԷՅՏՅՕԼՖ,

} *ղինուորներ*

ԲՈՒԴՕԼՖ ԴԷՌ ՀԱՐՐԱՍ, ԳԷՄԼԵՐԻ ախտաւարտը:
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԱՅՐԱՍՊԱՆ (պարրիցիդա), Շվարիայի դուքսը
ՇՏԻՍԻ, աղէղնատը
ՈՒՐԻ ԳԱԻՍՈՒ ՓՈՂԱՀԱՐԸ:
ԹԱԳԱԻՈՐԱԿԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ:
ՇԻՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՑՈՒ:
ՎԱՐՊԵՏ ՇՏԷՅՆՄԷՅ, ՕԳՆԱԿԱՆՆԵՐ և ՄՇԱԿՆԵՐ:
ՀՐԱՊԱՐԱԿԱԿԱՆ ՄՈՒՆԷՏԻԿՆԵՐ:
ԿՐՈՆԱԻՈՐՆԵՐ:
ԳԷՍԼԷՐԻ և ԼԱՆԴԷՆՅԱԷՐԳԷՐԻ ԶԻԱԻՈՐՆԵՐ:
ՇԱՏ ԳԻՒՂԱՑԻՆԵՐ, ՄԱՐԴԻԿ ու ԿԱՆԱՅԻ ԳԱՄԱՌՆԵՐԻՅ:



ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ



Առաջին տեսարան:

Ֆիրվալդշտեդտեր լճի բարձր ժայռոտ ափը Շվիցին հանդէպ:

Լիճը կաղնուս է մի ծոց , ափի մօտ կանդնած է մի խորճիթ: Ձ Կ Ն Ո Ր Ս Ի Տ Ղ Ա Ն անց է կենում նառակով: Լճի միակողմը երևում են Շվիցի կանաչ մարգագետինները, դիպերը և տնակները պայծառ լուսաւորած արևով : Հանդիսատեսների ձախ կողմը երևում են մի լերան ամպերով պատած դազաթները, աջ կողմը հեռու բարձրանում են սառցապատ լեռներ: Դեռ վարագոյրը չը բացուած, լսվում են հովուական երգերի (պուհրէյհէն) և խաշինների զանգակների ներդաշնակ ձայները, որ վարագոյրը բացուելուց յետոյ էլ կշարունակվում է մի կարճ ժամանակ:

ՁԿՆՈՐՍԻ ՏՂԱՆ (երգում է նառակի մէջ):

(Եղանակ պուհրէյհէնի):

Ծովակը ժպտում է, իւր դիրկն է կանչում ,
Նրա կանաչ ափի վրայ մանուկը ննջում:

Սրնգի ձայնի նման

Նուագ է լսում,

Կարծես հրեշտակները

Երգում են դրախտում:

Եւ երբ նա դարձում է բաւականացած,
Ջրերը թրջում են նորա կուրծքը բաց.

Եւ լծի անդունդից

Լսվում է այսպէս.

Մանուկ, եկ իմ դիրկը,

Մանուկ, դու իմն ես:

ՀՈՎԻԸ (երգում է լերան վերայ):

(փոփոխութիւն կուհրէյհէնի):

Մնաք բարով, մարդեր,

Արօտներ փայլուն.

Ամառն անցկացաւ,

Հօտը դնում է տուն:

Մենք էլի կրգանք, կրարձրանանք սարը,

Երբ թռչունների կղարթեն երգերը,

Երբ ծաղիկները կծածկեն երկիրը,

Անոյշ Մայիսին կվազեն Ջրերը:

Մնաք բարով, մարդեր,

Արօտներ փայլուն.

Ամառն անցկացաւ,

Հօտը դնում է տուն:

Ա.Լ.ՊԵԱՆ ՈՐՍՈՐԴԸ (երևում է հանդիպակաց ժայռի դիմաց):

(Երկրորդ փոփոխութիւն):

Թնդում են լեռները, շաւիղը դողում,

Միայն քաջ որսորդի սիրտը չէ դողում.

Համարձակ քայլում է

Սառած դաշտի վրայ,

Ուր չէ ծաղկում դարուն,

Կանաչ թռի չըկայ:

Եւ նրա ստների տակ ծովանման մէջը
Ծածկում է նորանից գիւղ ու քաղաքը՝

Ամպերի ճեղքուածից

Հաղիւ է տեսնում,

Ինչպէս խոր ձորի մէջ

Գաշտը կանաչում:

(Տեսարանը փոխվում է, լեռների մէջ լսվում է խուլ
թնդիւն, ամպերի ստուերներ անց են կենում բեմի վրայ):

Ր Ո Ւ Ո Դ Ի, ձկնորսը դուրս է գալիս խրճիթից. Վ, Ե Ր-
Ն Ի, որսորդը, իջնում է ժայռից. Վ Ո Ւ Ո Ն Ի, հովիտը գա-
լիս է կթոցը ուսին, Ս Ե Պ Պ Ի, նորա տղան, հետևում է նո-
րան:

ՐՈՒՈՐԴԻ

Շուտ արա, Ժէննի, ուռկանը քաշիր,

Ամպեր են գալիս և խուլ թնդում է

Սառնամանիքը: Տես, Միթէնչտէյնը

Գդակը ծածկեց, և սառը քամին

Լայն բայ է արեւ իւր մեծ բերանը.

Կարծում եմ շուտով մրրիկ կըլինի:

ԿՈՒՈՆԻ

Անձրև կըզայ շուտ. Տես, ոչխարներս

Ինչ ախորժակով ուտում են խոտը,

Վ, Ե Ր Ն Ի

Չուկը խաղում է, ջրհաւը կուլ գնում.

Սաստիկ փոթորիկ վրայ կըհասնի մեղ:

ԿՈՒՈՆԻ (տղին):

Սէպպի, աէս, ցրուած ջլինի ապրանքը:

ՍԵՊՊԻ

Շատ մօտ եմ լսում Լիսլի դանդակը:

ԿՈՒՈՆԻ

Նա որ այստեղ է, բոլորն այստեղ են :

ԲՈՒՈԴԻ

Շատ լաւ դանդակներ ունիս, հարեան :

ՎԷՐՆԻ

Եւ սիրուն ապրանք:—Քոնն է բոլորը:

ԿՈՒՈՆԻ

Չեմ այդքան հարուստ—իմ պարոնիմն է,

Ատտինգհատուղէնի, ու ինձ պահ տուած :

ՎԷՐՆԻ

Ի՛նչ գեղեցիկ է այս կովը վզին

Կապած ժապ՛ւէնով:

ՎԷՐՆԻ

Այդ ինքն էլ դիտէ.

Էլ խոտ չի ուտի, թէ որ յետ անեմ :

ԲՈՒՈԴԻ

Դատարկ խօսքեր են, անբան կենդանին—

ՎԷՐՆԻ

Չէ անասունն էլ, եղբայր, խելք ունի.

Այդ մենք լաւ դիտենք, այժ որսողներս :

Նոքա միշտ մի այժ պահապան են դնում,

Երբ որ լերան վրայ մի տեղ արծուս են:

Նա ականջները ցիցարած գլխին

Իմաց է անում պինդ շուացնելով,

Երբ որ որսորդը գալիս է:

ԲՈՒՈԴԻ: (հովվին)

Դրացի,

Տոնն ես քշում այժմ :

ԿՈՒՈՆԻ

Հնա, լեռների վրայ

Խոտը վերջացաւ:

ՎԷՐՆԻ

Բարի ճանապարհ:

ԿՈՒՈՆԻ

Մի և նոյնը ես ցանկանում եմ քեզ,

Միշտ չեն յետ դալիս ձեր ճանապարհից:

ԲՈՒՈՐԻ

Տեսէք, վաղեվազ դալիս է մի մարդ

ՎԷՐՆԻ

Դա իմ ծանօթն է, Բառամդարա Ալցէլնցի:

Կ Օ Ն Բ Ա Դ Բ Ա Ո Ւ Մ Գ Ա Ր Տ Է Ն

(Տուն է ընկնում հետոյ):

ԲԱՈՒՄԳԱՐՏԷՆ

Չկնորս, նաւակդ ի սէր Աստուծոյ:

ԲՈՒՈՐԻ

Հի, ինչ ես շտապում:

ԲԱՈՒՄԳԱՐՏԷՆ

Շուտ անցկացրու ինձ,

Ազատիւր մահից:

ԿՈՒՈՆԻ

Եղբայր, ինչ կայ, ինչ:

ՎԷՐՆԻ

Ումից ես փախչում:

ԲԱՈՒՄԳԱՐՏԷՆ (ձկնորսին)

Ո՛հ շուտ, շուտ շտապիւր,

Նորա կըհասնեն: Մեր կուսակալի

Չիաւորները իմ ետևիս են.

Ա՛խ, ես կորած եմ, թէ որ ինձ բռնեն:

ԲՈՒՈՂԻ

Ինչի՞ են նորա ընկել ետևիցդ:

ԲԱՌԻՄԳԱՐՏԷՆ

Առաջ դեռ փրկիր, յետոյ կը պատմեմ:

ՎԷՐՆԻ

Քեզ վրայ արիւն կայ, ինչ է պատահել:

ԲԱՌԻՄԳԱՐՏԷՆ

Կայսրի կուսակալ, որ Բոսրէրզումն էր —

ԿՈՒՈՆԻ

Վոլֆէնչխէնը, հալածում է քեզ:

ԲԱՌԻՄԱՐՏԷՆ

Էլ մնաս չի տայ, ես նրան սպանեցի:

ԲՈՒՈՐԸ (զարհուրած յետ քաշուելով)

Աստուած օգնէ քեզ: Այդ ինչ ես արել:

ԲԱՌԻՄԳԱՐՏԷՆ

Ինչ որ ամեն մարդ իմ տեղը կանէր:

Սա դարձ դրեցի իմ իրաւունքը

Դէմ իմ ու կնոջս պատուին դիպչողին:

ԿՈՒՈՆԻ

Միթէ քո պատուին դիպաւ լանդֆօխտը:

ԲԱՌԻՄԳԱՐՏԷՆ

Կացինս ու Աստուած թոյլ չըտուեցին,

Որ նա հասնէր իւր չար ցանկութեանը:

ՎԷՐՆԻ

Դու նորա գլուխը կացնով ճեղքեցիր:

ԿՈՒՈՆԻ

Դեռ ժամանակ կայ, պատմիր բոլորը,

Մինչև յետ անէ ափից նաւակը:

ԲԱՌԻՄԳԱՐՏԷՆ

Փայտ էի կտրում անտառում, կինս

Ահից կիսամահ վազեմազ եկաւ.

«Կուսակալն», ասաց «մեր տանն է, նա ինձ
Հրամայեց բաղնիք պատրաստել, վերջը
Արեց անպատշաճ առաջարկութիւն:

Ես փախայ նրանից, որ քեզ գտնեմ:» Եւտ
Կացինը ձեռիս վազեցի ես տուն
Ու տեղն ու տեղը զլուխը կէս արի:

ՎԵՐՆԻ

Ետտ լաւ ես արել, ոչ ոք մեղաւոր
Չի համարի քեզ:

ԿՈՒՈՆԻ

Գազանը ստացաւ

Իւր վարձը, որին վաղուց արժան էր,
Ունտէրվալդէնի մեղքը հասաւ նրան:

ԲԱՌԻՄԳԱՐՏԷՆ

Բանը խմացուեց, ետևիցս ընկան:—

Ախ', Տէր Աստուած, շուտ, ժամանակ չը կայ:

(Սկսում է որոտալ:)

ԿՈՒՈՆԻ

Չկնորս շուտ արա, անցկացրու սորան:

ԲՈՒՈՂԻ

Անկարելի է, փոթորիկ կլինի:

Դու պէտք է սպասես:

ԲԱՌԻՄԳԱՐՏԷՆ

Ո՛հ Տէր Աստուած իմ,

Չեմ կարող սպասել, փրկիր ինձ մահից:—

ԿՈՒՈՆԻ (ձկնորսին):

Իէ՛հ, Աստուած յիշիր, եղբայր, ու օգնիր.

Մեզ էլ կարող է այս օրը հասնել:

(մրրիկ և որոտմունք)

ԲՈՒՈՂԻ

Մբբիկը սկսեց, տեսնում էք ինչպէս
Ալեկոծւում է ծովը, եւ միթէ

Կարող եմ դնալ փոթորիկի դէմ:

ԲԱՌԻՄԳԱՐՏԷՆ (գրկում է նորա ծնկները):

Իսէր Աստուծոյ, ո՛հ, շուտ օգնիր ինձ:—

ՎԵՐՆԻ

Ո՛հ, խղճան, եղբայր, փրկիր սրտ կեանքը:

ԿՈՒՈՆԻ:

Սա հայր է, ունի կին ու զաւակներ:

(Յրտամուճք և կայծակ):

ԲՈՒՈՂԻ

Ես էլ կարող եմ կեանքս կորցնել,

Ես էլ ինչպէս դա ունիմ կին, որդի —

Բայց տեսէք, ինչպէս ալեկոծւում է,

Կարծես թէ յառակ ի վեր է լինում:

— Սրտով ուզում եմ սորան եւ օգնել,

Բայց հնար չըկայ, դուք լաւ էք տեսնում:

ԲԱՌԻՄԳԱՐՏԷՆ (Դեռ եւ շոքած):

Ուրեմն եւ կընկնեմ թշնամուս ձեռը,

Եւ անան այնտեղ ինձ փրկող ափը:—

Նա տարածւում է իմ աչքի առաջ.

Չայնա այտուեղից կը համնի այնտեղ:

Անան նաւակը, որ ինձ կը փրկէր,

Բայց դուր է յոյսս, անօգնական եմ:

ԿՈՒՈՆԻ

Այն ո՞վ է գալիս:

ՎԵՐՆԻ

Տէլլն է Բիւրգլէնից:

Տ է 1, 1. (գալիս է աղեղը ձեռին):

ՏԵՂԼ

Ո՞վ է այս մարդը և ի՞նչ է խնդրում :

ԿՈՒՈՆԻ

Ալցելն դիւղից է: Սա պաշտպանել է

իւր տան պատիւը և ըսպանել է

Վօլֆելնշխաէնին, որ կուսակալ էր

Արքայի կողմից Բոսրէրդ ամրոցում:—

Այժմ կուսակալի ձիաւորները

Ետևիցն ընկել ուղում են բռնին:

Եւ սա խնդրում է ձկնորսին, որ շուտ

իւր նաւակի մէջ միւս ատիը տանէ.

Բայց նա չէ ուղում մրրկի ահից:

ԲՈՒՈՂԻ

Տէլը ինքն էլ լաւ թիաւարում է,

Թ՛ող նա ինքն ասէ, արդեօք հնար կայ.

(Սաստիկ կայծակ, ծովը շփթփում է)

Ես ինձ ձգեմ այս դժոխքի բերանը,

Ո՞ր խելօք մարդը այդ բանը կանէ:

ՏԵՂԼ

Կարիճն իւր մասին վերջն է մտածում:

Յոյսդ Աստուծոն դիր, փրկիր ընկերիդ:

ԲՈՒՈՂԻ

Ափի վրայ կանգնած, հեշտ է խորհուրդ տալ:

Ահա նաւակը, ահա և ծովը,

Փորձիր, մի տեսնեմ:

ՏԵՂԼ

Ծովը կըխնայէ,

Կուսակալը չէ. եկ փորձիր, ձկնորս:

ՀՈՎԻՆՆԵՐԸ և ՈՐՍՈՐԳՆԵՐԸ

Փրկիր նրան, փրկիր:

ԲՈՒՈՂԻ

Թէ կուզէ լինի

Նորայրս, որդիս, անկարելի է.

Սիմօն Յուդայի օրն է այսօր և

Ծովը կատաղած զոն է պահանջում:

ՏԵՆԼ

Գատարկ խօսքերով բանը չի շինուի.

Այս մարդը կարօտ է շուտ օգնութեան:

Ասան ինձ, ձկնորս, ուզում ես, թէ չէ:

ԲՈՒՈՂԻ

Չէ, ես չեմ կարող:

ՏԵՆԼ

Ուրեմն թող Աստուած
լինի ինձ պաշտպան: Տներ ինձ նաւակդ.
Ինքս կըփորձեմ:

ԿՈՒՈՆԻ

Ա՛յ, քաջասիրտ ՏԵՆԼ:

ՎԵՐՆԻ

Ա՛յ, սա է տղամարդ:

ԲԱՈՒՄԳԱՐՏԵՆ

Գու իմ փրկողն ես
եւ հրեշտակը, ՏԵՆԼ:

ՏԵՆԼ

Լանդֆօխտի ձեռից

Ես քեզ կըփրկեմ, բայց փոթորիկից

Նա պիտի փրկէ: Բայց լաւ է ընկնել

Աստուծոյ ձեռը, քան թէ չար մարդու:

(Հովուին)

Բարեկամ, կնոջս կըմխիթաբես,

Թէ որ իմ գլխին փորձանք պատահի :

Ես չէի կարող չանել այս բանը :

(Նա թռչում է նաւակի մէջ):

ԿՈՒՈՆԻ (ձկնորսին),

Վարպետ մարդ ես դու, ինչ որ Տէլլն արեց

Միթէ չէիր կարող ինքդ յանձն առնել:

ԲՈՒՈՐԻ

Ինձնից լաւերն էլ Տէլլին չեն նման,

Մեր լեռների մէջ չըկայ նրա հատը:

ՎԷՐՆԻ (վերև գնալով ժայռի վրայ):

Ահա նա գնում է: Աստուած քեզ պաշտպան,

Դու քանջ նաւապնաց: Տես, ինչպէս վերև

Ներքև է թռչում նորա նաւակը:

ԿՈՒՈՆԻ (ափից)

Ալիքը ծածկեց — էլ չեմ տեսնում նրան:

Բայց կայ, ահա տես, էլի երևաց:

Ի՞նչ քաջ կուվում է ալիքների հետ:

ՍԷՊՊԻ

Ահա լանդֆօխտի ձիաւորները

Գալիս են շտապով:

ԿՈՒՈՆԻ

Իրաւ նորա են:

Ա՛յ քեզ օգնութիւն կարիք ժամանակ:

Մ Ի Խ Ո Ւ Մ Բ Ձ Ի Ա Խ Ո Ր Ն Ե Ր Լ Ա Ն Դ Է Ն Բ Է Ր Գ Է Ր Ի :

ԱՌԱՋԻՆ ՁԻԱԽՈՐ

Մարդասպանը տու էք, դուք թաքցրել էք նրան:

ԵՐԿՐՈՐԴ ՁԻԱԽՈՐ

Նա այստեղ եկաւ, ի դուր մի թաքցնէք:

ԿՈՒՈՆԻ Լ ԲՈՒՈՐԻ

Դուք ո՛ւմն էք ուզում:

ԱՌԱՋԻՆ ՁԻԱԻՈՐ. (տեսնում է նաակը):

Դժոխք, այն ի՛նչ է:

ՎԷՐՆԻ (ժայռից):

Նորան էք ուզում, որ նաակի մէջ

գնում է այնտեղ:—Շտապեցէք, շուտով

կրճատէք նորան:

ԵՐԿՐՈՐԴ ՁԻԱԻՈՐ

Մահ ու անէծք, նա

Պրծաւ մեր ձեռից:

ԱՌԱՋԻՆ ՁԻԱԻՈՐ. (հովուին ու ձկնորսին):

Դուք էք նրան օգնել:

Եւ ձեզ կրճատի դորա պատիժը—

Հօտը ցրուեցէք, տներն այրեցէք,

Ոտի տակ առէք:

(Շուտ դուրս են գնում):

ՍԷՊՊԻ. (վազում է նոցա ետևից):

Ո՛հ, իմ խեղճ դառներ:

ԿՈՒՈՆԻ. (հետևում է)

Վ՛այ ինձ, ապրանքս:

ՎԷՐՆԻ

Ո՛հ, անողորմներ:

ԲՈՒՈՐԻ (Ձեռները կտարտելով):

Էլ երբ կուղարկես, ո՛հ Հայր, Սրարիչ,

Մեր ճնշած երկրին պաշտպան ու փրկիչ:

(Հետևում է նոցա):

Երկրորդ տեսարան:

Շտէ յնէնում, Շվից գաւառում,
մի կակղի ծառ Շտաուֆախէրի տան
առաջ, ճանապարհի վրայ, կամուրջի
մօտ :

Վ Է Ր Ն Է Ր Շ Տ Ա Ո Ւ Ֆ Ա Խ Է Ր, Պ Ֆ Է Յ Ֆ Է Ր Ֆ Օ Ն Լ Ո Ւ
Յ Է Ր Ն (դալիս են խօսելով):

Պ Ֆ Է Յ Ֆ Է Ր

Ինչպէս ասացի, պարոն Շտաուֆախէր,
Եթէ հնար կայ, մի երգուէք երբէք
Դուք Աւտորիային, և հաւատարիմ
Ու պինդ մնացէք, ինչպէս մինչև այժմ,
Կայսերութեանը: Եւ Աստուած ինքը
Կըպաշտպանէ ձեզ, ձեր իրաւունքը:
(Պինդ սխմում է նորա ձեռք և ուզում է դնալ):

Շ Տ Ա Ո Ւ Ֆ Ա Խ Է Ր

Սպասիր կինս դայ—Դու այստեղ Շվիցում
Իմ հիւրն ես և ես քոնը Լուցէրնում:

Պ Ֆ Է Յ Ֆ Է Ր

Շնորհակալութիւն: Ես այսօր պիտի
Գէրդաու համնեմ—Բայց որքան կուզէ
Գժուար տեղն ընկնէք կուսակալների

Մեծամտութիւնից, դուք համբերութեամբ
Ամեն բան տարէք: Միշտ այսպէս չի մնայ,
Եւ կարելի է շուտով մի ուրիշ

Կայսր ընտրվի: Իսկ թէ Աւստրիային

Անձնատուր վինիք, միշտ ստրուկ կը մնաք:

Նա դնում է: Շտաութասէրը տրտում նստում է նստարանի
վրայ կակոյի ծառի տակը: Այդ դրութեան մէջ տեսնում է
նորան ԳԵՐՏԲՈՒԴԸ, նորա կինը, որ նստում է նորա կողքին և
մի քանի ժամանակ անխօս նայում է նորա վրայ:

ԳԵՐՏԲՈՒԴ

Ինչի տխուր ես, բարեկամ, ես քեզ

էլ չեմ ճանաչում: Արդէն շատ օրեր

Նկատում եմ ես ճակատիդ վերայ

Տրտմութեան ամպը, և մի ծանր վիշտ

ճնշում է սիրտդ: Ասա, բացուիր ինձ,

Ես քո ամուսինն եմ հաւատարիմ,

Եւ քո վշտից տուր ինձ իմ բաժինը:

(Շտաութասէրը տալիս է նորան ձեռք և լռում է):

Ասա ինձ, ինչն է ճնշում քո սիրտը:

Քո աշխատանքը առատ պտուղ բերեց,

Նրկնքից սլակաս չէ օրհնութիւնը,

Ամբարներդ լի, եղ ու կովերդ

Եւ կուշտ ձիաներդ սարերից անմնաս

Յետ դառան ձմեռել ախտաներիդ մէջ:

— Տունդ հարուստ է ինչպէս մի ամրոց,

Շինած լաւ փայտից, դեղեցիկ ձևով.

Չորս կողմը փայլում են լուսամուտներ,

Նրան դարդարում են զանազան նկարներ,

Իմաստուն խօսքեր, որոնց հիացած

Կարգում են անցնող ճանապարհորդներ :

ՇՏԱՌԻՖԱԽԻՐ

Տունս դեղեցիկ, լաւ ձևով շինած,

Բայց սխ, անհաստատ է նորա հիմքը :

ԳԻՐՏՐՈՒԴ

Վէրնէր, մեկնիր ինձ ասածիդ միտքը :

ՇՏԱՌԻՖԱԽԻՐ

Ես քանի մի օր սորանից առաջ

Այս ծառի տակը նստած, ինչպէս այժմ,

Նայում էի ուրախ շինած տանս վրայ,

Որ կուսակալը ձիաւորներով

Եկաւ Կիւսնախափից և իմ տան առաջ

Չարմայած կանգնեց: Ես շուտ վեր թռայ

Եւ խոնարհարար, ինչպէս որ հարկն է,

Առաջ գնացի, որովհետեւ նա

Բռնում է այստեղ կայսերի տեղը,

« Ո՛ւմ տունն է », հարցրեց չարութեամբ, թէ պէ՞տ

Գիտէր, որ իմն է: Բայց ես շուտ այսպէս

Պատասխանեցի: « Այս տունը, տէր իմ,

Կայսրինն ու քոնն է, և ես նորա մէջ

Կենում եմ վարձով: » — « Ես այս երկիրը

Կայսրի փոխանակ կառավարում եմ,

Եւ չեմ կամենում, որ այսպէս տներ

Շինէ դիւղացին և ինչպէս պարոն

Ապրի նոցա մէջ: Ես արդեւում եմ: »

Ասաց և խելոյն հեռացաւ գնաց,

Իսկ ես մնացի և սասափկ տրտմած

Մտածում էի թէ չարն ինչ ասաց :

ԳԻՐՏՐՈՒԴ

Իմ տէր ամուսին, թոյլ տուր կնոջդ ասել
Քեզ մի անկեղծ խօսք: Բաղմափորձ, ազնիւ
Իրէրդի դուտը կանչում եմ ես ինձ,
Եւ պարծենում եմ նորա անունով:
Նրբ գիշերները ես ու քոյրերս
Նստած միասին բուրդ էինք գործում,
Եւ հօրս տանը ժողովում էին
Իշխաններն ազգի և կարգում էին
Հին կայսրներից տուած թղթերը,
Այնպէս նորա միշտ մտածում էին
Մեր հայրենիքի օգուտն ու բարին:
Ես ուշադրութեամբ ականջ էի դնում
Նոցա խմաստուն խօսքերին և իմ
Սրտի մէջ խորը տպաւորեցի
Նոցա խօսքերն ու ցանկութիւնները:
Այժմ լսիր ինձ, թէ ինչ եմ ասում:
Ես վաղուց գիտեմ, ինչն է քեզ ճշտում:
— Քեզ թշնամի է մեր կուսակալը
Եւ ցանկանում է մի մնաս տալ քեզ,
Պատճառ տեսնում է, որ դու արգելք ես,
Որ Շվեյցարացին չէ հպատակում
Աւարիական տան, այլ հաւատարիմ
է կայսերութեան, ինչպէս արեւ են
Նորա պապերը: Այսպէս չէ, Աէրնէր:

ՇՏԱՌԻՖԱԽԻՐ

Այդպէս է, Գէսլէրն իմ թշնամին է:

ԳԻՐՏՐՈՒԴ

Նա նախանձում է, որ դու բաղդաւոր

Ազատ ապրում ես քո հայրենական
 ժառանգութեան մէջ. իսկ ինքը չունի:
 Կայսերութիւնը շնորհեց քեզ տունը,
 Եւ դու կարող ես ցոյց տալ ամենին
 Ինչպէս մի իշխան իւր կալուածները:
 Դու քո հրամայող ճանաչում ես նրան,
 Որ քրիստոնէական աշխարհի մեծն է—
 Իսկ նա է նորա միայն կրտսեր որդին,
 Եւ ոչինչ կարող չէ իւրն անուանել,
 Բայ տապետական իւր վերարկուից
 Եւ այդ սրատճառով թիւնալի աչքով
 Նայում է նա միշտ ուրիշի բաղդին:
 Վաղուց վճռել է նա քո կորուստը—
 Դու դեռ անվեաս ես:—Միթէ կը սպասես,
 Որ նա հասնի իւր չար ցանկութեանը:
 Խելօքը առաջ կը ձգէ իւր բանը:

ՇՏԱՌԻՑԱԽԻՐ

Ի՞նչ պէտք է անեմ:

ԳԻՐՏՐՈՒԴ (ժամենալով):

Ա՛յ իմ խորհուրդը:

Դու գիտես, ինչպէս Շվիցի մէջ բոլոր
 Պատուաւոր մարդիկ դանդաւտ են անում
 Մեր կուսակալի ազահութեան և
 Չարութեան վերայ: Մի կասկածիր, որ
 Ունտէրվալդէնում, նոյնպէս էլ Ռւրի
 Տանեղ ձանձրացած են ծանր լուծը—
 Պատճառ, ինչ այստեղ Գէսլէրն է անում,
 Նոյնը անում է լճի միւս կողմը

1885

Լանդէնրէրդէրը:—Ամեն մի նաւակ,
 Այնտեղից եկած, բերում է իւր հետ
 Կուսակալների շար ու անարդար
 Գործերի լուրը: Աստ չէ ուրեմն,
 Եթէ մի քանի համախոն մարդիկ
 Ծածուկ միասին խորհուրդ անէիք,
 Թէ ինչ կերպ հնար էր ազատուել լծից:
 Ես հաւատումեմ, որ և ինքն Աստուած
 Օգնական կլինէր ձեր արդար գործում:—
 Միթէ դու չունիս Ուրի բարեկամ,
 Որին քո միտքը անկեղծ յայտնէիր:

ՇՏԱՌԻՖԱԽԵՐ

Լաւ մարդիկ շատ եմ ճանաչում այնտեղ
 Եւ երեւելի հարուստ իշխաններ,
 Նորա ամենքն ինձ հաւատարիմ են:

(վեր է կենում տեղից):

Կին, ինչ վտանգալի մտքերի մրրիկ
 Ձգում ես դու իմ խաղաղ կուրծքի մէջ:
 Իմ խորհուրդները ծածկած սրտիս մէջ
 Լուսաւորում ես ցերեկի լուսով,
 Եւ, ինչ որ ինքս ինձ մտածել անգամ
 Արդելում էի, դու ինձ ասում ես
 Համարձակ լեղումով:—Բայց արդեօք դու լաւ
 Կշռել ես քո ինձ տուած խորհուրդը:
 Վայրենի շփոթ, ղեկքերի ձայներ
 Կանչում ես դու այս խաղաղ հովիտը—
 Ի՞նչպէս յանդգնենք, մենք թող հովիւներս,
 Աշխարհի տիրոջ դէմ կռիւ դուրս գնալ:

2621

Նորա միայն մի պատճառ են պատում,
 Որ բաց թողնեն մեր խեղճ երկրի վերայ
 Իրանց զօրքերի կատղած խումբերը,
 Ինչպէս յաղթողներ ամեն բան անեն
 Եւ, որպէս պատիժ անհնազանդութեան,
 Ոչնչացնեն հին իրաւորնքերը:

ԳԷՐՏՐՈՒԳ

Դուք էլ տղամարդ էք, կացին բանեցնել
 Կաւ էք իմանում, և Աստուած պաշտպան
 է միշտ քաջերին:

ՇՏԱՌԻՅԱԽԷՐ

Կին, սարսափելի

Եւ զարհուրելի է պատերազմը.

Նորան զոհ են դնում և հօան և հովիտ

ԳԷՐՏՐՈՒԳ

Երկրի վճռին պէտք է խոնարհիլ:

Անիրաւութեան պէտք չէ համբերել:

ՇՏԱՌԻՅԱԽԷՐ

Դու խնդում ես մեր նոր շինած տնով:

Պատերազմը նրան մոխիր կը դարձնէ,

ԳԷՐՏՐՈՒԳ

Ես ինքս կրակ կը տամ իմ սրտին,

Թէ զբաղուած լինի անցաւոր գոյքով:

ՇՏԱՌԻՅԱԽԷՐ

Մարդասիրութիւն մի յուսար. կռիւը

Զի խնայի անդամ ծծի երեխին:

ԳԷՐՏՐՈՒԳ

Ինքն Աստուած պաշտպան է անմեղութեան:

— Առաջդ նայիր, Վէրնէր, և ոչ յեա:



ՇՏԱՌԻՖԱԽԻՐ

Մենք քաջ կառուելով կարող ենք մեռնել,
Բայց ձեզ ինչ վիճակ արդեօք սպասում է:

ԳԵՐՏԵՐՈՒԴ

Վերջին հնարը տկարն էլ ունի.

Մի թռոյցք կամուրջից ինձ էլ կաղատէ:

ՇՏԱՌԻՖԱԽԻՐ (ընկնելով նորա զիրկը)

Ով այսպէս մի քիրտ սխմէ իւր կուրծքին,

Նա իւր տան համար պատրաստ է կառուել,

Եւ չի վախենայ ոչինչ զօրքերից:—

Ես իսկոյն կերթամ Ուրի, ուր ունիմ

Մի լաւ բարեկամ, պարոն Ասլտէր Ֆիւրատ,

Նա էլ մտածում է նոյնպէս, ինչպէս ես:

Այնտեղ կըզանեմ և ազնիւ պարոն

Տօն Ատտիլնդհառզին — թէպէտ մեծ ցեղից,

Բայց ժողովուրդի բարեկամն է նա

Եւ պատվում նրա հին սովորութիւնը:

Ես խորհուրդ կանեմ նոցա հետ, թէ մենք

Ինչպէս պաշտպանենք մեզ մեր թշնամուց:—

Մնան քարով, իմ կին — մինչև իմ դալը

Լաւ կառավարիր դու տուն ու տեղը —

Թէ ուխտաւորին և թէ բարեպաշտ

Արեղային, որ տուրք է ժողովում,

Ոչ ինչ մի խնայիր և լաւ պատիւ տուր,

Տունս կանգնած է ճանապարհի վրայ,

Դռները միշտ բաց հիւրերի համար:

Այն ինչ նորա շատ հեռանում են զէպի բեմի ետևի կողմը,
Գալիս է Վ. Ի. Լ. Է. Լ. Մ. Տ. Է. Լ. Ը. Բառակալարտի հետ միասին
ՏԷԼԼ (Բառակալարտին).

Այժմ էլ կարօտ չես դու իմ օգնութեան:

Մտիլր այն տունը, այնտեղ կենում է
 Պարոն Շտաուֆախեր, հալածեալների
 Հայր և օգնական: — Բայց տես, նա ինքը
 Ահա այստեղ է: — Չնանք միասին,
 (Գնում են նորա մօտ: Տեսարանը փոխում է).

Երրորդ տեսարան:

Հրապարակ Ալտորֆում:

Բեռնի ետեի կողմը մի բարձրութեան վերայ շինում են
 մի բերդ, որ արդէն վերջանալու վրայ է: Բերդի ետեի կող-
 մը արդէն աւարտած է և հիստա շինումեն առաջի կողմը.
 վերելուկները դեռ ևս կանգնած են, որոնց վերայ գործա-
 սրները վերե ու ներքե են գնում: Տանիքի վերայ կանգնած է
 յարկաշէնը: — Սմենքը շարժողութեան մէջ են և աշխատում են:

Վ. Ե. Բ. Ա. Կ. Ա. Յ. Ո. Ի. Ն, Վ. Ա. Բ. Պ. Ե. Տ. Ծ. Տ. Է. Յ. Ն. Մ. Է. Յ, Օ. Գ. Ն. Ա.
 Կ. Ա. Ն. Ն. Ե. Բ.

Վ. Ե. Բ. Ա. Կ. Ա. Յ. Ո. Ի. Ն

(Փայտը ձեռին առաջ է քշում մշակներին):

Հերիք ծուլանաք, շուտ քարեր բերէք,
 Այլ պատրաստեցէք, որ կուտակալը
 Դայ տեանէ գործը առաջ գնացած: —
 Տես, որդուքի պէս դանդաղ սողում են:

(Երկու մշակներին, որոնք քար են տանում):

Ինչպէս էք դարսել: Էլի աւելցրէք:

Ա՛յ աւաղակներ, գործից փախչում էք:

Ա. Ռ. Ա. Զ. Ի. Ն. Օ. Գ. Ն. Ա. Կ. Ա. Ն.

Գժուար բան չէ այս, որ մենք ինքներս

Քար պիտի կրենք մեր բանտի համար:

ՎԵՐԱԿԱՅՈՒՆ

Ի՞նչ էք փնթփնթում, այ անպիտաններ .

Տաւար կթելուց, բանի շնորհք չունիք,

Կամ սարերի վրայ անգործ թափառել:

ՄԻ ԾԵՐ ԾԱՐԳ (համարտանայով):

Ո՛հ, էլ չեմ կարող:

ՎԵՐԱԿԱՅՈՒՆ (շարժում է նորան):

Շուտ, առաջ գնա՛, ձեր:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆԱԿԱՆ

Միթէ սիրտ չունիս, որ այդ խեղճ ձերին,

Որ հաղիւ իրան անդից շարժումէ,

Ստիպում ես քար կրել:

ՎԱՐՊԵՏ ՇՏԷՅՆՄԷՅ ԵՒ ՕԳՆԱԿԱՆՆԵՐ

Ա՛նաատուած:

ՎԵՐԱԿԱՅՈՒՆ

Եղբայր,

Չիր ճարը տեսէք: Ես կատարում եմ,

Ինչ որ իմ պարտքն է:

ԵՐԿՐՈՐԴ ՕԳՆԱԿԱՆ

Պարոն գլխաւոր,

Ի՞նչ անուն պիտի ստանայ այս բեղղը,

Որ մենք շինում ենք:

ՎԵՐԱԿԱՅՈՒՆ

Ուրի նուաճող

Անուն կրատանայ, և այս լծի տակ

Կթելքէք ձեր վիզը:

ՕԳՆԱԿԱՆՆԵՐ

Ո՛ւրի նուաճող:

ՎԵՐԱԿԱՅՈՒՆ

Ի՞նչ էք ծիծաղում:

ԵՐԿՐՈՐԴ ՕԳՆԱԿԱՆ

Այս տունը պէտք է

Նուաճէ Ուրիշն:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆԱԿԱՆ

Տեսնենք, թէ քանի

Սորա նման բներ հարկաւոր կլինի

Միմեանց վրայ դարսել, որ հաւասարուի

Ուրի սարերի ամենից փոքրին:

(Վերակացուն հեռանում է դէպի ետևի կողմը):

Վ ԱՐՊԵՏ ՇՏԻՅՆՄԷՅ

Մուրճս կընեստեմ ծովի անդունդը,

Որ այս անիծած շինութեան վերայ

Բանեցնում էի:

Տ Է Լ Լ Ը Ե Ի Շ Տ Ա Ո Ֆ Ա Խ Է Բ Ը դալիս են

ՇՏԱՈՒՖԱԽԷՐ

Այս, երանի թէ

Աշխարհ չէի եկել և այս չէի տեսել:

ՏԷԼԼ

Լաւ չէ այստեղ մնալ. եկ առաջ դնանք:

ՇՏԱՈՒՖԱԽԷՐ

Միթէ կանգնած եմ Ուրի դաւառում,

Ուր միշտ բնակում էր ազատութիւնը:

Վ ԱՐՊԵՏ ՇՏԻՅՆՄԷՅ

Ո՛հ պարոն, պէտք է տեսնես բանտերը

Որ բուրգերի մէջ շինած են զածում.

Այնտեղ նստողը էլ լոյս չի տեսնի:

ՇՏԱՌԻՖԱԽԵՐ

Ո՛հ , Աստուած :

ՇՏԻՅՆՄԷՑ

Տեսէ՞ք այս կամարները,
Այս հաստ սիւները, նոքա յաւիտեան
Հաստատ կըմնան:

ՏԷԼԼ

Չեռով շինածը

Չեռը կը քանդէ:

(ցոյց տալով լեռները:)

Ա՛յ ազատութեան

Տները շինել է ինքը Աստուած:

Ղարմանալի ձայն, դալիս են մի քանի մարդ և բերում են
մի երկար փայտի վերայ ծածկած դղակ. նոցա ետեկց դալիս
է մի Մ Ո Ւ Ն Ե Տ Ի Կ, որին հետևում են կանայք և երեխաներ:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆԱԿԱՆ

Այս ինչ թմբուկ է: Վահ, տեսէ՞ք, տեսէ՞ք:

ՎԱՐՊԵՏ ՇՏԻՅՆՄԷՑ

Չարմանալի է. այս ինչ դղակ է:

ՄՈՒՆԵՏԻԿ

Կայսրի անուշտով, ականջ դրեցէ՞ք:

ՕԳՆԱԿԱՆՆԵՐ

Սուս, հանդարտ կացէ՞ք:

ՄՈՒՆԵՏԻԿ

Մարդիկ, տեսնում է՞ք

Դուք այս դղակը. բարձր փայտի վրայ

կըցցենք այստեղ: Այժմ լսեցէ՞ք

Մեր կուսակալի հրամանն ու կամքը,

Գղակին պէտք է տաք հաւասար պատիւ,

Ինչպէս որ նոյն ինքն կուսակալին,

Եւ նորա առաջ չոքէք գլխարաց:
 Փորձել ուզում է այդպէսով արքան,
 Թէ ով կատարեալ հնազանդ է նորան:
 Նա իւր ստացուածքից իսկոյն կը զրկուի,
 Ով այս հրամանին ընդդէմ կըլինի:

Ճողովուրդը ծիծաղում է, թմրուկը ծեծում են, նոքա անց են
 կենում:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆԱԿԱՆ

Ինչ նոր չըլսած բան է հնարել
 Մեր կուսակալը: Մենք պիտի պատիւ
 Տանք այս դղակին: Ասացէք, ով էք
 Լսել այսպէս բան:

ՎԱՐՊԵՏ ՇՏԷՅՆՄԷՅ

Մենք պիտի չոքենք
 Գղակի առաջ: Նա ծաղր է անում
 Մեզ, բարեկամներ:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆԱԿԱՆ

Հա, եթէ լինէր
 Կայսերական թագ, այդ ուրիշ բան էր.
 Թէ չէ գղակը Աւստրիական տան,
 Որ ես տեսել եմ աթոռի գլխին,
 Ուր բաժանումն ն արքունի հողեր:

ՎԱՐՊԵՏ ՇՏԷՅՆՄԷՅ

Աւստրիայի գղակը, լաւ մտածեցէք:
 Այս մի թակարդ է, որով ուզում են
 Մեզ Աւստրիայի սարուկներ շինեն:

ՕԳՆԱԿԱՆՆԵՐ

Ոչ մի աղնիւ մարդ կարող չէ տանել
 Այս նախատինքին:

ՎԱՐՊԵՏ ՇՏԷՅՆԱՄԷՑ

ԵԿԷՔ միասին

Ուրիշների հետ մենք խորհուրդ անենք:

(Նորա գնում են բեմի ետևի կողմը):

ՏԵՂԼ (Շատաֆախերին):

Քեզ այժմ յայտնի են հանդամանքները:

Մնաս բարով, Վէրնէր:

ՇՏԱՌՖԱԽԷՐ

Ո՞ւր ես գնում: Ո՞հ,

կանց, ի՞նչ ես շտապում:

ՏԵՂԼ

Տանը սպասում են:

Մնաս բարով, Վէրնէր:

ՇՏԱՌՖԱԽԷՐ

Սիրտս վա՛ն է, ՏԷՍ.

Այնքան բան ունիմ քեզ հետ խօսելու:

ՏԵՂԼ

Խօսքերով սիրտը չի թեթևանայ:

ՇՏԱՌՖԱԽԷՐ

Առաջ կըխօսենք, յետոյ կըզործենք:

ՏԵՂԼ

Այժմ հարկաւոր է համբերել ու լռել:

ՇՏԱՌՖԱԽԷՐ

Ի՞նչպէս համբերենք մենք անտանելին:

ՏԵՂԼ

Խիստ իշխանները երկար չեն իշխում:

— Արբ վեր է կենում սաստիկ մրրիկը,

կրակը հանդոցնում են, և նաւորդները

Շտապում են համնել մի նաւահանդիստ,

Կը անց է կենում մրրիկը անախա:

Ամեն մարդ խաղաղ ապրի իւր տանը

Եւ ոչ ոք նորան կարող չէ մեծանել:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Միմէ կարծում ես:

ՏԵԼԼ

Օձը չի կծի,

թէ չըղայրայնեն: — Նորա մերջապէս

Իրանք կրճանճրանան, որ մենք հանդարտ ենք:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Շատ բան կանխնք, թէ միանայինք

ՏԵԼԼ

Նաւարեկութեան ժամանակ ամեն

Մարդ հեշտ կարող է ինքն իրան փրկել:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Այդպէս սառնասիրտ հեռանումն զու

Ազգային դործից:

ՏԵԼԼ

Ամեն մարդ միայն

Ինքն իւր մերայ կարող է յուսալ:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Եւ տկարները միարանուելով

Կառնումնն զօրեղ:

ՏԵԼԼ

Զօրեղը մենակ

Զօրեղացոյն է:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Աւրեմն ոչինչ յոյս

Զուսնանայ քեզնից մեր հայրենիքը:

Երբ հարկաւոր դայ պաշտպանել նորան:

ՏԵՆԼ

ՏԵՆԸ փրկումէ դառին անդունդից,

Ինչպէս կհեռանայ բարեկամներից.

Բայց դուք առանց ինձ խորհուրդ արեցէք.

Երկար մտածել չեմ իմանում ես,

Թէ հարկաւոր դամ, իսկոյն կանչեցէք.

ՏԵՆԸ միշտ պատրաստ է հետևել ձեզ:

Նոքա բաժանվում են միմեանցից և հեռանում են դանա-
զան կողմեր: Յանկարծ շփոթ է ընկնում վերելուկների մօտ:

ՎԱՐՊԵՏ ՇՏԻՅՆՄԻՑ (վաղումէ այն կողմը):

Ինչ է պատահել:

ԱՌԱՋԻՆ ՕԳՆԱԿԱՆ (առաջ դարով ձայն է տալիս):

Խեղճ յարկաչէնը

Վեր ընկաւ յարկից:

Բ Է Ր Թ Ա Ն տուն է ընկնում Ո Ի Ղ, Ե Կ Ի Ց Ն Ե Ր Ո Վ:

ԲԷՐԹԱ

Արդեօք ջարդուեցաւ:

Շուտ, շուտ, փրկեցէք, օգնութիւն հասէք—

Եթէ հնար է, ահա ձեզ ոսկի:—

(Գէն է ձգում իւր մանեակը):

ՎԱՐՊԵՏ ՇՏԻՅՆՄԻՑ

Բո ոսկով—հա, դու կարող ես ոսկով

Ամեն բան անել, և բաժանելով

Հօրը իւր որդուց, մարդուն կնոջից,

Սուղ ու կակիծով աշխարհ լցնելով,

Կարծումես ոսկով այդ բոլորն ուղղել:

Գընա, առանց քեզ մենք ուրախ էինք,

Բայց երբ դու եկար, ամենիս տիրեց

Յուսահատութիւն:

ԲԻՐԹԱ (վերակացուն, որ յետէ գալիս):

Կենդանի է դեռ:

(վերակացուն նշանով ցոյց է տալիս դորա հակառակը):

Ապարանդդ ամբողջ, անէծքով շինած,

Եւ անէծքը միայն կըրնակուի քո մէջ:

(Գնումէ):

Զորրորդ տեսարան:

Վալտէր Ֆիւրատի բնակութիւնը:

Վ Ա Լ Տ Ե Ր Ֆ Ի Ի Ր Ս Տ Է Ա Ռ Ն Օ Լ Դ Ֆ Օ Ն

Մ Է Լ Ի Թ Ա Լ միասին մտնումեն զանազան կողմերից:

ՄԷԼԻԹԱԼ

Պարսն Վալտէր Ֆիւրատ:—

ՎԱԼՏԵՐ ՖԻԻՐՍ

Յանկարծ մարդ չըղայ:

Կանց, ինչտեղ որ կաս, լրտեսներ շատ կան:

ՄԷԼԻԹԱԼ

Ինչ լուր ես բերում Ունտերվալդէնից,

Ինչ լուր իմ հօրից: Ես էլ չեմ կարող

Ինչպէս մի գերի անդործ մնալ այստեղ:

Իմ յանդանքն ինչ է, որ թաք եմ կենում

Մարդասպանի պէս: Ես ձեռիս փայտով

Մատը կտարեցի այն վիրք աղայի,

Որ իմ դեղեցիկ զոյգ եղանները

Ուշուձէր տանել Տոխատի հրամանով:

ՎԱՆՏԷՐ ՖԻԻՐՍ

Շատ վատ ես արել: Ով կուզէ լինելք,
Նա ուղարկուած էր քո մեծաւորից.
Եւ այդ պատիժը, որքան ծանր լինելք,
Պիտի տանելք դու համբերութեամբ:

ՄԷԼԽԹԱԼ

Ինչպէս տանելի այն լիրբ խօսքերը.
«Թէ դիւղացին հաց ուտել ուղումէ,
Կարող է ինքն էլ քաշել արօրը:»
Կարծես դանակով սուեց սրտիս մէջ.
Երբ նա յետ արեց լծից եղներս:
Նորա սկսեցին սաստիկ բառանջել,
Կարծես թէ իրաւ հասկանումէին,
Որ նա անիրաւ էր վարվում հետս.
Եւ դէմ արեցին սուր եղջիւրները:
Ես էլ ինձ դապել չըկարողացայ,
Եւ վայտով տուի այն անպիտանին:

ՎԱՆՏԷՐ ՖԻԻՐՍ

Ո՛հ մենք մեր սիրտը հաղիւ ենք դապում,
Պատանիներից էլ ինչ պահանջենք:

ՄԷԼԽԹԱԼ

Ես դառումնմ միայն խնդճ հօրս համար —
Նա կարօտումէ հողացողութեան,
Եւ որդին հեռու է այժմ նորանից:
Լանդֆօխտը նորան սաստիկ ատումէ,
Որովհետեւ նա միշտ պաշտպանել է
Իրաւունքը և աղատութիւնը:
Հիմա ծերունուն նա կըհալած է,

Եւ ոչ որ չըկայ, որ օգնէ նորան:

— Չ'է, ինչ որ կուղէ, թող ինձ պատահի,
Բայց ես անպատճառ կերթամ նորա մօտ:

ՎԱՆՏԷՐ ՖԻԻՐՍ

Չէ, չէ, իմ որդի, սպասիր, համբերիր,

Մինչև այնտեղից մի լուր կըստանանք:

— Դուռը ծեծումեն — դնա՛ շուտ թաքկաց:

Չըլինի թէ մարդ է ուղարկել Ֆօխար:

Լանդէնբերգերի ձեռից այստեղ էլ

Սպահով չես դու, որովհետև միշտ

Միմեանց օգնումեն բռնակալները:

ՄԵԼԹԱԼ

Լաւ օրինակ են տալիս նորա մեղ:

ՎԱՆՏԷՐ ՖԻԻՐՍ

Գընա՛, կըկանչեմ, թէ վտանգ չըկայ:

(Մէլթալը գնում է)

Խեղճ ողորմել ին: Ես վախենումեմ

Հաղորդել նորան իմ կասկածները: —

Դուռն ո՞վ է ծեծում: Հապիւ թէ դուռը

Մի ձայն է հանում, իսկոյն սպասումեմ

Գաւաճանութեան: Մարդ և իւր տան մէջ

էլ սպահով չէ: Աարծումեմ շուտով

Հարկաւոր կըլինի կողակերով կողակել

Բոլոր դռները:

Բայ է անում դուռը և զարմացած յետ է քաշվում. տես-

ներով Վ Է Ր Ն Է Ր Ե Տ Ա Ո Ի Ֆ Ա Խ Է Ր Ի Ն

Այս ինչ էմ տեսնում,

Դու, պարոն Վէրներ: Ո՛հ, Աստուած վկայ,

Թանկագին հիւր ես: — Քեզանից լաւ մարդ
 չկա. չէ անցկացել իմ տան շեմքի վրայ:
 Համեցէք, մտիր, հողով ուրախ եմ:
 Ասան ինձ, ինչն է բերել քեզ այստեղ,
 Կամ ինչ ես պատում:

ՇՏԱՌԻՓԱԽԷՐ

Հին ժամանակը,

Հին Շվեյցարիան:

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ

Նորա քեզ հետ են—

Ինչպէս ուրախ եմ, ինչպէս բաղդաւոր,
 Որ քեզ տեսնում եմ: — Նստիր, իմ Աւրներ—
 Արդեօք ինչպէս է քո խելօք կինը,
 Իմաստուն, աղնիւ Իբերդի դուստրը:
 Ով որ դնում է Մէյնրադի ձորով
 Գէտը Իտալիա, միշտ դուլում է քո
 Հիւրասէր տունը: — Բայց ասան տեսնեմ,
 Գու այժմ դալիս ես ուղիղ Ֆլիւէլնից.
 Արդեօք ոչ ինչ բան չընկատեցիր
 Ճանապարհի վրայ, մինչև որ եկար
 Հասար իմ տունը:

ՇՏԱՌԻՓԱԽԷՐ (Նստում է):

Ինչպէս չէ, տեսայ

Մի զարմանալի ու նոր շինութիւն,
 Որ իմ սրախի մէջ ձգեց արտամութիւն:

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ

Ով իմ բարեկամ, ի հարկ է իսկոյն
 Իմացար, ինչ է:

ՇՏԱՈՒՖԱԽԻՐ

Այդպէս շինութիւն

Երբէք չէ եղել Ուրի դաւառում—
Ոչ մի մարդ տեսել չէր այստեղ բանտեր,
Բանտերը էին գերեզմանները:

ՎԱԼՏԻՐ ՖԻԻՐՍ

Դու չես սխալվում մեր աղատութեան
Գերեզմանն է դա:

ՇՏԱՈՒՖԱԽԻՐ

Պարոն Վալտէր Ֆիւրստ,

Չեմ թաքցնում քեզանից դալուս պատճառը,
Անհիմն ու դատարկ հետաքրքրութիւն
Չբերեց ինձ այստեղ: Սիրտս ճնշուած է
Ծանր հողակրով — Տանը թողեցի
Ես հալածանքներ և հալածանքներ
Գտնումսմ այստեղ: Ո՛հ, մեր դրութիւնը
Անտանելի է: Մեր նեղութեանը
Կարծես չկայ վերջ: Մենք միշտ այն դժխից
Աղատ ենք եղել և սովոր ենք, որ
Լաւ վարվին մեզ հետ: Այսպէս դառն օրեր
Ոչ ոք չէ տեսել, քանի որ մարդիկ
Ապրում են այստեղ:

ՎԱԼՏԻՐ ՖԻԻՐՍ

Անօրինակ է

Նոցա արածը: Նոյն ինքն պարոն
Ատտինդհաուդէնը, որ դեռ միտն ունի
Չին ժամանակը, նա էլ ասումէ,
Որ էլ համբերել անկարելի է:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Եւ նմանապէս Ունտերվալդենում
 Շատ են պատահում անօրէն բաներ,
 Որ վերջանում են արիւնհեղութեամբ:
 Կայարի կուսակալ Վօլֆէնշխէնը,
 Որ բնակւում էր Բարէրգ ամրոցում,
 Յանկայաւ փորձել արդելած սրտուղը,
 Եւ Բաումգարտէնի կնոջը ուղեց
 Բռնի անպատուել, բայց մարդը սպանեց
 Նորան կացինով:

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ:

Սասուած, արդար է
 Քո դատաստանը: — Բաումգարտէնը
 Ս, յն համեստ մարդը, բայց ասա արդեօք
 Ազատուած է նա և լաւ տեղ պահուած:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Քո փեսան փախցրեց նորան նաւակով,
 Եւ այժմ պահում ևս նորան իմ տանը: —
 Բայց ինձ աւելի սարսափելի բան
 Պատմեց այն մարդը, որ պատահել է
 Սարնէնում, այնպէս, որ ամեն աղնիւ
 Տղամարդու սիրտը կըլցուի ալնով:

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ

Ասա, այդ ինչ է:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Կէրնից ոչ հեռու,
 Մի լի թաղի գիւղի մէջ մի ճշմարտախօս
 Մարդ է բնակում, որի անունն է

Հէյնը ի իս ֆօն Հալդէն, և որի խօսքը
Յարգում են բոլոր դիւղացիները:

ՎԱՆՏԷՐ ՖԻԻՐՍ

Ո՞վ չէ ճանաչում. ի՞նչ է պատահել:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Լանդէներդէրը մի փոքր ու չնչին

Ախալի պատճառով պատժեց նորա որդուն,

Խլելով նորանից նորա զոյգ եղը.

Բայց աղան ծառային ծեծեց ու փախաւ:

ՎԱՆՏԷՐ ՖԻԻՐՍ (ի ակնկալութեամբ:)

Բայց հայրը—ասան, նրան ի՞նչ պատահեց:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Լանդէներդէրը, կանչելով հօրը,

Պահանջեց, որ նա իսկոյն իւր որդուն

Բերէ նորա մօտ, և, որովհետև

Ծերը երգումով հաւատացնում էր,

Որ նա չըզիտէ ինչտեղ է որդին,

Փօխոր բարկացած կանչեց դահլիճին:

ՎԱՆՏԷՐ ՖԻԻՐՍ

(Վեր է թռչում տեղից և ողորմէ ասանել նորան միւս կողմը:)

Ո՛հ, սուս, հերիք է:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ (աւելի բարձր ձայնով)

«Որդիդ փախաւ, բայց

Դու իմ ձեռին ես.»—ասաց և իսկոյն

Հրամայեց նորան վեր ձգել դեռնին

Եւ սուր երկաթը ցցել աչքերում:

ՎԱՆՏԷՐ ՖԻԻՐՍ

Ողորմանձ Աստուած:

ՄԷԼԽԹԱԼ (դուրս ընկնելով):

Յցել աչքերում:

Այսպէս չասացիր:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

(Վալտէր Ֆիւրաօին դարմացած):

Վալտէր, ո՞վ է այս

Երիտասարդը:

ՄԷԼԽԹԱԼ (բռնում է նորան սաստկութեամբ):

Յցել աչքերում:

Ո՛հ, շնուտ, շնուտ, խօսիր:

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ

Ո՛հ, թշուառական:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Ո՞վ է սա:

(Վալտէր Ֆիւրաօը նշանով հասկացնում է նորան):

Որդի՛ն: Տէր իմ և աստուած:

ՄԷԼԽԹԱԼ

Եւ ես մօտը չեմ: — Երկուսի մէջ էլ:

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ

Յաղթիր քո ցաւը ինչպէս տղամարդ:

ՄԷԼԽԹԱԼ

Ո՛հ, իմ պատճառով, իմ սխալի համար:

— Կոյր է ուրեմն, իրաւ կ'ոյր է նա,

կատարեալ կ'ոյր է:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Արդէն ասացի:

Լուսոյ աղբիւրը նորա ցամաքեց,

Նա էլ չի տեսնի արևի լոյսը:

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ

Ո՛հ, խղճան նորան:

ՄԷԼԻԹԱԼ

Էլ լոյս չի տեսնի:

(Նա ձեռով ծածկում է աչքերը և լուռ կանգնած է մի քանի րոպէ: Յետոյ շուռ է դալիս երբեմն մինի, երբեմն միւսի կողմը և խօսում է կակուղ ձայնով, կարծես արտասուքները խեղդում են նորան:)

Ո՛հ, աչքի լոյսը է մի երկնային
Եւ ազնիւ պարզէ:— Եւ ամեն էակ,
Ամեն արարած ապրում է լուսով—
Եւ մինչև անգամ ծաղիկն էլ ուրախ
Թէքում է գլուխը միշտ լուսոյ կողմը.
Իսկ նա յաւիտեան, թէ և կենդանի,
Նստած պիտի մնայ անվերջ խաւարում—
Նա էլ չի դմայլի ոչ արևափայլ
Կանաչ մարդերով, ոչ ծաղիկների
Գեղեցիկ տեսքով, ոչ էլ սառուցով
Պատած սարերի կարմիր փայլունով—
Մահը ոչ ինչ է— բայց ա պ ր ե լ, ըզզալ
Եւ լոյս չը ա և ս ն ե լ, մահիցը վատ է—
Ինչի խղճալով նայում էք ինձ վերայ:
Տեսէք, ևս ունիմ դոյզ առողջ աչքեր,
Բայց իմ կոյր հօրը, չեմ կարող ևս տալ
Նոցանից մինը: Ա՛խ, չեմ կարող տալ
Մի հատ ճառագայթ այն լուսոյ ծովից,
Որ բորբոքելով լցնում է աչքերս:

ՇՏԱՌԻՑԱԽԻՐ

Ախ՛, ևս քո վիշտը պիտի աւելցնեմ,
Փոխանակ նորան թեթևացնելու:
— Նորան աւելի բան է հարկաւոր,

Պատճառ Լանդֆօխտը խլեց նորանից,
Ինչ որ նա ունէր և թողեց նորան
Միայն դաւապանը, և նա մերկ ու կոյր
Ստիպուած է հիմայ ման զալ դռնէ դուռ:

ՄԷԼԻԹԱԼ

Միայն դաւապան թողեց կոյր ծերին,
Բողորը խլեց և մինչև անդամ
Արևի լոյսը որ վայելում է
Յետին աղքատն էլ:— Այժմ թող ոչ որ
Չասէ ինձ, թաք կաց, կամ մնա այստեղ:
Ո՛հ, որքան երկչոտ ու վատթար եմ ես,
Որ մտածեցի միայն ինձ համար—
Ոչ թէ քեզ համար, տարաբաղդ իմ հայր,
Եւ այն դաւանի ձեռին թողեցի
Քեզ ինչպէս դրաւ: Հեռու ինձանից
Անմիտ զգուշութիւն— վրէժ, վրէժ, ահա այժմ
Իմ նախատակը: Ես կերթամ այնտեղ—
Ոչ որ կարող չէ ինձ այս արգելել—
Կերթամ Ծօխաթի մօտ, յետ կը պահանջեմ
Հօրս աչքերը:— Արդանեմ նորան
Եւ դուրս կը քաշեմ թիկնապահների
Բազմութեան միջից:— Ել կեանքն ինձ համար
Ոչ ինչ դին չունի, միայն թէ իմ ջերմ
Բորբոքուող վիշտը զովացնեմ նորա
Պիղծ արիւնի մէջ:

(Ուղումէ գնալ)

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ

Չէ կաց դու նորան

Չես կարող մնաւ տալ: Նստած Սարնէնում,
Խր բարձր ամբողջում ծիծաղում է նա
Քա թող ու անողոք բարկութեան վերայ:

ՄԵԼԽԹԱԼ

Թէ և բնակուէր բարձր Շրէկն օռնի
Սառցէ պալատում, կամ աւելի բարձր,
Ինչտեղ որ Նւնդ Ֆրասն կրեսը քողով
Ծածկած նստած է հաղար տարիներ—
Ոհ, ես այնտեղ էլ կը ճաննեմ նորան:
Ինձ նման քսան երկատասարդով
կը կտարեմ նորա բարձր ամբողջ:
Բայց եթէ ոչ որ չի հետևի ինձ,
Եթէ ամենքդ էլ երկիւղ կրելով
Ձեր խրճիթների, ապրանքի համար,
Կթեքէք ձեր վիզը բռնակալների
Անարդ լծի տակ—այն ժամանակ ես
կը կանչեմ քողոր մեր հովիւներին,
Եւ սարերի մէջ, պարզ երկնքի տակ,
Ուր դեռ անարատ են մշտքն ու սիրտը,
կը պատմեմ նոցա այս սարսափելի
Գաղանութիւնը:

ՂԱՆՏԷՐ ՖԻԻՐՍ

Այդէն դանակը

Հասաւ ոսկոռին: Սպասե՛ք մընչև որ—

ՄԵԼԽԹԱԼ

Էլ ի՞նչ սպասենք, երբ էլ ապահով չէ

Աչքը իւր տեղում:— Բայց մի՞թէ իսպառ

Անօդնական ենք: Էլ ի՞նչի համար

Մտխորել ենք աղեղը լարել
Եւ վրայ բերել ծանր կացինը,
Ամեն էակին իւր պաշտպանութեան
Համար տուած է բնութենից մի դէնք,
Յոգնած եղջերուն յանկարծ կանգնում է
Եւ դէմ է անում որսի շներին
Իւր դարհուրելի մեծ եղջիւրները,
Այժը որսորդին դլորում է ժայռից—
Եւ մինչեւ եզն էլ, որ իւր պինդ վիզը
Խոնարհ թերում է լծի տակ, նա էլ
Եթէ զայրացնեն, սուր եղջիւրներով
Գէպի ամպերն է նետում թշուամուն:

ՎԱՆՏԻՐ ՖԻԻՐՍ

Թէ Ունտերվալդէն, Շվիցը և Ուրին
Մտածէին, ինչպէս որ մենք երկքս,
Կարելի է որ մի բան շինէինք:

ՇՏԱՌԻՖԱԽԻՐ

Երբ Ուրին կանչէ, Ունտերվալդէնը
Օգնութիւն անէ, Շվիցը յետ չի մնայ
Գաշնակիցներից:

ՄԷԼԻԹԱԼ

Բարեկամներիս

Թիւր շատ մեծ է Ունտերվալդէնում,
Նորա չեն խնայի իրանց արիւնը,
Թէ ուրիշները մէջք կըտան նոցա:—
Ո՛վ ազնիւ հայրեր մեր հայրենիքի,
Դուք շատ փորձուած էք, շատ բան էք տեսել,
Բայց ես ձեր առաջ կանգնած եմ անփորձ

Մի երկտասարդ: — Ինձ չի վայելի,
Որ ես ձայն հանեմ ձեր ժողովի մէջ,
Թէ և տարիքով փոքր եմ և անփորձ,
Բայց մի անարգէք խորհուրդս ու խօսքս.
Ինձ չէ գրգռում պատանեկական
Բորբոք արիւնս, այլ ամենամեծ,
Ամենասաստիկ յուսահատութիւն,
Որ մինչև անգամ ժայռեր կարող է
Շարժել դէպի գութ: Գութ էլ հայրեր էք,
Գերդաստանի տէր և ցանկանումէք,
Որ առաքինի լինի ձեր որդին,
Որ նա ձեր գլխի սպիտակ մազերը
Պատուէ ու յարգէ և միշտ պաշտպանէ
Ձեր աչքի լոյսը: Բայց թէպէտ դութ դեռ
Սնմաս էք մնացել և ձեր աչքերը
Առողջ ու պայծառ շարժվում են իրանց
Շրջանների մէջ, մի այդ պատճառով
Անզգայ մնաք մեր մեծ կարիքին:
Ձեր գլխին նոյնպէս կախուած է սուրը
Բռնակալների: Գութ թշնամի էք
Աւտորիական տան, մի և նոյնն էր և
Հօրս յանցանքը, ուրեմն դութ էլ
Նորա ընկերն էք և պիտի ստանաք
Մի և նոյն պատիժն ու պատուհասը:
ՇՏՍ.ՈՒՖՍ.ԽԵՐ (Վաղտէր Ֆիւրստին)
Դու վճռիր ես էլ կըհետևեմ քեզ:
Վ.Ա.ՆԵՐ ՖԻՒՐՍՏ
Տեսնենք ինչ խորհուրդ կըտան մեզ իշխանս

Սէլինէնը և Ատախնդհաուզէնը —
Ես կարծում եմ, որ նոցա անունը
Բարեկամներ շատ ձարէ մեզ համար:

ՄԷԼԻԹԱԼ

Ձեր անուններից աւելի պատիւ
Ո՞ր անունն ունի արդեօք մեր երկրում:
Ողջ ժողովուրդը խորին յարգութեամբ
Արասանում է ձեր անունները,
Դուք ձեր պապերից ժառանգել էք մեծ
Առաքինութիւն և նորա վերայ
Աւելցրել էք և ձեր սեպհականը —
Ի՞նչ հարկաւոր են մեզ ասպետները:
Նկէք ինքներս մեր ձարը տեսնենք:
Ես կարծում եմ, որ առանց նոցա էլ,
Շատ լաւ կարող ենք մենք մեզ պաշտպանել:

ՇՏԱՌԻՖԱԹԻՐ

Մեր կարիքի մէջ մեզ հետ մասնակից
Չեն ասպետները: Հեղեղը, որ լից
Տեղերում մինչ այժմ կատաղած գլորում է
Իւր ալիքները, դեռ ևս հասել չէ
Բարձր ափերին: — Բայց նոքա կօզնեն,
Երբ որ կըտեսնեն մօր ձեռին զէնքեր:

ՎԱՆՏԷՐ ՖԻԻՐՍ

Թէ որ Աւստրիայի ու մօր մէջ լինէր
Միջնորդող մի անձն, դուցէ գանկինք
Մենք արդարութիւն, բայց մեզ ճնշողը
Է ինքը կայսրը, մեր դատաւորը —
Ուրեմն ինքն Աստուած պիտի մեզ օգնէ,

Զօրութիւն տալով մեր բաղուկներին:—
Դուք բարեկամներ ճարեցէք Շվիցում,
Ես այստեղ Ուրի, բայց Ունտերվալդէն
Ո՞վ կերթայ արդեօք:

ՄԷԼԽԹԱԼ

Ես, ի հարկէ ևս:

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ

Չէ, դու իմ հիւրն ևս և ևս պիտի քո
Ապահովութեան համար մտածեմ:

ՄԷԼԽԹԱԼ

Չէ, թողէք ինձ դնամ: Ինձ լաւ յայտնի են
Մեր սարերի մէջ բոլոր անոյքերը,
Եւ բարեկամներ շատ ունեւմ այնտեղ,
Նորա չեն տայ ինձ թշնամու ձեռք:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Թող դընայ, այնտեղ մատնիչներ չըկան —
Բռնակալներին այնքան ստուժ են,
Որ ոչ ոք նոցա էլ չէ ծառայում:—
Բառամդարտին էլ կուզարկենք այնտեղ,
Որ բարեկամներ ճարէ մեզ համար
Եւ ժողովուրդը ապստամբեցնէ:

ՄԷԼԽԹԱԼ

Ի՞նչպէս միմիանց հետ ապահով խօսիմք,
Որ կասկած չտանին բռնակալները:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Եկէք ժողովիլենք Բրունէնում և կամ
Տրէյբում, ինչպէղ կանգնում են նաւեր:

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ

Այդպէս համարձակ չենք կարող վարուել:

—Այ իմ խորհուրդը— լճի ձախ կողմը,
Ճանապարհի մօտ, որ Միթէնչտէյնով
Տանում է Բրունէն, կայ մի անտառով
Պատած փոքր տափ, որ հովիւները
Կանչում են Տիւտլի: Այստեղ կպած են
(Մէլիթալին)

Մեր սահմանները, և կարճ միջոցում
(Շտաուֆախէրին)

Թեթև նաւակով դու էլ կարող ես
Շվիցից դալ այնտեղ: Խուլ ճանապարհով,
Գիշեր ժամանակ կհաւաքուենք ծածուկ
Խորհուրդ անելու: Եւ ամեն մինը
Թող բերէ իւր հետ տասը համախոհ
Բարեկամ մարդիկ, և մենք միասին
Կըխօսենք, ինչ որ խօսելու ունինք.
Եւ մեղ օգնութիւն կանչելով Աստուած,
Տուած վճիռը խկոյն կկատարենք:

ՇՏԱՌԻՖԱԽԵՐ

Թող այդպէս լինի: Հիմայ տուեցէք
Ինձ ձեր ձեռները և ինչպէս որ մենք
Երեքս անկեղծ ու իստակ սրտով
Ձեռ ձեռի տուած կանգնած ենք այստեղ,
Նոյնպէս էլ երեք մեր դաւառները
Երդվում ենք օգնել, պաշտպանել միմեանց
Մինչև վերջին շունչ:

ՎԱՍԻՏԻՐ ՖԻԻՐՍՏ և ՄԷԼԻԹԱԼ

Մինչև վերջին շունչ:

(Նորա մի քանի վայրկեան անխօս կանգնած են ձեռները
միմեանց տուած:)

ՄԷԼԻԹԱԼ,

Ո՛վ իմ կոյր ծեր հայր, դու էլ չես տեսնի
Մեր աղատութեան փառաւոր օրը:
Բայց դու կըլսես—Նրբ սարերի վրայ
Վառած կրակների բոցը կրարճրանայ,
Նրբ կըկործանուին բռնակալութեան
Պինդ ամրոցները, քեզ ուրախութեան
Լուրը կըբերեն բարեկամները,
Եւ այն ժամանակ մութը գիշերը,
Որի մէջ նստած ես անմխիթաբ,
Իսկոյն կըփոխուի առաւօտ սրայծառ:
(Նոքա բաժանութեան միսիանցից)

ՆՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ



Ս. ռ ա ջ ի ն տ ե ս ա յ ռ ա ն :

Ս. տ տ ի ն ա դ հ ա ու լ զ է ն ի տ ու լ ն ր :

Մի դոժական շէնքով դահլիճ, դարդարած աղգատոհմա-
կան վահաններով և սաղաւարտներով: Բ Ս. Ռ Օ Ն Ս. Տ Տ Ի Ն Գ-
Հ Ս. Ո Ի Զ Է Ն տ թ ս ու ն ու հ ի ն ո զ տ ար ե կ ա ն ծ եր ու ն ի, բ ար ճ ր և
վ ա յ ե լ ու չ հ ա ս ա կ ու լ, հ ա ղ ի ն տ ա ք մ ու շ տ ա կ, կ ա ն ո զ ն ա ծ է թ ե ք
լ ն կ ա ծ մ ի դ աւ ա ղ ա ն ի վ ը ա յ, ո Ր ի դ զ ու խ ր ը դ ար դ ար ա ծ է վ ա յ-
ր ն ի ա յ ծ ի ե ղ ջ ի ս ը ն ն եր ու լ: Վ Ո Ի Ո Ն Ի և ո Ր ի շ Վ, Ե Յ Ծ Ս. Ռ Ս. Յ,
ո Ր ո ն ք բ ա ն ա ծ ո ն ի ն տ Ր մ ու լ ծ ն եր և մ ա ն ո զ ա ղ ն եր, կ ա ն ո զ ն ա ծ ե ն
Ն ո յ ա շ ու ը ջ: Ո Ի Լ, Բ Ի Խ Ֆ Օ Ն Բ Ո Ի Դ Է Ն Յ ն եր ա է մ ո ն ա լ
ա ս ա կ ե տ ա կ ա ն շ ո Ր եր ու լ:

ԲՈՒՅԷՆՅ

Ս. հ ա ն ա յ յ ա տ ե ղ ե մ — ի ն ճ և ս կ ա մ ն ն աւ ա մ :

Ս. Տ Տ Ի Ն Գ. Հ Ս. Ո Ի Զ Է Ն

Թ ո յ լ ա ու ը ի ն ճ խ ա մ լ զ հ ի ն ա ո լ յ ո Ր ու թ ե ա մ ը

Ծ ա ու ա ն եր ի ս հ ե ա մ ի բ ա ժ ա կ զ ի ն ի :

(Ն ա խ ա մ է մ ի բ ա ժ ա կ ի յ, ո Ր յ ե տ ո յ ա ն յ է կ ե ն ա մ ձ ե ա ն է
ձ ե ա :)

Երբեմն ինքս էի սեպհական աչքով

Նոցա աշխատանքը կառավարում,

Կամ ձեռիս դրոշակ առաջ էի տանում
 Պատերազմի մէջ: Բայց այժմ միայն անտես
 Կարող եմ լինիլ, և տաք արևը
 Թէ ինքը չըղայ ինձ մօտ, չեմ կարող
 Նորան պռուկուռ կշնել սարերը:
 Այսպէս օրէ ցօր նեղանում է իմ
 Կեանքի շրջանը, մինչև վերջապէս
 Կըփակեն ինձ նեղ, մութ դերեղմանում:
 Ես այժմ էլ այն չեմ, ինչ առաջ էի,
 Այլ իմ ստուերը, և շուտով ինձնից
 Կըմնայ լօկ իմ անուներ:

ԿՈՒՈՆԻ

(Տալով Բուդէնցին բաժակը:)

Համեցէք, պարոն:

(Տեսնելով, որ Բուդէնցը չէ ուղում առնել բաժակը:)

Խմիր անայլ դինի:

Մի բաժակ, մի սիրտ:

ԱՍՏԻՆՔԶԱՌԻՅՆ

Չընացէք որդիք,

Մենք երեկոյեան կիսօսենք միասին:

(Ժառաները դուրս են դնում:)

ԱՍՏԻՆՔԶԱՌԻՅՆ և ԲՈՒԲԵՆՆՅ

ԱՍՏԻՆՔԶԱՌԻՅՆ

Ես քեզ տեսնում եմ դէնք ու դրան հաղած

Գու պատրաստուել ես Ալաօրֆ դնալու:

ՌՈՒԳԵՆՅ

Հն, իմ հօրեղբայր, և շատ շատապում եմ, —

ԱՍՏԻՆՔԶԱՌԻՅՆ

Շատապում ես: Միթէ այդպէս ճշդութեամբ

Չափած ու կշռած է ժամանակդ,
Որ պիտի խնայես հօրեղբորդ համար:

ԲՈՒԳԷՆՑ

Ես տեսնում եմ, որ ձեզ հարկաւոր չեմ,
Որ ես այս տանը օտարի պէս եմ:

ԱՏՏԻՆԳ ՀԱՌԻՋԷՆ

(Երկար ժամանակ նորան աչքերով շափելուց յետոյ)

Հն, ափսոս, ափսոս, որ հայրենիքը
Օտար երկիր է դառել քեզ համար:
Ա՛խ Ռւլի, Ռւլի, փոխուել ես, ես քեզ
Էլ չեմ ճանաչում: Շորեր ես հագել
Իստակ մետաքսից, դուրսդ դարդարել
Թանկ փետուրներով և ուսերիդ վրայ
Վերարկու ծածկել կարմիր թաւիշից.
Արհամարհանքով նայում ես դու մեր
Գիւղացու վերայ և ամաչում ես
Ընդունել նորա անկեղծ ողջոյնը:

ԲՈՒԳԷՆՑ

Ես պատիւում եմ նրան, ինչքան արժան է.
Բայց նա էլ թող իւր շափը ճանաչէ:

ԱՏՏԻՆԳ ՀԱՌԻՋԷՆ

Բողոր երկիրը ընկել է կայսրի
Խիստ բարկութեան տակ, ամենի սիրտը
Ի է տրամութեամբ այն հալածանքի
Պատճառով, որ մենք ստիպուած ենք կրել—
Քեզ միայն չէ շարժում ընդհանուր ցաւը—
Դու հեռացել ես քո եղբայրներից,
Եւ անցկենալով թշնամու կողմը,

Միժաղուճ ես մեր դժբաղդութեան վրայ .
 Դու ուրախութեան ետևից ընկած,
 Պառուճ ես միայն արքայի շնորհը,
 Այն ինչ խղճայի քո հայրենիքը
 Արիւն է թափում խարաղանի տակ :

ԲՈՒԳԷՆՑ

Դու ասումես, որ իմ հայրենիքը
 Նեղութեան մէջ է—բայց ի՞նչ պատճառով,
 Կամ ո՞վ է նորան ձգել այդ տեղը :
 Մի խօսք, մի հատ խօսք կարող էր փրկել
 Մեզ այդ կարիքից և դարձնել մեզ վրայ
 Ողորմած կայսրի գութ ու խնամքը :
 Վայ նոցա, որոնք մոլորեցնում են
 Կոյր ժողովուրդը, որ նա չէ տեսնում
 Իւր իսկ օգուտը : Նոքա սևաճական
 Օգտի պատճառով թոյլ չեն տալիս, որ
 Մեր դաւառները հպատակութեան
 Տան Աւստրիային երդումը, ինչպէս
 Արդէն արել են միւս երկիրները :
 Ասպետների հետ մի կարգին նստած,
 Ի՞նչ փոշի է նոցա խեղճ ժողովուրդը :—
 Նոքա այն մտքով ուղում են կայսրի
 Իրանց համար տէր, որ տէր չ'ունենան :

ԱՏՏԻՆՔԶԱՌԻՉԷՆ

Քեզանից պիտի լսեմ այդ բանը :

ԲՈՒԳԷՆՑ

Դու ինձ ստիպեցիր խօսել, որքան
 Թող որ վերջացնեմ, — Ասա մի տեսնեմ,

Դու, ինքդ ո՞վ ես այստեղ և կամ ի՞նչ
Նշանակութիւն ունիս այս երկրում:
Մի՞թէ քեզ համար չըկայ այլ պարծանք
Բացի հարկատու իշխան լինելուց,
կամ հովիւներին կառավարելուց:
Մի՞թէ ծառայել մեծազօր կայսրին
Եւ ապրել նորա շքեղ պալատում,
Չէ՞ աւելի մեծ, փառաւոր վիճակ,
Քան թէ մեծ լինել ծառաների վրայ
Եւ դիւղացու հետ դատաւոր նստել:

ԱՏՏԻՆԳՉԱՌԻՋԻՆ

Ա.խ', Ո'ւլի, Ո'ւլի, քո խօսքերի մէջ
Ճանաչում եմ ես փորձութեան ճայնը,
Որ անմեղ սիրտդ թունաւորել է:

ԲՈՒԴԻՆՑ

Հն, ես չեմ թաքցնում—հողիս խռովում է,
Երբ որ տեսնում եմ, որ օտարները
Ծաղր են անում մեզ, որ մեզ կանչում են
Գիւղի ասպետներ:—Անտանելի է,
Որ ամեն կողմից երիտասարդներ,
Գալով Հարսբուրգի դրոշակիների տակ,
Պսակվում են փառքով, իսկ ես, վեր ընկած
Իմ հայրենական ժառանգութեան մէջ,
Ի դուր կորցնում եմ կեանքիս դարունը—
կան ուրիշ տեղեր, ուր կատարվում են
Մեծամեծ գործեր, այս սարերից դուրս
կայ ուրիշ աշխարհ, ուր բաժանում են
Փառք ու պատիւներ:—Ժանդը ուտում է

Ա յստեղ վահանս ու սաղաւարտս:
Պատերազմական փողի հնչիւնը,
Կամ մունետիկի հրաւիրող ձայնը
Երբէք չեն հնչում այս սարերի մէջ.
Մարդ էլ ուրիշ բան չէ լսում այստեղ,
Բացի հովուական անհամ երգերից
Եւ կամ կովերի վղի զանգակներից:

ԱՏՏԻՆՔԷԱՌԻՉԻՆ

Կուրացած, խարուած դասարկ վայլունով,
Արհամարհիր դու քո հայրենիքը,
Ամաչիր նորա հին վարք ու բարքից:
Կըդայ ժամանակ, աչքերդ լցում
Դառն արտասուքով, սիրտդ կըքաշուի
Սաստիկ կարօտով դէպ' հայրենական
Բարձր սարերը, և քեզ կըրաիրէ
Սաստիկ արտամութիւն, երբ օտար երկրում
Կըլսես հովուական այս պարզ երգերը,
Որոնց վերայ այժմ ծիծաղում ես դու:
Ո՛հ, հայրենիքի սէրը զօրեղ է.
Քեզ համար չէ այն օտար խարերայ
Աշխարհը: Ա յստեղ դու կայսերական
Շքեղ պալատում քո ուղիղ սրտով
Յաւիտեան օտար կըմնաս ինքդ քեզ:
Ա յստեղ քեզանից կըստահանջեն այլ
Առաքինութիւն, քան թէ այն, որ դու
Ա յստեղ ստացել ես:— Գնան, ծախիր քեզ,
Երկիր ընդունիր, դնան սարուկ դառիր,
Ա յն ինչ կարող ես ինքնիշխան և տէր

Լինել սևոհական քո կալուածքի մէջ:
Ա՛յ, Ա՛յ, Ա՛յ, կանց այստեղ մեզ մօտ:
Մի գնա Աշտորֆ:— Ա՛հ, կանց, մի թողնիլ
Քո հայրենիքի սուրբ, արդար դործը—
Իմ ցեղից միայն ես եմ մնացել—
Շուտով անունս էլ կվերջանայ ինձ հետ:
Այս սաղաւարտը, այս պինդ վահանը
Ինձ հետ կըրտանեմ ես գերեզմանը:
Մի՛թէ մտածեմ հողիս փշելիս,
Թէ դու սպասում ես միայն վախճանիս,
Որ իմ գեղեցիկ, աղաա կալուածքը,
Որ Աստուած ինքը պարգևել է ինձ,
Գնաս ու տանաս Աւստրիայի ձեռից:

ԲԱԼԵԻՆՅ

Անօգուտ է մեր ընդդիմութիւնը:
Բոլոր աշխարհը թաղաւորինն է.
Մի՛թէ միայն մենք կամակորուելով,
Կարող ենք քանդել այն երկիրներից
Կապած պինդ շղթան, որով կապել է
Նա մեզ չորս կողմից: Ողջ շուկաները,
Գատարանները, ճանապարհները,
Բոլորը նրանն են, և մինչև անգամ
Կարտիանները, որ անց են կենում
Գօհարգտի վերայ, հարկ են տալիս նրան:
Կարծես թէ ցանցով պատել է նա մեզ
Իւր երկիրներով: -- Մեզ կըպաշտպանէ
Կայսերութիւնը, երբ իրան պահել
Չէ կարողանում Աւստրիայի աճող

Մեծ դօրութեան դէմ: Թէ Աստուած չօղնէ,
Կայսրը չի օգնի: Ի՞նչ յոյս ունենանք
Նոցա խոսամունքից, ելք որ կարող են
Փողի կարիքից ծախել, դրաւ դնել
Այն երկիրները, որոնք մտել են
Առժուի թևի տակ:—Չէ, իմ հօրեղբայր,
Այս ծանր օրերում երկազառակութեան
Աւելի լաւ և խելացի կլինի
Միանալ հզօր մի իշխանի հետ:
Այսօր մի ցեղից նստում է կայսր,
Էգոսց միուսից, և մուաղվում է
Մեր հաւատարիմ ծառայութիւնը:
Բայց Աւստրիային հալատակուելով,
Կապահովեցնենք մենք մեր ազատան:
ԱՏՏԻՆԳՉԱՌԻՁԷՆ
Այդքան խելօք ես: Ուրեմն աւելի
Հեռատես ես դու, քան թէ քո աղնիւ
Պապերը, որոնք իրանց արիւնով
Եւ արիարար միշտ պաշտպանել են
Աղատութիւնը:—Գնան Վուցէրն, հարցրու,
Ի՞նչպէս ճնշում է այնտեղ Աւստրիայի
Իշխանութիւնը: Ո՛հ, նորա կրդան
Կըհամարեն մեր ոչխարները և
Նղ ու կովերը, կրդան կըշափեն
Մեր բարձր սարերը, կարգելեն որսալ
Սեպհական ազատ անտառների մէջ,
Կամուրջների վրայ, մեր դռների մօտ
Երջինեն իրանց մաքսատները,

Մեզ իրանց օգտին կըծառայեցնեն,
Իրանց թշնամու դէմ մեզ կուղարկեն—
— Չէ, թէ որ պիտի մենք արիւն թափենք,
Լաւ է մեզ համար—այդպէս աւելի
Աժան կըղնենք ազատութիւնը,
Քան ստրկութիւնը:

ԲՈՒԴԵՆՑ

Ի՞նչպէս դէմ կենանք

Մի բուռն հովիւներ Ալքրէխտի զօրքին:

ԱՍՏԻՆԳՆԱՌՁԵՆ

Ա՛յ տղայ, ճանաչիր այդ հովիւներին:
Ես ճանաչում եմ, նոցա շատ անգամ
Պատերազմի մէջ առաջնորդել եմ,
Նոցա տեսել եմ Պալէնցի կռիւմ,
Թող դան մեզ վերայ մի լուծ դնելու,
Որ մենք վճռել ենք երբէք չտանելու:
— Ո՛հ, լաւ խմացիր, ինչ ցեղից ես դու:
Արտաքին, ունայն փայլունի համար
Մի՞ դէն ձգիր քո անսուտ պարծանքը,—
Որ է գլուխ լինել մի ազատ ազգի,
Որ քեզ սիրում է անձնանուէր սիրով,
Քեզ հետ պատրաստ է դէմ դնալ մահին,—
Ա՛յ քո պարծանքը:— Ո՛հ պինդ ամբացրո՛ւ
Ազգութեան կապը, սրտով միացիր
Մեր սուրբ, թանկագին հայրենիքի հետ,
Նրա մէջ հաստատուած են քո զօրութեան
Պինդ արմատները: Նորանից հեռու,
Օտար աշխարհում կըլինիս մենակ

Եւ անօղնական, ինչպէս թոյլ եղեղն,
 Որին կըկտորէ ամեն փոթորիկ:
 Ո՛հ, եկ, վաղուց է դու մեզ չես տեսել,
 Փորձիր մնալ մեզ մօտ մի օր—միայն այսօր
 Մի գնա Ալտօրֆ—լսումես, այսօր,
 Այս մի օրը միայն կանց այստեղ մեզ մօտ:
 (Նա բռնումէ նորա ձեռը:)

ԲՈՒԴԷՆՅ

Ես խօսք եմ տուել—թող ինձ, կապուած եմ:

ԱՏՏԻՆԳ ՀԱՌԻՋԷՆ

Հա՛, ողորմելի, դիտեմ, կապուած ես—
 Բայց ոչ թէ լքօսքով և կամ երդումով,
 Այլ դու կապուած ես սիրոյ կապերով:
 (Բողէնցը երեսը շուռ է տալիս:)

— Մածկիր երեսդ ինչպէս ուղում ես:
 Օրիորդ Բէրթա Փօն Բրունէկն է, որ
 Այդպէս քաշումէ քեզ դէպի պալատ,
 Որ քեզ ստիպումէ ծառայել կայսրին:
 Քո հայրենիքը դաւաճանելով,
 Ուղումես ստանալ այն ազնիւ կոյսը—
 Բայց դու խաբւում ես: Քեզ իրանց կողմը
 Քաշելու համար հարսն են ցոյց տալիս,
 Բայց նա քեզ համար չէ նշանակուած:

ԲՈՒԴԷՆՅ

Արդէն հերիք է: Հիմա մննես բարով:
 (Դուրս է գնում)

ԱՏՏԻՆԳ ՀԱՌԻՋԷՆ

Անխնել պատանի, կանց: Ո՛հ, չէ լսում:
 Ես նորան պահել, փրկել չեմ կարող—

Այսպէս էլ երբեմն հեռացաւ մեզնից
Վօլֆէնշիսէնը—այսպէս կհեռանան
Եւ ուրիշները: Աարծեա կախարդուած,
Փախչում են մեզնից մեր դաւակները:—
Ո՛հ տարաբանող ժամ, երբ օտարները
Սկան բաղդաւոր այս հովիտները,
Հին վարք ու բարքը ոչնչացնելու:

Նորը ամեն տեղ տիրապետում է,
Հրաժարվում, դնում է հինը, յարդելին,
Սկան, վրայ հասան նոր ժամանակներ.
Բոլորն էլ նոր են, մարդիկ ու մտքեր:
Ես ի՞նչ եմ շինում: Կամ ընկերները
Վաղուց մտել են գերեզմանները:
Իմ ժամանակը արդէն թաղած է.
Երանի նորան, ով այժմ մեռած է:

(Ղուրս է դնում:)

Երկրորդ տեսարան:

Մի կանաչ դաշտ, պատած բարձր ժայռերով և անտառով:

Ժայռերի վրայ երևում են շափղներ և քարափի մէջ
կտրած սանդուխտներ, այդ սանդուխտների վրայից յետոյ
յաւ ընդ գալիս գիւղացիները: Նտեի կողմը երևում է լիճը, որի
վրայ սկզբումը կանգնած է ծիածան լուսնի հառադայթներին:
Տէսարանը փակում են բարձր լեռներ, որոնց ետևից բարձրա-
նում են սառցապատ լեռներ: Բեմի վրայ կատարեալ գիշեր է,
միայն լիճը և սառցապատ լեռների գագաթները լուսաւորւած
են լուսնիակի լուսով:)

Մ Է Լ Խ Թ Ա Լ, Բ Ա Ո Ի Մ Գ Ա Բ Տ Է Ն, Վ Ի Ն Կ Է Լ,
Բ Ի Գ, Մ Ե Յ Է Բ Ֆ Օ Ն Ս Ա Բ Ն Է Ն, Բ Ո Ի Բ Կ Զ Ա Բ Տ
Ա Մ Բ Ի Ի Զ Է Լ, Ա Ռ Ն Օ Լ Գ Ֆ Օ Ն Ս Է Վ, Ա, Կ Լ, Ա-
Ո Ի Ս Ֆ Օ Ն Գ Է Ռ Ֆ Լ Ի Ի Զ Է և էլի ուրիշ չորս Գ Ի Ի-
Ղ, Ա Յ Ի, բոլորը ղինաւորուած:

ՄԷԼԽԹԱԼ (գեռ ևս բեմի ետևից:)

Տեսէք մեր առաջ այս նեղ շափղը,
Լինձ հետևեցէք: Ահա՛ քարափը
Եւ նորա վերայ հաստատած խաչը.
Արդէն տեղ հասանք, այստեղ է Բիւտլին:
(Գուր: Ընդ գալիս):

Վ Ի Ն Կ Է Լ Բ Ի Գ

Սճա, ահանջ դրէք:

ՍԷՎԱ

Չայն, ծպտուն չրկայ:

ՄԷՅԵՐ

Գևու ոչ ոք չրկայ: Ամենից առաջ
Մենք եկանք տեղը, Ունտէրվալդէնցիք:

ՄԷԼԽԹԱԼ

Գևու դիշեր շատ կայ:

ԲԱՌԻՄԳԱՐՏԷՆ

Նոր երկու կանչեց

Գիշերապահը Սէլիարէրդի մէջ:
(Հետուից լսում է զանգակի ձայն:)

ՄԷՅԵՐ

Սնւ, սնւ, լսեցէք:

ԱՄ ԲԻԻՀԷԼ

Դա առաւօտեան

Ժամի զանգակն է լճի միւս ափից:

ՖՐՆ ԳԷՌ ՖԼԻԻՀԷ

Օղը իստակ է, և այսպէս հեռու

Լսումէ ձայնը:

ՄԷԼԽԹԱԼ

Թող մի քանիսը

Գնան ցախ բերեն և լաւ կրակ վառեն,

Մինչև մարդիկ գան:

(Երկու գիւղացի գնում են:)

ՍԷՎԱ

Սիրուն դիշեր է:

Լիճը հանդարտ է, ինչպէս հայելի:

ԱՄ ԲԻԻՀԷԼ

Նոքա հեշտութեամբ կըզան հասակով:

ՎԻՆԿԷԼՐԻԴ (ցոյց է տալիս լճի կողմը):

Ա՛խ, տեսէ՞ք, տեսէ՞ք:

ՄԵՅԻՐ

Ի՛նչ կայ:— Հան, իրաւ

Միածան, այն էլ գիշեր ժամանակ:

ՄԷԼԽԹԱԼ

Դա լուանի լուսից է առաջ գալիս:

ՅՕՆ ԴԷՌ ՅԼԻԻՀԷ

Ա՛յ դարմանալի, չըտեսած նշան.

Շատ մարդ իւր օրումն էլ այս չի տեսնի:

ՍԷՎԱ

Երկուն է, միւսը փոքր ինչ դունատ է:

ԲԱՌՄԳԱՐՏԷՆ

Տեսէ՞ք, մի նաւակ գալիս է մեզ մօտ:

ՄԷԼԽԹԱԼ

Դա Շատուֆախէրն է իւր նաւակի մէջ.

Պատուական մարդը շատ չըսպասել տուելի:

(Բառամղարտէնի հետ միասին մօտ է գնում ափին:)

ՄԵՅԻՐ

Միայն Ուրեցիք շատ են ուշանում:

ԱՄ ԲԻԻՀԷԼ

Նորա շատ հեռու պիտի պտտեն,

Որ չըսպասանեն Վանդֆօխտի մարդկանց:

(Այդ միջոցին այն երկու գիւղացին արդէն մի մեծ կրակ են վառել բեմի մէջ տեղը:)

ՄԷԼԽԹԱԼ (ափի վրայ):

Ո՞վ էք: Ասացէ՞ք:

ՇՏԱՌԻՅԱԽԷՐ (ցածից.)

Ազգի բարեկամք:

Բողոքը գէմ են. դնում եկողներին: Նաւակից դարս են
 դալիս Շ Յ Ա Ո Ի Ֆ Ա Խ Կ Բ, Ի Դ Է Լ Բ Է Գ Ի Ե Գ, Հ Ա Ն Ս
 Ա Ո Ի Ֆ Դ Է Ռ Մ Ա Ո Ի Է Բ, Ի Ո Բ Գ Ի Մ Հ Օ Ֆ Է
 Կ Օ Ն Բ Ա Գ Հ Ո Ի Ն, Ո Ի Լ Բ Ի Խ Գ Է Բ Շ Մ Ի Գ,
 Ի Ո Ս Տ Ֆ Օ Ն Վ Է Յ Լ Է Բ և էլի երէք ուրիշ Գ Ի Ի Դ, Ա-

Յ Ի, բողոքն էլ դինատրում:

ԲՈՂՈՐՐ (ձայն են ապիս:)

Բարով էք եկել:

(Այն ինչ միաները մնումեն բեմի ետևի կողմը և ողջունում են
 միմեանց, առաջ են դալիս Մէլիթայը և Շաաուֆախէրը:)

ՄԷԼԻԹԱԼ

Ո՛հ, տեսայ նորան,

Պարոն Շաաուֆախէր, նորան, որ երբէք

էլ ինձ չի տեսնի: Չեռս դրեցի

Նորա աչքերին, և այն խաւարած,

Սառած հայեացքից ծծեցի ջերմ վրէժ:

ՇՏԱՈՒՖԱԽԷՐ

Այդպէս մի խօսիր: Չէ թէ վրէժ առնել

Անցեալի համար, այլ ապագայում

Մեզ պաշտպանելու պիտի մտածենք:—

Այժմ առն ինձ, ինչ շինեցիր դու

Ունաէրվալդէնում մեր գործի համար,

Ի՞նչ են մտածում մարդիկ այդ մասին,

Ի՞նչպէս դու ինքդ պրծաք կապերից

Գաւաճանութեան:

ՄԷԼԻԹԱԼ

Սուրէնի ահեղ

Սարերի միջով և լայնատարած

Սառցէ դաշտերով, ինչտեղ միայն ստճուի

Տըքուլն է լախում, անցկացայ, հասայ

Մինչև լեռնային առօտաները,
Ուր արձեցնում են իրանց հօտերը
Հովիտներն Ռբից և Կնդէլքերպից՝
Սառուցի ջրով, որ փրփրալով
Յած է դարձում քարափներինը,
Զովայնում էի ես իմ ծառաւր:
Առանձին կանգնած խրճիթների մէջ
Մանում էի ես, ինքս աանտաւեր
Եւ ինքս իմ հիւր, մինչև որ հասայ
Բարեւիրտ մարդկանց ընակարանները:
— Արդէն պատահած չարութեան լուրը
Նկիզ, հասել էր այդ հովիտները,
Իմ դժբաղդութեամբ դէպի դուժ շարժած,
Ամեն մարդ սիրով ընդունում էր ինձ:
Ես տեսայ, ինչպէս ամենի սիրաւը
Վրդովլած էր նոր կառավարութեամբ,
Պատճառ, ինչպէս որ նոցա սարերը
Ամեն տարի նոյն խտտերն են բուսցնում,
Աղբիւրները միշտ հաւասար վաղում,
Եւ մինչև անգամ ամպերն ու հողմը
Միշտ մի ուղղութեամբ անփոփոխ դիմում,
Նոյնպէս էլ այնտեղ հին վարք ու բարքը
Պատկերից սկսած մինչև թռուները
Միշտ պահպանուած է մաշտը, անփոփոխ:
Նորա ընդդէմ են ամեն նորութեան,
Ինչ որ ընդդէմ է հին սովորութեան:
— Նորա սուհային ինձ կոչու ձեռները,
Պատից վեր ընդին ժանդոտած սրերը,

Ուրախ փայլեցին նոցա աչքերը,
Երբ որ ասացի այն անունները,
Որոնք սուրբ են մեր դիւղացու համար.
Քն անունը և Վաղաէր Ֆիւրաթինը:
— Նոքա եզդումով խոտացան անել.
Ինչ որ երկուսդ լաւ կը համարէք:
— Հիւրասիրութեան սուրբ հովանու տակ
Վաստճ ման եկայ մի տանից միւս տուն—
Եւ երբ որ հասայ իմ հայրենական
Հովիտը, ինչտեղ ապրում են բոլոր
Ազգականներս— և դասյ հօրս
Կողոպտած ու կոյր, ընկած խոտի վրայ
Եւ ողորմութեան հացով ապրելով—

ՇՏԱՌԻՖԱԽԵՐ

Բարերանր Աստուած:

ՄԷԼԽԹԱԼ

Ես լաց չեղայ, չէ,

Արատասուքներով չըթեթեացրի
Ինձ այրող ցաւը, այլ պինդ պահեցի
Ինչպէս թանկագին գանձ եմ սրտի մէջ,
Եւ միայն դործիւ վրայ էի մտածում:
Մին մին ման եկայ բոլոր ծակ ու ծուկ,
Էլ տեղ չըմնաց մեր սարերի մէջ,
Գնացի բարձրացայ մինչ սառուցները,
Այնտեղ էլ դասյ ընակում խրճիթներ.
Եւ ամեն տեղ, ուր ոտս կոխեցի,
Գտայ մի և նոյն ատելութիւնը
Դէմ մեզ հալածող բանակաների:

Պատճառ, այնտեղ էլ, ուր էլ կեանք չըկայ,
Ուր սառած հողը ոչ ինչ չէ տալիս,
Այնտեղ էլ դափում ու կողոպտում է
Տօխտերի անհաղ աղահութիւնը—
Իմ սուր խօսքերով դրդուցի ես
Այդ բարի մարդկանց խտակ սրտերը,
Եւ նոքա հողւով ու մարմնով մերն էն:

ՇՏԱՈՒՖԱԽԻՐ

Շատ բան ես շինել կարճ ժամանակում:

ՄԷԼԽԹԱԼ

Այդ բոլորը չէ: Բօսրէրդ ու Սարնէն
Ամուր բերդերից շատ է վախենում
Մեր ժողովուրդը, պատճառ նոցա պինդ
Պարխապների մէջ թշնամին իրան
Պաշտպանում է և մնասում երկրին:
Սեպհական աչքովս ուղեցի տեսնել,
Ես էի Սարնէն ու ամեն տեղ էլ
Ինչը ման եկայ:

ՇՏԱՈՒՖԱԽԻՐ

Դու յանդդնեցար

Մտնել մինչ անգամ դազանի բունը:

ՄԷԼԽԹԱԼ

Ես հաղել էի ուխտաւորի շոր,
Տեսայ Լանդֆօխտին սեղանի վերայ
Սաստիկ շռայլութեամ կեր ու խմելիս:—
Այժմ դատիր, տես, արդեօք կարո՞ղ եմ
Զսպել իմ սիրտը, թշնամուս տեսայ
Եւ չքաղանեցի:

ՇՏԱՈՒՅԱԽԻՐ

Իրաւ որ բազդը

Ոգորմած էր քեզ:

(Այդ միջոցին առաջ են գալիս միւս գիւղացիները և մօտե-
նում են այդ երկուսին)

Բայց այժմ ասեմ,

Ո՞վքեր են այս քո բարեկամները,

Եւ ինձ նայա հետ ծանօթացրու,

Որ կարողանանք վատահ ու անկեղծ

Խօսել միմեանց հետ:

ՄԻՅԷՐ

Ո՞վ չէ ճանաչում

Քեզ, պարոն Վէրնէր, երեք դաւառում:

Իմ անունը է Մէյէր Փօն Սարնէն,

Եւ ասեմ սա էլ իմ քրոջ որդին է,

Սարուա Փօն Վինկէլբիդ:

ՇՏԱՈՒՅԱԽԻՐ

Անծանօթ անուն

Չես ասում դու ինձ: Վինկէլբիդներին

Մինը Վէյլէրի ճահիճներին մէջ

Սպանեց վիշապին և այդ կուռի մէջ

Իւր կեանքն էլ թողեց:

ՎԻՆԿԷԼԲԻԴ

Գա իմ մեծ պապն էր,

Պարոն Շտաուֆախէր:

ՄԷԼԽԹԱԼ

(Յայց տալով երկու գիւղացու վրայ)

Նորա անտառի

Միւս կողմն են կենում և կնդէլբէրդի

Վանքի մարդիկ են: — Յոյս ունիմ, որ դու
 Չես արհամարհի նոցա, որ մեզ պէս
 Ազատ չեն, չունին սեփնական կալուածք—
 Բայց հայրենիքը սիրում են, և էլ
 Շատ լաւ մարդիկ են:

ՇՏԱՌԻՖԱԽԵՐ (այն երկուսին)

Տուէք ինձ ձեր ձեռքը

Երանի նորան, ով այս աշխարհում
 Անձնիշխան է. բայց ամեն կոչման մէջ
 Այն աղնիւ մարդիկ:

ԿՕՆՐԱԴ ՀՈՒՆ

Եւ անձ սա էլ

Մեր նախադասն է, պարոն Րէդինսդը:

ՄԷՅԻՐ

Ծանօթ ենք: Գա իմ հակառակորդն է,
 Ար ինձ հետ մի հին կալուածքի մասին
 Վաղուց վէճ ունի: — Հնա, պարոն Րէդինսդ,
 Գատասանատանը թշնամի ենք մենք,
 Այստեղ բարեկամ:

(Շարժում է նորա ձեռքը:)

ՇՏԱՌԻՖԱԽԵՐ

Յրինաւոր խօսք,

Ես ու իմ Աստուած:

ՎԻՆԿԵԼՐԻԴ

Լսում էք արդեօք,

Նորա գալիս են: Ահա Ռերեյիք

Փող են հնչեցնում:

(Աջ ու ձախ երևում են զինատուրուած մարդիկ ձեռներին ջահեր
և ցած են իջնում ժայռերից։)

ԱՌԻՖ ԴԷՌ ՄԱՌԻԷՐ

Տեսէք, պատուական

Քահանան ևս իջնում է ժայռից։

Նա չէ վախեցել ոչ ճանապարհի

Դժուարութենից, ոչ մութ գիշերից։

Ա՛յ հովիւ բարի և հաւատարիմ,

Որ արթուն աչքով հսկում է միշտ իւր

Ժողովուրդի վրայ։

ԲԱՌԻՄԳԱՐՏԷՆ

Ահա տիրացուն

Եւ վալտէր Ֆիւրստը դալիս են հետը,

Բայց Տէլը չըկայ եկողների մէջ։

Վ Ա Լ Տ Է Ր Ֆ Ի Ի Ր Ս Տ, Բ Է Ս Է Լ, Մ Ա Ն, քա-
հանան, Պ Է Տ Է Ր Մ Ա Ն, տիրացուն, Կ Ո Ի Ո Ն Ի, հովիւը,
Վ Է Ր Ն Ի, որսորդը. Բ Ո Ի Ո Դ Ի, ձկնորսը և էլի հինգ ուրիշ
Դ Ի Ի Ղ, Ա Յ Ի Ն Ն Բ. բոլորը միասին թւով երեսուն և երեք
առաջ են դալիս և կանգնում են կրակի շուրջ։

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՍՏ:

Այսպէս ստիպուած ենք մենք մեր սեփական

Հայրենի հողի վերայ ժողովել

Թաքուն, գողնուի, ինչպէս անում են

Մարդասպանները, և մութ գիշերով,

Որ միշտ ծածկում է սև վերարկուով

Միայն յանցանք և դաւաճանութիւն,

Պիտի ձեռք բերենք մեր իրաւունքը,

Թէպէտ նա նոյնպէս մաքուր ու պարզ է,

Ինչպէս ցերեկի լուսափայլ ծոցը։

ՄԷԼԽԹԱԼ

Վնաս չըկայ, ինչ որ սկսենք զիշերով,
Ազատ և ուրախ կվերջացնենք օրով:

ԲԷՍԷԼՄԱՆ

Ահա ինչ աղղկց Աստուած սրախ մէջ,
Ո՛վ դաշնակիցներ: Այժմ մենք այստեղ
Կանգնած ենք բոլոր ժողովուրդի տեղ,
Ուրեմն եկէք հին սովորութեամբ
Խորհուրդ կազմենք մենք, ինչպէս արևը ենք
Խաղաղ օրերում: Կարիքն է պատճառ,
Ինչ որ անպատշաճ է մեր ժողովին:
Բայց ամեն տեղ էլ ներկայ է Աստուած,
Ուր միայն իրաւունքն է կառավարում,
Եւ մենք կանգնած ենք նրա կրկնքի տակ:

ՇՏԱՌԻՓԱԽԷՐ

Հա, խորհուրդ կազմենք հին սովորութեամբ,
Թէպէտ զիշեր է. բայց պարզ փայլում է
Մեր իրաւունքը:

ՄԷԼԽԹԱԼ

Թէ և փոքր ենք թւով,
Բայց ժողովուրդի սիրտը այստեղ է,
Պատճառ լաւերը ներկայ են դանախում»

ԿՕՆԴՐԱՆԴ ՀՈՒՆ

Հին զրքեր չունինք մեր ձեռին բռնած,
Նորա սրտերիս մէջն են փորագրած:

ԲԷՍԷԼՄԱՆ

Ուրեմն թող իսկոյն շրջանը կազմենք
Եւ իշխանութեան սրերը հաստատենք:

ԱՌԻՖ ԴԷՌ ՄԱՌԻԻՐ

Թող նախազանը կանգնի իւր տեղը
Եւ նորա կողքին օգնականները:

ՏԻՐԱՅՈՒ

Այստեղ երեք ցեղ ներկայ են: Արդեօք
Ո՞րից պիտ' ընտրենք մեր ժողովին զլուս:

ՄԷՅԷՐ

Այդ պատուի համար թող Շվիցն և Ուրին
Վիճեն միմեանց հետ, մենք հրաժարուամ ենք,
Ունտերվալդէնցիք:

ՄԷԼԻԹԱԼ

Մենք հրաժարուամ ենք.
Մենք ենք օգնութիւն խնդրում մեր կարող
Բարեկամներից:

ՇՏԱՌԻՓԱԽԻՐ

Ապա թող Ուրին
Չեան առնէ սուրը. նորա դրօշը միշտ
Առաջնորդ է մեզ:

ՉԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ

Չէ, այդ պատիւը
Շվիցին ենք տալիս, պատճառ ամենքս էլ
Նորա ցեղիցն ենք:

ԲԷՍԷԼՄԱՆ

Թողէք վերջացնեմ
Չեր ազնիւ վեճը. Շվիցը խորհրդում,
Պատերազմի մէջ Ուրին զլուս լինի:

ՉԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ

(Տալիս է սրերը Շաառփախէրին):

Ուրեմն վեր առ:

ՇՏԱՌԻՖԱԽԻՐ

Չէ, ինձ չի հասնի,

ինձանից մեծին:

ԻՄ ՀՅՖԷ

Ա՛յ Ուրբիս Շվիդը

Ամենից մեծն է:

ԱՌԻՖ ԴԷՌ ՄԱՌԻՐ

Նա կտրիճ մարդ է,

Բայց չէ անձնիշխան: Միայն աղաատ մարդ

կարող է լինել Շվիցում դատաւոր:

ՇՏԱՌԻՖԱԽԻՐ

Ահա այստեղ չէ պարոն Բէդինդը.

էլ ինչ ենք պառում սորանից լաւին:

ՎԱԼՏԻՐ ՖԱԻՐՍ

Նա լինի այսօր ժողովի գլուխը:

Ով համաձայն է, ձեռք բարձրացնէ:

(Սմենքը բարձրացնում են աջ ձեռքը:)

ԲԷԴԻՆԳ

(կանդնում է շրճանի մէջ տերը:)

Գրերի վրայ դնել չեմ կարող ձեռք.

Ուրեմն երդվում եմ փայլուն ասաղերով.

Որ չեմ հեռանայ երբէք օրենքից:

Երկու սուր ցցում են նորտ առաջ և բոլոր մարդիկ մի շրճան
են կաղմում նորա շուրջ. մէջ տեղը Շվիցը, աջ կողմը Ուրին
և ձախ կողմը Ունտերխալդէնը: Նա կանդնած է թեք ընկած

խր պատերազմական սրի վերայ:

Ի՞նչ է պատճառը, որ այս սարերի

Երեք ցեղերը մութը գիշերով

Եկել են այստեղ: Ի՞նչ պիտի լինի

Նպատակը մեր նոր դաշնակցութեան,

Որ մենք կապում ենք պարզ երկնքի տակ:

ՇՏԱՌԻՖԱԽԵՐ (մտնում է շրջանի մէջ:)

Նոր դաշնակցութիւն չենք կապում այստեղ,
Այլ մեր պապերից հաստատածն է, որ
Նորոգում ենք այժմ: Թէ և լիճ ու սար
Բաժանում են մեզ, և ամեն մի ցեղ
Իրան ինքնազուխ կառավարում է.

Սակայն մի ազդէ ենք, մի արիւն և մի
Երկրից եկել ենք բոլորս էլ այստեղ:

ՎԻՆԿԵԼՐԻՒ

Ուրեմն ուղիղ է, ինչ որ ասվում է
Հին երգերի մէջ. թէ մէք հեռուից
Եկել ենք այստեղ: Ո՛հ, շուտ պատմիր մեզ,
Ինչ որ դու գիտես, որ հին կապերով
Ամրացնենք մեր նոր դաշնակցութիւնը:

ՇՏԱՌԻՖԱԽԵՐ

Ա՛յ, ինչ են պատմում ձեր հովիւները:
— Երբեմն հիւսիսում մի մեծ ազդէ կար, որ
Շատ նեղացած էր մեծ թանկութեանից,
Այդ կարիքի մէջ ժողովն ազդային
Վճռեց, որ ամեն տաներորդ անձը
Վիճակով թողնէ իւր հայրենիքը:—
Այդպէս էլ եղաւ: Եւ լաց ու կոծով,
Խուռն բազմութեամբ ճանապարհ ընկան
Մարդիկ ու կանայք հարաւի կողմը:
Եւ սուրը ձեռին անցկացան նոքա
Բոլոր Գերմանիան, մինչև որ եկան
Անտառով ծածկած այս լեռնաստանը.

Եւ այն վայրենի ձորը մտնելով,
Ուր այժմ Մուստտան արագ վազում է
Առօտների մէջ—չըգտան ոչ ինչ
Բնակութեան նշան, միայն մի խրճիթ
Կար ափի վերայ, և նորա առաջ
Նստած էր մի մարդ լատին պահապան:—
Բայց լիճը սաստիկ ալէկօծվում էր,
Եւ հնար չըկար լատով անցկենալ:
Նորա աչքի տակ առան երկիրը,
Եւ գտան այնտեղ սիրուն անտառներ,
Լաւ լաւ աղբիւրներ, և կարծում էին,
Թէ գտանվում են իրանց սիրելի
Հին հայրենիքում:— Ա, յնտեղ վճռեցին
Մնալ և շինեցին հին քաղաքը Շվից,
Եւ շատ ծանր օրեր պիտի քաշէին,
Մինչև մաքրեցին հողը անտառից:—
Յետոյ, երբ նորա բաղմացան այնտեղ
Եւ հողը էլ չէր բաւականանում,
Անցկացան դնացին մինչև սև սարը,
Հա, մինչև ձիւնով ծածկած դաշտերը,
Որոնց միւս կողմը, խոր ձորերի մէջ,
Ապրում է ուրիշ լեզու խօսող աղբ:
Կօնվալդ լիրան մօտ շինեցին Շտատնիցը,
Բէյսի ձորի մէջ Ալտօրֆ քաղաքը:—
Բայց չը մոռացան իրանց ծագումը,
Եւ բոլոր օտար ցեղերի միջից,
Որ յետոյ եկել բնակուել են այստեղ,

Հեշտ ճանաչվում են Շվիցի մարդիկը,
Բուրյն էլ մի սիրտ, մի արիւն ունին:

(Սջ ու ձախ տալիս է ձեռը:)

ԱՌԻՖ ԴԷՌ ՄԱՌԻԵՐ

Հնա, մենք բուրյս էլ մի արիւնից ենք:

ԲՈՂՈՐԸ

(Միմեանց ձեռը տալով:)

Մի աղղ ենք, և միշտ միաբան կըլինինք:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Ուրիշ աղղերը ստիպուած են քաշել

Օտարի լուծը, հպատակուելով

Իրանց յաղթողին: Մեր երկրի մէջ էլ

Շատ կան այնպէսներ, որոնք ուրիշին

Պիտի ծառայեն, նոցա որդիքն էլ

Այդ ծառայութեան ժառանգաւոր են:

Բայց մենք, հին Շվեյցէր աղղի զաւակներս,

Միշտ պահպանել ենք ազատութիւնը:

Ոչ մի իշխանի առաջ չենք չոքել,

Ինքնակամ մտանք մենք կայսրների

Պաշտպանութեան տակ:

ԲԷՍԷԼՄԱՆ

Ինքնակամ մտանք

Մենք կայսերութեան պաշտպանութեան տակ:

Այդպէս է դրած կայսր Ֆրիդրիխի

Տուած թղթի մէջ:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Պատճառ, ամենից

Ազատ մարդն էլ չէ երբէք առանց տէր:

Մի զուխ պէտք է որ անպատճառ լինի

Եւ մի ծայրագոյն դատաւոր, որ տայ
Արդար վճիռներ մարդկանց վէճերին :
Այս պատճառով էլ և մեր հայրերը
Այս հողի համար, որ, կոչա բնութէնից
Խլելով, այսպէս լաւ մշակել են,
Պատիւ են տուել կայսրին, որ իրան
Տէր է անուանում թէ գերմանական,
Թէ իտալական ողջ երկիրների,
Եւ ինչպէս նորա միւս ազատները,
Խոտտացել են նրան զէնքով ծառայել .
Եւ ազատ մարդը ունի միայն մի
Պարտականութիւն, որ պաշտպան լինի
Իրան պաշտպանող նա տէրութեանը :

ՄԷԼԽԹԱԼ

Աւելին նշան է ծառայութեան :

ՇՏԱՌԻՖԱԽԵՐ

Թէ որ լինում էր պատերազմ, նորա
Հետևում էին կայսրի դրօշակին,
Հետը գնում էին դէպ Նտալիա,
Նրան Հռովմէական թագով պսակելու :
Տանն իրանք իրանց էին կառավարվում
Հին սովորութեամբ և հին օրէնքով .
Քրէական բարձր դատաստանն էր միայն
կայսրին պատկանում, և դորա համար
Նշանակուած էր մի մեծ կոմս, որ չէր
Բնակվում այստեղ : Երբ պատահում էր
Քրէական յանցանք, կանչում էին նրան,
Եւ բաց երկնի տակ, պարզ ու հաւարակ,

Առանց երկխղի տալիս էր վճիռ:
Կայ արդեօք այստեղ ստրկութեան նշան
Ով հակառակը գիտէ, թող խօսի:

ԻՄ ՀՕՓԷ

Չէ, ողջ այդպէս է, ինչպէս ասում էս:
Բռնակալութեան շնոր տարել երբէք:

ՇՏԱՈՒՅԱԽԵՐ

Կայսրին իրան էլ չընաղանդուեցանք,
Երբ տէրտէրներին կամեցաւ նա տալ
Մեր իրաւունքը: Պատճառ, երբ մեղնից
Էինդիդէլն վանքի կրօնաւորները
Ուղեցին խլել առօտաատեղը.

Որի վերայ մենք հին ժամանակից
Արածեցնում ենք միշտ մեր ապրանքը,
Եւ վանահայրը հանեց մի հին թուղթ,
Որով պարզեած էր նորան անտէր
Այն անապատը:—Մեր դոյութիւնը
Ուրացել էին:—Չէ, ասացինք մենք,
Սնւտ է այդ թուղթը: Կայսրը կարող չէ
Պարզել, ինչ որ մեր սեփականն է,
Եւ թէ կըմերժէ տէրութիւնը մեր
Իրաւունքները, առանց տէրութեան
Կարող ենք ապրել մեր սարերի մէջ:
—Այսպէս են խօսել միշտ մեր հայրերը:
Միթէ մենք պիտի տանենք նոր լծի
Անարդութեանը: Թող տանք ծառային,
Որ նա մեզ անէ, ինչ որ ոչ մի կայսր
Չէր համարձակուի:—Մենք մեր ձեռների

Աշխատանքով ենք ստեղծել այս հողը
Մենք հին անտառը, որ առաջ լինէր
Միայն արջերով, մարդու բնակութեան
Շինել ենք հարմար, ճահիճների մէջ
Ոչնչացրել ենք անթիւ վիշապներ,
Մենք պատառել ենք մէզի պատանքը,
Որով ծածկած էր այս անապատը,
Ժայռեր ենք քանդել, անդունդների վրայ
Շինել ապահով, լաւ ճանապարհներ,
Եւ հաղարամեայ օիրապետութեամբ
Մերն է այս հողը— և հիմա պիտի
Ուրիշի ստրուկը դայ ու մեզ համար
Շղթաներ շինէ, և խայտառակէ
Նա մեզ սեփհական մեր հողի վերայ,
Մի՞թէ ոչ ինչ ճար չըկայ այս տեսակ
Հալածանքի դէմ:

(Սաստիկ շփոթ գլուպիներէ մէջ:)

Չէ, բռնութիւնն էլ

Ունի մի սահման: Նրբ հալածուածը
Ոչ մի տեղ դռնում չէ արդարութիւն,
Նրբ անտանելի դառնում է բռնը—
Նա վատահ հողում դէպի երկինքն է
Մեկնում իւր ձեռը և վեր բերում իւր
Յաւիտենական իրաւունքները,
Որոնք վերեր անլաճատելի
Եւ միշտ հաստատուն կախում են, ինչպէս
Նոյն ինքն սասողերը:— Բնութեան սկզբնական
Գրութիւնը կրկին վերադառնում է,

Ուր մարդ կանգնած է լօկ մարդ մարդու դէմ—
Եւ թէ ուրիշ հնար էլ չէ գտնուում,
Որպէս վերջին հնար տուած է նրան սուրբ:—
Հնա, մենք կարող ենք բռնութեան դէմ միշտ
Սրով պաշտպանել ամենարարձր
Մեր ըստացուածքը: — Մեր երկրի, մեր կի՛ն
Ու դաւակների համար կանգնած ենք:

ԲՈՒՈՐԸ

(Ձեռք խփելով իրանց սուրբին)

Մեր երկրի, մեր կի՛ն ու դաւակների
Համար կանգնած ենք:

ԲԷՍԷԼՄԱՆ (մտնում է շրջանի մէջ):

Լաւ մտածեցէք,

Առաջ քան թէ դուք սրին կըղիւմէք.
Գուք խաղաղութեամբ կարող էք վճռել
Բանը կայսրի հետ: Հարկաւոր է միայն
Ասել մի հատ խօսք և հաճոյանալ
Կըսկսեն ձեզ այն բռնակալները,
Որոնք այժմ խիստ նեղացնում են ձեզ:
— Համաձայնեցէք ընդունել, ինչ որ
Նորա շատ անդամ առաջարկել են.
Կարեցէք կապը կայսերութեան հետ,
Եւ Աւստրիայի հպատակ դառէք:

ԱՌԻՑ ԴԷՌ ՄԱՌԻԷՐ

Այս ի՛նչ է առում քահանան: Պիտի
Մենք Աւստրիայի հպատակ դառնանք:

ԱՄ ԲԻԻՀԷԼ

Մի լսէք նորան:

Վ.ԻՆԱԿԷԼՐԻԴ

Ա. յդ խորհուրդ տուողը
Գաւաճան է և աղգի թշնամի:

ԲԷԳԻՆԳ

Հանդարտ, մի շփոթութիւնք:

ՍԷՎԱ

Ա. յսքան նախատինք

Կրեղուց յետոյ, պիտի ծունկ չոքենք
Աւտարիայի առանջ:

ՖՅՆ ԳԷՌ ՖԼԻԻԶԷ

Պիտի բռնութեամբ

Խլեն մեղանից, ինչ որ քաղցրութեամբ
Չկարացին ստանալ:

ՄԷՅԷՐ

Ա. յն ժամանակ մենք

Արժանի կլինինք սարուկներ լինելու:

ԱՌԻՖ ԳԷՌ ՄԱՌԻԷՐ

Թո՛ղ մերժուած լինի այնպիսին մեղնից,

Ով հպատակուիլ ուզէ Աւտարիային:

— Պարո՛ն նախագահ, ևս պահանջում եմ,

Որ այս առաջին օրէնքը լինի:

ՄԷԼԻԹԱԼ

Թո՛ղ այդպէս լինի: Ով հպատակուիլ

Ուզէ Աւտարիային, այնպիսին զրկուի

Իրաւունքներից և պատուից, նորան

Ոչ մի գիւղացի չընդունէ իւր տուն:

ԲՈՒՈՐԸ

(Բարձրացնում են աջ ձեռք:)

Համաձայն ենք, թող դա օրէնք լինի:

ՐԷԳԻՆՑ

(Կարճ լուսթեանից յետոյ):

Ա յն, օրէնք է:

ՐԷՍԷԼՄԱՆ

Ա յժմ ազատ էք

Գուք այդ օրէնքով: Եւ հիմա Աւստրիան

Կարող չէ խլել բռնութեամբ, ինչ որ

Չըկարողացաւ ստանալ քաղցրութեամբ: —

ԻՍՍ ՖՅՆ ՎԷՅԼԷՐ

Շարունակեցէք:

ՐԷԳԻՆՑ

Բայց, դաշնակիցներ,

Արդեօք փորձել ենք բոլոր միջոցներ:

Գուցէ տեղեակ չէ այս բանին արքան.

Նորա կամքով չենք հաշածվում այսքան:

Առաջ քան թէ սուր կառնենք մեր ձեռք,

Պիտի դործ դնենք վերջին հնարը,

Մեր իրաւացի դանդաատը հասցնենք

Նորա ականջին: Արդար դործուն էլ

Միշտ սարսափելի է բռնութիւնը:

Ա յն ժամանակ միայն կօզնէ մեզ Աստուած,

Երբ էլ չեն ուզի օգնել մեզ մարդիկ:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ (Կօնրադ Հոնին):

Հիմա քո հերթն է, խօսիր, թող լսեն:

ԿՕՆՐԱԴ ՀՈՒՆ

Ես դնացի Րէյնֆելդ կայսրի պալատը,

Կուսակալների հաշածանքի դէմ

Գանդատ անելու և ազատութեան

Թուղթը ստանալու, որ իւրաքանչիւր

Նոր ընտրած արքան միշտ հաստատել է:
Ես տեսայ այնտեղ շատ տեղից եկած
Պատգամաւորներ—Շվարիայից և
Բէյնի ափերից: Նորա բողոքն էլ
Ըստացան իրանց մազադաթները
Եւ ուրախ ուրախ դարձան տները:
Ինձ, ձեր նուիրակին, նախարարների
Մօտ ուղարկեցին, և նորա դատարկ
Մխիթարանքով ինձ արձակեցին.
«Այս անգամ կայսրը ժամանակ չունի,
«Նա ուրիշ անգամ կըմտածէ մեզ վրայ:»
—Եւ երբ ես տրտում անց էի կենում
Շքեղ պալատի դահլիճների մէջ,
Տեսայ դուքս Հանսին արտասուք աչքում
Կանգնած էր լալով պատշկամբի մէջ,
Եւ նորա կողքին Վարա և Տէգէրֆէլդ
Աղնիւ պարոններն: Նորա կանչեցին
Ինձ ու ասացին: «Ինքներդ տեսէք
«Ձեր գլխի ճարը, կայսրից մի սպասէք
«Դուք արդարութիւն: Տէսէք, ինչպէս նա
«Իւր եղբորորդուն դրկումէ անս
«Եւ խլում նորա ժառանգութիւնը:
«Դուքսը խնդրումէ իւր մայրականը,
«Ստելով, որ նա հասակն առել է
«Եւ ժամանակ է արդէն, որ ինքն էլ
«Մարդ ու երկիրներ սկսէ կառավարել:
«Բայց ինչ ստացաւ նա: Մի ծաղկապսած
«Դրեց նորա գլխին կայսրը ու ասաց.

«Անն այս է դարդ պատանեկութեան:

ՍՈՒՅ ԳԷՌ ՄԱՌԻԷՐ

Անն լսեցիր: Կայսրից մի սպասէք

Ոչ իրաւունք և ոչ արդարութիւն:

Ինքներդ տեսէք ձեր դիխի ճարը:

ԲԷԳԻՆԳ

Ուրիշ հնար չըկայ: Այժմ խորհուրդ տուէք,

Թէ ինչպէս բարի վախճան տանք գործին:

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ (մտնում է շրջանի մէջ)

Մենք կամենում ենք դէն ձգել մեզնից

Ատելի լուծը: Իրաւունքները,

Որոնց ժառանգել ենք մեր պապերից,

Կամենում ենք միշտ անփոփոխ պահել,

Եւ ոչ թէ անսանձ նորեր պահանջել:

Թող մնայ կայսրին, ինչ որ կայսրինն է.

Ով մի տէր սէնի, ծառայէ նորան:

ՄԷՅԷՐ

Եւ հողեր ունիմ ստացած Աւարիայից:

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ

Դու շարունակիր ծառայել նորան:

ԻՕՍ ՖՕՆ ՎԷՅԼԷՐ

Ես հարկ եմ տալիս Քօն Բապպէրավէյլին:

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ

Կարող ես էլի հարկդ տալ նորան:

ԲԷՍԷԼՄԱՆ

Սուրբ Աստուածածնի վանքին Յիւրիխում

Պարտաւոր եմ ես:

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ

Դու էլ սուր վանքին,

Ինչ որ վանքինն է:

ՇՏԱՌԻՖԱԽԻՐ

Նա չունիմ ստացած

Ոչ ինչ այլ կալուածք, բայց տէրութեան:

ՎԱԼՏԻՐ ՖԻԻՐՍ:

Որ ինչ լինելու է, թող կատարուի,
 Բայց ոչ աւելի: Մենք կամենում ենք
 կուսակալներին իրանց մարդկանցով
 Քշել մեր երկրից, թէ հնար է առանց
 Արիւնհեղութեան: Թող տեսնէ կայսրը,
 Որ միայն կարիքն է ստիպել մեզ լինել
 Նորան անհնազանդ: Եւ երբ կըտեսնէ,
 Որ մենք մնում ենք չափ ու սահմանում,
 Գուցէ զսպէ նա իւր բարկութիւնը:
 Պատճառ իրաւամբ սէտքէ վախենալ,
 Մի ժողովուրդից, որ սուրը ձեռին
 Զսպում է իրան:

ՐԷԴԻՆԳ

Բայց այժմ ստացէք,

Ի՞նչպէս վերջացնենք: Թշնամին ձեռին
 Զէնք ունի բռնած, դժուար թէ հեռանայ
 Նա խաղաղութեամբ:

ՇՏԱՌԻՖԱԽԻՐ

Նա կըհեռանայ,

Երբ որ կըտեսնէ մեզ զինաւորուած .
 Ժամանակ չենք տայ, որ նա պատրաստուի:

ՄԻՅԻՐ

Խօսքով շատ հեշտ է, բայց դորժով դժուար:
 Երկու պինդ ամրոց կանգնած են այստեղ,

Որոնք բաւական ապահովութիւն
կըտան թշնամուն, թէ կայսրը ուղէ
Յարձակուել մեղ վրայ: Բարէրդն ու Սարնէն
Պիտի վեր առնուին, նախ քան թէ մի սուր
կըմերկացնուի երեք դաւառում:

ՇՏԱՌԻՅԱԽԻՐ

Եթէ ուշացնենք այդքան ժամանակ,
Գուցէ զգաստացնեն թշնամուն, սլատճառ
Շատ մեծ է թիւը մասնակիցներին:

ՄԷՅԷՐ

Մեր սարերի մէջ չըկայ դաւաճան:

ԲԷՍԷԼՄԱՆ

Բարի եռանդն էլ կըդաւաճանէ:

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ

Թէ որ ուշացնենք, բերդը կաւարտեն
Ալտօրֆում, ֆոխար կամրանայ մէջը:

ՄԷՅԷՐ

Դու մտածում ես միայն ձեզ համար:

ՏԻՐԱՅՈՒՆ

Դու անիրաւ ես:

ՄԷՅԷՐ (տաքացած):

Ես անիրաւ եմ:

Ուրին այդ ասել համարձակվում է:

ԲԷԴԻՆԳ

Լուցէք:

ՄԷՅԷՐ

Այո, երբ Շվիցն ու Ուրին
Խօսքը մին կանեն, մենք պիտի լուենք:

ՐԷԴԻՆԴ

Ես քեզ յայտնում եմ ժողովի առաջ,
Որ դու քո սաստիկ բնաւորութեամբ
Խանդարում ես մեր խաղաղութիւնը:
Մի՛թէ մի և նոյն դործի համար չենք
Բողորս էլ կանդնած:

ՎԻՆԿԵԼՐԻԴ

Եթէ յետ ձգենք

Մինչև մեր փրկչի ծննդեան տօնը,
Սովորութիւն կայ, որ ամեն տանից
Ընծայ են տանում Ֆօխտի ամրոցը.
Այսպէս կարող են ժողովի վեկ այնտեղ
Տաս, տասներկու մարդ, որոնք կունենան
Սրածայր երկաթներ թաքցրած շորի տակ.
Եւ շուտ կըցցեն փայտերի վերայ:

— Պատճառ որ ղէնքով ոչ ոք կարող չէ
Մանել ամրոցը: — Իսկ նոյն միջոցին
Մօտիկ անտառում կանդնած կըլինի
Մեծ խումբը, և երբ առաջինները
Բաղդաւորութեամբ կըտիրապետեն
Պարսպի դռանը, փող կըհնչեցնեն,
Եւ կըյարձակուեն նորա անտառից:
Այսպէս հեշտութեամբ կըտիրենք ըերդին:

ՄԷԼԻԹԱԼ

Ես յանձս եմ առնում կտարել Բօսրէրդը.
Այնտեղ մի աղջիկ հետս շատ լաւ է,
Եւ հեշտ է նորան յիմարացնել,
Որ գիշերային տեսութեան համար

Յաժ թողնէ բարձրից բարակ սանդուխտը:
Եւ երբ ես արգէն վերեր կըլինեմ,
Ընկերներիս էլ վերե կըտանեմ:

ԲԵՂԻՆԳ

Բողոքի կամքն է, որ յետաձգուի:

(Մեծ մասը բարձրացնում են ձեռները:)

ՇՏԱՌԻՖԱԽԵՐ (համարում է ձայները:)

Քսանն համաձայն են, տաններկուսը չէ:

ՎԱԼՏԵՐ ՖԻԻՐՍ

Մըր նշանակած օրը բերդերը

Կընկնեն մեր ձեռը, կըրակ կըվառենք

Սարերի գլխին և ծուխով միմեանց

Խմացում կըտանք: Ժողովուրդը շուտ

Կըղինաւորուի և կըժողովի:

Ամեն գաւառի գլխաւոր տեղում:

Եւ երբ ֆոխտերը կըտեսնեն մեզ պատրաստ,

Հաւատացէք, որ կհեռանան կռուից,

Եւ ուրախ կլինեն, թէ թոյլ տանք նոցա

Անփառ հեռանալ մեր սահմաններից:

ՇՏԱՌԻՖԱԽԵՐ

Միայն Գէտլերի հետ դժուար է բանը:

Նա լաւ պատած է թիկնապահներով:

— Արիւն չըթափած, չի հեռանայ նա,

Եւ արտաքսուած էլ երկիւղալի է,

Նորան խնայել վտանգալի է:

ԲԱՌԻՄԳԱՐՏԵՆ

Ինչ տեղ վտանգ կայ, ինձ ուղարկեցէք:

Տէլիս պարտական եմ ես իմ կեանքը,

Պատրաստ եմ ընդել զոհ հայրենիքին:

Ես պաշտպանեցի իմ տան պատիւը,
Եւ հանդարտեցրի վրդովված սիրտս:

ՐԷԴԻՆԳ

Ժամանակն ինքը ցոյց կըտայ բանը.
Մենք էլ համբերենք, տեսնենք, ինչ կլինի:
— Բայց տեսէք ահա, այն ինչ մենք այստեղ
Խորհուրդ ենք անում, արդէն ներկում է
Առաւօտը իւր սակէ գոյներով
Բարձր սարերը: — Եկէք բաժանուենք,
Մինչդեռ արևը դեռ չէ բարձրացել:

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ

Մի շտապէք, մութը շուտ չէ հեռանում
Այս խոր ձորերից:

(Բոլորը ահամայ վեր են ստել դղակները և լուսթեամբ
նայում են արշալուսին:)

ՐԷՍԵԼՄԱՆ

Այս լուսով, որ մեզ

Բոլոր ազգերից, որ քաղաքնեցի
Գոլորշիքի մէջ ապրում են ծածուկ,
Ամենից առաջ ողջոյն է տալիս,
Եկէք այս լուսով երդուենք երդումը
Այստեղ հաստատած նոր դաշնակցութեան:
— Մենք կլինինք ՚ի ազգ, ողջս էլ եղբայրներ,
Եւ ոչ մի վտանգ չի բաժանի մեզ:

(Բոլորը կրկնում են այ՛ խօսքերը բարձրացնելով երեք մատը:)

— Մենք կլինենք ազատ մեր պատերի պէս,
Կըմնուենք, քան թէ ստրուկներ կըղառնանք:
(Ինչպէս վերև:)

— Միայն Աստուծոն մենք կապաւինենք,

Եւ չենք վախենայ կրքէք ոչ որ ից :
(Ինչպէս վերեր: Չխղատցիները գրկումեն միմիանց:)

ՇՏԱՌԻՅԱԽԵՐ

Այժմ ամեն մինը հանդարտ գնայ իւր տուն

Իւր բարեկամ ու ընկերների մօտ:

Հովիւը խաղաղ ձմեռէ իւր հօտով

Եւ բարեկամներ ճարէ մեղ համար:

— Մինչ այն ժամանակ ինչ որ պատահի,

Ողջ համբերեցէք: Թողէք մեծանայ

Բռնակալների հետ մեր հաշիւը,

Մինչև դայ մի օր, երբ բոլոր պարտքը

Նոցա միասին կը հատուցանենք:

Զսպեցէք արդար ձեր բարկութիւնը,

Պահեցէք վրէժը այն օրուայ համար.

Նա թշնամի է հասարակութեան,

Ով որ օգնում է միայն ինքն իրան:

(Այն ինչ նոքա ամենամեծ հանդարտութեամբ հեռա
նում են դանազան կողմեր, օրկեստրը սկսում է անել մի
հրաշալի եղանակ. դատարկ բէմը բաց է մնում մի քանի ժա-
մանակ և ցոյց է տալիս արևի ծագման տեսարանը սառցա-
պատ լեռների վրայ:)

ԵՐԲՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ



Մուսգին տեսարան:

Տէսի տան բակը:

Տ է Լ Լ, կայինը ձեռին աշխատում է, Ջ է Դ Վ, Ի Գ,
պարագած է մի տնային գործով, Վ Ս Լ Տ է Ր Է Վ, Ի Լ,
Ջ է Լ Մ, բակի վերջում խաղում են մի փոքր աղեղով:

ՎԱԼՏԵՐ (երգում է:)

Սար ու ձոր չափում է
Առաւօտը վաղ
Նետ ու աղեղ ձեռին
Որսորդը անվախ:

Առձիւր օղի մէջ
Թաղաւորում է,
Սար ու ձորերի մէջ
Որսորդն իշխում է:

Մինչև ուր հասնում է
Նորա նետը սուր,
Բոլորը նորանն է,
Գաղան, թևաւոր:

(Գալիա է վաղելով:)

Հայրիկ, տես, լարս կարուեց, շինիր:

ՏԵՂԼ

Չէ, թէ վարպետ ես, գնան ինքդ շինիր:

(Տղերքը հեռանում են:)

ՀԵՂՎԻԳ

Վաղ են տղերքը սկսում նետ ձգել:

ՏԵՂԼ

Փոքրից պիտ' վարժուին, որ վարպետ լինեն:

ՀԵՂՎԻԳ

Նրանի նորա այդ ջրավորեն:

ՏԵՂԼ

Նորա ամեն բան պիտի սովորեն:

Ով որ ապահով ուզում է ապրել,

Պիտի իմանայ իրան պաշտպանել:

ՀԵՂՎԻԳ

Ախ', նորա հանդիսա չեն ապրի տանը:

ՏԵՂԼ

Սիրելի կին իմ, ես էլ կարող չեմ:

Բնութիւնը հովիւ չէ ըստեղծել ինձ.

Իմ նպատակը փախչում է ինձնից,

Եւ ես պիտի միշտ վաղեմ ետևից:

Այն ժամանակ միայն կեանք եմ ճաշակում,

Նրա որ ամեն օր մի բան եմ որսում:

ՀԵՂՎԻՊ

Բայց չես մտածում, որ ան ու դողով
Կինդ սպասում է քո վերադարձին:
Ես սարսափում եմ, երբ ծառաները
Պատմում են միմեանց ձեր արկածները:
Քո ամեն գնալիս սիրտս դողում է
Կարծում եմ, թէ քեզ էլ տեսնելու չեմ,
Եւ ինձ թվում է, որ դու, մոլորուած
Չիւնով ու սառցով ծածկած սարերում,
Թռչում ես ժայռից միւս ժայռի վերայ:
Բայց ախ', անյաջող, կամ վայրի այծը
Իւր հետ գլորում է քեզ անդունդի մէջ,
Կամ քեզ ծածկում է ձիւնի զանգուածը,
Կամ կտորվում է տակդ առուցը,
Եւ դու, կենդանի թաղուած, ընկնում ես
Սոսկալի փոսը:— Ախ', յանդուգն ալպեան
Որսորդին մահը հազար մի տեսակ
Յափշտակում է: Թշուառ պարապմունք,
Որ միշտ տանում է անդունդի վերայ:

ՏԵՆԼ

Ով դգաստ իւր շուրջ նայում է առողջ
Չգայարաններով, ապաւինում է
Ատածուն և իւր յաջողակութեան,
Նա միշտ փորձանքից կազատէ իրան.
Սարը ահալի չէ նորան, ով որ
Մնել է սարի վրայ:
(Աւարտում է գործը և վեր է գնում դարձիքները):
Ա. յժմ կարծում եմ,

Որ տարիներով կըկանգնի դուռը,
Կացինը տանը, էլ հարկաւոր չէ
Հրաւիրել հիւանդին:

(Ղեր է սունտա գդակը.)

ՀԵՂՎԻԳ

Այժմ ուր ես գնում:

ՏԵՆԼ

Աչտօրֆ, հօրդ մօտ:

ՀԵՂՎԻԳ

Խոստովանիր ինձ.

Վատանդաւոր ինչ չունիս մաքումդ:

ՏԵՆԼ

Կին, ինչ պատճառով կասկածում ես դու:

ՀԵՂՎԻԳ

Կուսակալների դէմ բան են հնարում—

Քիւտլի վրայ թաքուն խորհուրդ են կապել.

Գիտեմ, որ դու էլ նոցա մէջ էիր:

ՏԵՆԼ

Ես այնտեղ չէի—բայց չեմ հրաժարուի,

Երբ որ կըկանչէ ինձ հայրենիքը:

ՀԵՂՎԻԳ

Ինչտեղ վտանգ կայ, քեզ կըկանգնեցնեն.

Ինչ որ դժուար է, քեզ անել կըտան:

ՏԵՆԼ

Ամեն միտից իւր կարողութեան չափ

Հարկ կըպահանջեն:

ՀԵՂՎԻԳ

Ունտէրվալդէնցուն

Փոթորիկի մէջ անցկացրիր ծովով—

Այդ մի հրաշք էր, որ դուք աղատուեցաք: —
Միթէ երեխանցդ ու կնոջդ վերայ
Չէիր մտածում:

ՏԵՂԼ

Սիրելի կին իմ,
Մտածում էի, այդ պատճառով էլ
Հօրը իւր որդոց համար փրկեցի:

ՀԵՊՎԱԳ

Նաւակով դնալ կատղած ծովի մէջ,
Այդ չէ թէ Աստուծոն ապաւինել է,
Այլ նորան փորձել:

ՏԵՂԼ

Շատ մտածողը
Քիչ բան կը շինէ:

ՀԵՊՎԻԳ

Հնա, դու բարի ես
Եւ միշտ պատրաստ ես օգնել ամենին,
Բայց երբ դու ինքդ կարիք ունենաս,
Ոչ ոք չի օգնի:

ՏԵՂԼ

Աստուած ոչ անէ,
Որ ես օգնութեան երբէք կարտում:
(Վեր է առնում աղեղը ու նետերը:)

ՀԵՊՎԻԳ

Աղեղն ինչ պէտք է: Թող մնայ այստեղ:

ՏԵՂԼ

Կուս պակաս է, երբ որ դէնք չունիւմ:
(Երեխերքը յետ կն դառլիս:)

ՎԱՆՏԵՐ

Հայր, ուր ես գնում:

ՏԵԼԼ

Աւտօրֆ պապի մօտ —
Կրդանս, որ տանեմ:

ՎՍԼՏԵՐ

Ի հարկ է կրդամ:

ՀԵՂՎԻԳ

Գէսլէրն այնտեղ է: Մի դնա Աւտօրֆ:

ՏԵԼԼ

Նա այսօր կ ե բ թ այ:

ՀԵՂՎԻԳ

Ուրեմն սպասիր,

Թող դեռ նա գնայ: Հեռու կայ նրանից:
Գլխուս, որ մեղ վրայ բարկացած է նա:

ՏԵԼԼ

Ինձ մնատ չի տայ նորա չար կամքը:

Ես օրէնքի դէմ մի բան չեմ անում,

Եւ չեմ վախենում ոչ ինչ թշնամուց:

ՀԵՂՎԻԳ

Նոյն իսկ նոցա է ատում նա սաստիկ,

Որոնք բարի ու արդար մարդիկ են.

ՏԵԼԼ

Պատճառ որ նոցա կարող չէ բռնել: —

Ինձ, կարծում եմ, որ նա հանգիստ թողն

ՀԵՂՎԻԳ

Դու կարծում ես այդ:

ՏԵԼԼ

Շատ ժամանակ չէ,

Որս էի գնացել վայրենի, անբնակ

Շէխնի ձորում, և երբ ես մենակ

Գնում էի մի ներդ լեռնաչափով,
Ուր միայն կարող է անցկենալ մի մարդ —
Պատճառը վերեր կախուած է սարը
Ուղիղ պատի պէս, իսկ Շէխէն դետը
Սաստիկ դռում է զածում ձորի մէջ —

(Տղերքը կանդնում են նորա աջ ու ձախ կողմը և մեծ ուշա-
դրութեամբ ականջ են դնում նորան։)

Տեսնեմ, իմ առաջ դայիս է ֆօխար,
Մենակ, ինչպէս ես, մի մարդ մարդու դէմ,
Եւ մեր կողքին էլ խորը անդունդը:
Եւ երբ նա տեսաւ ինձ ու ճանաչեց,
Որին մի ոչ ինչ պատճառի համար
Սաստիկ պատժել էր քանի որ առաջ.
Եւ տեսաւ ձեռիս պատուական դէնքը,
Գունաթափուեց նա, ծնկները թլաղան,
Եւ փոքր մնաց, որ վեր էր ընկնումս
— Խղճացի նորան և մեծ յարգանքով
Առաջ գնալով, ասացի. ես եմ,
Պարոն կուսակալ: Բայց նորա բերնից
Ծպտուն ջրսուեց:— Միայն լուռ ձեռով
Յոյց տուեց, որ ես հեռանամ գնամ:
Ես էլ հեռացայ և ուղարկեցի
Նորա մօտ նորա ուղեկիցներին:

ՀԵՂՎԻԳ

Նա վախեցել քեզանից — վայ քեզ,
Զի ների, որ դու նորան թոյլ տեսար:

ՏԵՂԼ

Ես էլ հեռու եմ կենում նորանից.

Յոյս ունիմ նա էլ չի որոնի ինձ:

ՀԵՂՎԻԳ

Այսօր հեռու կանց: Լաւ է որսի դնան:

ՏԵԼԼ

Կի՛ն, այդ ի՛նչ բան է:

ՀԵՂՎԻԳ

Վախենում եմ, մնան:

ՏԵԼԼ^ա

Բայց պատճառ չըկայ. դուր ես վախենում:

ՀԵՂՎԻԳ

Գորա համար իսկ, Տե՛ւ, կանց, մի՛ դնա:

ՏԵԼԼ

Ես խոստացել եմ, սիրելի՛ կի՛ն իմ:

ՀԵՂՎԻԳ

Խոստացել ես, դնան—բայց տղան թող մօտա:

ՎԱԼՏԵՐ

Չէ, մայրիկ, ես էլ հօրս հետ կերթամ:

ՀԵՂՎԻԳ

Վե՛լախ, մօրդ դու թողնում ես մենանկ:

ՎԱԼՏԵՐ

Քեզ համար լաւ բան կըրբերեմ պապից:

(Գնում է հօր հետ:)

ՎԵԼՃԵԼՄ

Մայրիկ, ես այստեղ կըմնամ քեզ մօտ:

ՀԵՂՎԻԳ

Հն, դու իմ տղան ես միայն դու մնում ես ինձ:

(Նա գնում է դէպի դուռը և երկար ժամանակ նայում է դնայ
ցողներին ետևից:)

Երկրորդ տեսարան:

Մի շորս կողմից փակած վայրենի
տեղ անտառով ծածկած, փրփրալից
վտակներ թափվում են ժայռերից:

Բ Է Ր Թ Ս, որսի շորերով և փոքրից յեռայ Բ Ո Ւ Դ Է Ն Յ:

ԲԷՐԹՍ,

Նա դալիս է, այժմ կըխօսեմ հետը:

ԲՈՒԴԷՆՅ

(Շտապով ներս է մտնում:)

Օրիորդ, հաղիւ մենակ դտայ ձեզ,
Անդունդներ միայն շուրջ պատում են մեզ,
Այս անտապատում վկաներ չըկան,
Թո՛ղ տուէք, վերջ տամ երկար լռութեան:

ԲԷՐԹՍ,

Հաւաստի էք, որ մեզ հետևում չե՛ն:

ԲՈՒԴԷՆՅ

Չէ, որսորդները մեզնից հեռու են:

—Այժմ, կամ ոչ երբէք: Այս վայրկեանը շատ
թանկ է ինձ համար:—Այտեղ եմ բաղղը
Պիտի վճրվի, թէ և յաւիտեան

Ջրկուեմ ձեզանից: — Ո՛հ, մի բարկութեամբ
Վառէք ինձ վերայ ձեր բարի աչքը: —
Ես ո՞վ եմ, ինչպէս յանդգնեմ նայել
Համարձակ ձեզ վրայ: Գեռ իմ անուներ
Չէ պսակուած վառքով, ես հաւատարուել
Կարող չեմ ուրիշ ասպետների հետ,
Որոնք, հռչակուած և երևելի,
Աշխատում են, որ ստանան ձեր շնորհը:
Ես ոչ ինչ չունիմ, բացի այս սրտից,
Հաւատարմութեամբ և ջերմ սիրով լի: —

ԲԻՐԹԱ

(Ծանրութեամբ և խտրութեամբ:)

Ի՞նչպէս կարող է հաւատարմութեան,
Սիրոյ վրայ խօսել, ով հաւատարիմ
Չէ իւր առաջին պարտականութեան:

(Բողոքնայր յետ է քաշվում:)

Աւարիայի ծառան, որ իւր խեղճ ազգի
Հալածողներին ծախել է իրան:

ԲՈՒԴԻՆՑ

Օրինորդ, ձեզնից լսում եմ ես այդ
Էլ ումն եմ պատում այնտեղ, թէ ոչ ձեզ:

ԲԻՐԹԱ

Գաւաճանութեան կոզմն էք պատում ինձ:
Լաւ է կրնձայեմ ձեռ Գէսլերին,
Քան թէ Շվեյցի դաւաճան որդուն,
Որ նորա ձեռին դործիք կրդառնայ:

ԲՈՒԴԻՆՑ

Ո՛հ, Տէր Աստուած իմ, ինչեր եմ լսում:

ԲԻՐԹԱ

Ո՞վ աւելի մօտ է բարի մարդուն,
 Քան թէ նորա ազգակիցները:
 Կայ աւելի մեծ պարտականութիւն
 Ազնիւ և զգացող մի սրտի համար,
 Քան թէ պաշտպանել անմեղութիւնը
 Եւ իրաւունքը հալածուածներին:
 — Սիրտս այրւում է ձեր ազգի համար,
 Նորա ցաւերին մասնակից եմ ես,
 Պատճառ որ հոգւով սիրում եմ նորան,
 Որ շատ համեատ է, բայց լի գօրութեամբ,
 Նա բողբոլին գրաւել է սիրտս,
 Եւ որ ըստ օրէ սկսում եմ նորան
 Աւելի յարդել: — Սակայն դուք, որին
 Ինտթիւնը և ձեր ասպետական
 Պարտականութիւն՝ նրան պաշտպանելու
 Նշանակել են, դուք անօգնական
 Թողնում էք նորան, դաւաճանում էք,
 Եւ անցկենալով թշնամու կողմը,
 Ձեր հայրենիքը լծի տակ թերում:
 Դուք էք, որ սիրտս վերաւորում էք.
 Պիտի ստիպեմ ինձ, որ շատեմ ես ձեզ:

ԲՈՒԳԻՆՑ

Չէ որ իմ ազգի լաւն եմ կամենում,
 Որ Աւարիայի դայիսոնի տակ
 Ուղում եմ նորան իրազաղութիւն տալ: —

ԲԻՐԹԱ

Չէ, դուք ստրկութիւն ուղում էք տալ նրան:

Աղատութիւնը արտաքսել վերջին
իւր սպաստանից, որ դեռ եւ ունի
Նա երկրի վերայ: Աղքն իւր օղտալ
լաւ է ճանաչում, նորան ոչ ինչով
Հնար չէ խաբել: Դուք միայն ձգել էք
Որոգայթի մէջ ձեր անձը:—

ԲՈՒԴԻՆՅ

Բէրթա,

Դուք ինձ ատում էք, արհամարում էք:

ԲԷՐԹԱ

Լաւ էր, եթէ որ կարողանայի—
Բայց արհամարհած, արհամարելի
Տեսնել նրան, որին ուզում ես սիրել:—

ԲՈՒԴԻՆՅ

Ո՛հ, Բէրթա, Բէրթա: դուք մի վայրկենում
Երկինքն էք տանում ինձ ու վեր ձգում:

ԲԷՐԹԱ

Չէ, բողբոլին խեղդուած չէ ձեր մէջ
Աղնիւ զգացմունքը, այլ միայն քնած:
Ես կըղարթեցնեմ: Միայն բռնութեամբ
Կարող էք սպանել դուք ձեր բնատուր
Աւարիտութիւն: Բայց երանի ձեզ,
Որ նա աւելի զօրեղ է ձեզնից,
Եւ դուք ազամայ բարի, աղնիւ էք:

ԲՈՒԴԻՆՅ

Ո՛հ Բէրթա, դուք դեռ հաւատում էք ինձ:
Չեր սէրը կրկին կընորոգէ ինձ:

ԲԷՐԹԱ

Վարուեցէք վսեմ ձեր կոչման յարմար,

Բնութենից ցոյց տուած տեղը բռնեցէք,
Սիրեցէք ձեր ազգն ու հայրենիքը
Եւ պաշտպանեցէք սուրբ իրաւունքը:

ԲՈՒԴԻՆՅ

Աւանդ էլ ինչպէս պիտի ձեզ ստանամ,
Եթէ ես կայսրին անհնազանդ դառնամ:
Չէ որ ձեր զօրեղ ազգականները,
Ումը կամենան, կրտան ձեր ձեռը:

ԲԷՐԹՍ.

Իմ կալուածները բոլորն այստեղ են,
Ազատ Շվեյցու՛մ ես էլ ազատ եմ:

ԲՈՒԴԻՆՅ

Ո՛հ, ինչ հրաշալի միտք էք տալիս ինձ:

ԲԷՐԹՍ.

Աւատրիայի շնորհով մի յուսաք երբէք
Ստանալ իմ ձեռը: Նա կամենում է
Տիրապետել իմ ժառանգութեանը
Եւ միաւորել իւր տէրութեան հետ:
Մի և նոյն քաղցը աշխարհառութեան,
Որ ըսպանում է ձեր ազատութեան,
Սպանում է և ինձ: — Ո՛վ իմ բարեկամ,
Ես դո՛հ եմ ընտրած, որով դուցէ իւր
Սիրելիներից մինին վարձատրել
Միտք ունի կայսրը: — Ինձ դէպի պալատ
Ուղում են տանել, ուր խաբէութիւն
Եւ նենգութիւններ վաղուց բնակում են:
Ա յնտեղ ատելի ինձ ամուսնութեան,
Գիտեմ, սպասում են ամուր կապերը.

Ինձ կարող է միայն փրկել — ձեր սէրը՝

ԲՈՒԴԻՆՅ

Դուք համաձայն էք այստեղ ապրելու,
Իմ հայրենիքում իմը վինելու:
Ո՛հ, Բէրթա, ինչն էր ինձ հեռու քաշում,
Թէ ոչ միայն դուք՝ Ձեզ էի պառում,
Ձեզ միայն փառքի ճանապարհի վրայ,
Փառասիրութիւնս էր միայն իմ սէրը:
Եթէ դուք կրմնաք ինձ հետ միասին
Այս խաղաղ հովտում աշխարհից հեռու —
Ո՛հ, ես հասել եմ իմ նպատակին:
Այն ժամանակ թող այս սարերի դէմ
Վաղեն աշխարհի փոթորիկները —
Ես էլ սրտիս մէջ մի հատ իղձ չունիմ —
Այն ժամանակ թող այս պինդ ժայռերը
Շրջապատեն մեզ պարիսպների պէս,
Եւ այս երջանիկ հովիտը փակած,
Թող դէպի երկինք միայն վնի բաց՝

ԲԻՐԹԱ

Սիրտս այդպէս էր քեզ երևակայում.
Ուրախ եմ, որ ինձ յոյսս չըխաբեցի:

ԲՈՒԴԻՆՅ

Հեռու ինձանից, խաբէբայ ցնորք,
Ես այստեղ պիտի իմ բազդը դռնեմ:
Ուր ես երեխայ ուրախ մեծացայ,
Ուր ինձ պատում են քաղցր յիշատակներ,
Ուր ամեն աղբիւր և ամեն մի ծառ
Սերելի են ինձ, իմ հայրենիքում

Համաձայնում ես խմբ լինելուս
Ա՛խ, զգում եմ, որ միշտ սիրել էմ նորան :
Սէրդ էր միայն պակաս իմ երջանկութեան :

ԲԵՐԹԱ

Ի՞նչտեղ կըզանենք երջանիկ կողին,
Թէ ոչ այս մարտը, անարատ երկրում,
Որ բնակարան է հաւատարմութեան,
Ուր դեռ չէ մտել խարէութիւնը :
Այտեղ նախանձը պղտորելու չէ
Երբէք աղբիւրը մեր երջանկութեան,
Եւ ուրախ կանցնեն միշտ մեր օրերը :
— Արդէն առաջուց տեսնում եմ ես քեզ,
Որ դու զարդարուած, որպէս իսկ տղամարդ,
Բոլոր գեղեցիկ յատկութիւններով
Եւ առաջինը ազատների մէջ,
Ամենից անկեղծ սիրած ու յարգած,
Գործ ես կատարում մեծ և փառաւոր,
Ինչպէս մի արքայ իւր տէրութեան մէջ :

ԲՈՒԳԷՆՑ

Գու, բոլոր կանանց թաղն ու պակը,
Քո ճորհալի կառավարութեամբ
Տունս ինձ համար երկինք կըշինես,
Եւ ինչպէս դարունքը ծաղիկներով
Գեղեցկացնում է բոլոր երկիրը,
Նմանապէս էլ դու անոյշ քաղցրութեամբ
Կըզարդարեա իմ երկրաւոր կեանքը :
Եւ նոր կեանք կըտաս քո շուրջ ամենին,
Ամենքը քեզնով կըբաղդաւորուին :

ԲԷՐԹԱ.

Տես, ինչի էի տխրում, բարեկամ,
Երբ տեսնում էի, որ ինքդ ես քանդում
Այդ ամենամեծ մարդկային բաղդը:
— Աւանդ, ինչ կլինէր իմ ճարը, եթէ
Ստիպուած լինէի հետեւել դուռդ
Ասպետին դէպի նրա մութը ամբողջ:
— Այստեղ չըկայ ամբողջ և ոչ ինչ պարիսպ
Բաժանում չէ ինձ մի ժողովուրդից,
Որին կարող եմ ես բաղդաւորել:

ԲՈՒԴԷՆՑ

Բայց ինչպէս վրկեմ ես այժմ իմ անձը—
Ինչպէս աղատուեմ այն պինդ կապերից,
Որոնցով ինքս կապուեալ եմ ինձ.

ԲԷՐԹԱ.

Կտրախր նոցա ինչպէս քաջ տղամարդ,
Եւ ինչ որ կուզէ դուրս գայ դորանից,
Գու չըհեռանաս երբէք քո ազգից,
Պատճառ այդ է քո ընական տեղը:
(Հեռուից լսվում է որսորդների վողերի հնչիւնը:)

ԲԷՐԹԱ.

Ահա գալիս են մեր որսորդները:—
Գնա՛ շուտ, հիմա մենք պիտի բաժանուենք:—
Կուտի՛ր քաջութեամբ քո երկրի համար,
Նոյն է թէ ասեմ քո սիրոյ համար:
Թշնամին մի է, թէ ձերը, թէ իմ.
Չկը ազատութեամբ ես էլ կազատուիմ:

(Գուրս են դնում:)

Երրորդ տեսարան:

Կանաչ դաշտ Այսորֆի մօտ:

Առաջը ծառեր, ետևում գդակը մի վայտի վրայ: Տեսա-
լանը սահմանափակում է բանբէրդ սարով, որի ետևից
բարձրանում է մի ձիւնառատ լեռան:

Ֆ Ր Ի Ս Հ Ա Ր Գ Տ Լ Է Յ Տ Հ Օ Լ Դ պահապանն են կանգնած:

ՖՐԻՍՀԱՐԳՏ

Ի դուր կանգնած ենք: Մի մարդ չէ դալիս
Գդակին գլուխ տալու: Առաջ միշտ այստեղ
Այնպէս էր, կարծես, տօնավաճառ է.
Այժմ անաստա է դարձել ողջ դաշտը,
Ինչ որ այս յիմար գդակը այստեղ է:

ԼԷՅՏՀՕԼԴ

Յետին ամբոխից միայն դալիս են
Սև վեր են թռցնում մաշած գդակները,
Իսկ նորա, որոնք օրինաւոր են,
Լաւ են համարում դաշտը պտտել,
Քան թէ մէջքը ծուկ գդակի առաջ:

ՖՐԻՍՏԱՐԴՏ

Նորա այստեղով պիտի անցկենան,
 Երբ յետ են դառնում խորհրդարանից՝
 Ես յոյս ունէի, որ լաւ որս կորսամ,
 Պատճառ նոցանից ոչ որ միտք չունէր
 Դղակին գլուխ տալու: Բայց մին էլ տեսնեմ,
 Եկաւ Րէսէլման քահանան — նա նոր
 Յետ էր գալիս մի հիւանդի մօտից —
 Եւ, սուրբ մասունքը ձեռի մէջ բռնած,
 Կանգնեց օղղակի նա փայտի առաջ —
 Եւ տիրացուն էլ սկսեց զանգակ տալ:
 Այստեղ բողբոն էլ ծունկ խոնարհեցրին,
 Ես էլ միասին, և ողջունեցին,
 Այ թէ գղակին, այլ մասնատուփին:—

ԼԵՅՏՃՕԼԴ

Գիտես, իմ ընկեր, ինձ այնպէս է թվում,
 Որ մենք կանգնած ենք այս գղակի առաջ
 Ինչպէս պատժուածներ: Մեծ նախասալինք է
 Չինուորի համար պահապան կանգնել
 Դատարկ գղակի մօտ — Այս պատճառով էլ
 Բողբո լաւ մարդիկ մեզ կարհամարհեն:
 — Դատարկ գղակի առաջ վիզը ծռել,
 Յիմար հրաման չէ, քեզ եմ հարցնում:

ՖՐԻՍՏԱՐԴՏ

Թէ դատարկ գլխին գլուխ ևս տալիս,
 Ինչի՞ չես կարող դատարկ գղակին:

Հ Ի Լ, Դ Ե Գ Ա Ր Դ, Մ Է Խ Թ Ի Լ Դ և Է Լ Ս Բ Է Տ մտնում են
 երեխանցով և կանգնում են փայտի շուրջ:

ԼԷՅՏՆՈՒԴ

Եւ դու էլ այնքան փուճ կենդանի ես,
 Ար միշտ պատրաստ ես փորձանքի բերել
 կտրիճ մարդկանցը: Թող ով ուզում է
 Գայ ու անցկենայ, աչքս կըխփեմ
 Եւ բան չեմ տեսիր:

ՄԷԽԹԻԼԴ

Տղերք, խելօք կայէք՝
 Տեսէք, լանդֆօխտը այստեղ կախած է:

ԷԼՍԲԷՏ

Երանի թէ դնար, գղակն այստեղ թողնէր,
 Առանց նորան էլ վատ չէինք ապրի:

ՖՐԻՍՏՐԴՏ (քշում է նոցա)

Կորէք, դնացէք, անխժած կանանք:
 Ձեզ ո՞վ է հարցնում: Թող ձեր մարդիկը
 Գան, թէ սիրտ ունին ֆօխտի հրամանին
 Ընդդէմ կենալու:

(Կանայքը գուրս են դնում)

Մտնում է Տ Է Լ Լ Ը մի ձեռին աղեղը, միւսը տուած խօր
 որդուն: Նաքա անց են կենում գղակի առաջ առանց նորա
 վրայ ուշադրութիւն դարձնելու և կանգնում են բեմի առաջ-

Ջակտղմի վրայ:

ՎԱՆՏԷՐ

(Ցոյց տալով բանբերդի վրայ:)

Հայր, ճշմարիտ է,
 Ար այն սարի վրայ արիւն է կաթում
 Ծառերից, եթէ մի մարդ կայնով առայ:

ՏԷԼԼ

Այդ ո՞վ է ասում:

ՎԱԼՏԵՐ

Հովիւն է պատմում: —

Նա ասում է, թէ ծառերը այնտեղ
Ողջ կախարդուած են, և ով որ նոցա
Մի մնաս կրտայ, երբ որ կըմեռնի,
Չեւը դուրս կըդայ գերեզմանիցը:

ՏԵՂԼ

Հն, կախարդուած են ծառերը, սուտ չէ:
— Տեսնում ես սպիտակ այն գաղաթները,
Որոնք համարեա երկիրն են համնում:

ՎԱԼՏԵՐ

Ա յդ սառուցներ են, որոնք գիշերը
Ա յնպէս գոռում են և ցած են գլորում
Չիւնի զանգուածներ:

ՏԵՂԼ

Ա յդպէս է: Եւ այն

Յած գլորուող ձիւնը վաղուց կըթաղէր
Իւր ծանրութեան տակ Ալտորֆ քաղաքը,
Թէ այն անտառը կանգնած չըլլնէր
Վերեր նրա դէմ ամուր պատի պէս:

ՎԱԼՏԵՐ (մի փոքր մտածելուց յետոյ):

Հայր, կան երկիրներ, ուր չկան սարեր:

ՏԵՂԼ

Եթէ ցած գնանք մեր բարձր սարերից,
Իջնենք ձորերը և, հեռուելով
Գետերի գնացքին, միշտ առաջ գնանք,
Կըհասնենք մի մեծ ու տափակ երկիր,
Ինչտեղ ջրերը էլ չեն փրփրում,

Գետերը հանդիստ ու հանդարտ հոսում,
Այնտեղ կարող ենք մենք ազատ նայել
Գէպի աշխարհի բոլոր կողմերը,
Մեծ դաշտերի վրայ վառած են արտերը,
Կարծես այդի է բոլոր երկիրը:

Վ.Ա.ՍԵՐ

Հայր, ինչի ապա չենք իջնում շուտով
Գէպ՝ այն գեղեցիկ երկիրը, քան թէ
Ա՜հ ու դողի մէջ տանջվում ենք այստեղ:

ՏԵՂԼ

Երկիրը բարի ու գեղեցիկ է,
Ինչպէս երկինքը, բայց նորա, որոնք
Մշակում են նրան, նորա կարող չեն
Վայելել իրանց քրանքի պատուը:

Վ.Ա.ՍԵՐ

Մի՞թէ նորա էլ ազատ չեն ապրում
Քեզ պէս սեփական իրանց հողի վրայ:

ՏԵՂԼ

Հողի տէրերն են եպիսկոպոսը
Եւ թագաւորը:

Վ.Ա.ՍԵՐ

Բայց անտառներում

Կարող են նորա ազատ որս անել:

ՏԵՂԼ

Անտառի որան էլ իւր տէրը ունի:

Վ.Ա.ՍԵՐ

Բայց ձուկ կարող են բռնել գետերում:

ՏԵՂԼ

Գետն էլ ու ծովն էլ թագաւորինն են:

ՎԱԼՏԻՐ

Թաղաւորն ուլ է, որ վախենում են
Բողորն էլ նրանից:

ՏԵՂԼ

Դա նա է, ուլ որ
Պաշտպանում է և կերակրում նոցա:

ՎԱԼՏԻՐ

Միթէ կարող չեն նոքա քաջութեամբ
Իրանց պաշտպանել:

ՏԵՂԼ

Ա յնտեղ հաւատալ
կարող չեն միմեանց հարեանները:

ՎԱԼՏԻՐ

Հայր, ինձ նեղ է թվում այն արձակ կրկրում,
Լաւ է կրմնամ սառուցների տակ:

ՏԵՂԼ

Ի հարկէ, որդեակ, լաւ է սառուցներ
Լինին քամակում, քան թէ չար մարդիկ:
(Նոքա ուղում են անցկենալ:)

ՎԱԼՏԻՐ

Հայր, տես այն դղակը, փայտի վրայ յցած:

ՏԵՂԼ

Գղակն ինչ փայթ է մեղ: Ա'կ առաջ գնանք:
(Ա յն ինչ նոքա ուղում են դուրս գնալ, Ֆրիսհարդար կարում է
նոցա ճանապարհը և դէմ է անում նիզակը:)

ՖՐԻՍՀԱՐԴՏ

Կայսրի անունով, կացէ՛ք, չըշարժուէ՛ք:

ՏԵՂԼ (քանում է նիզակը)

Ի՞նչ ես ուղում, ինձ ինչի ես բռնում:

ՖՐԻՍՆԱՏԻՏ

Դու անարգեցիր Փօխտի հրամանը,
Պիտի դաս մեզ հետ:

ԼԷՅՏՆՈՒԴ

Դու այս գղակին
Գլուխ չըտուիր:

ՏԵԼԼ

Եղբայր, թող զընամ:

ՖՐԻՍՆԱՐԳՏ

Դնա կորիք բանար:

ՎԱՍԵՐ

Հօրս բանա դնել:

Օգնութիւն հասէք:

(Չայն է տալիս բեմի կողմը)

Ո՛վ բարի մարդիկ,

Եկէք, օգնեցէք, հօրս տանում են:

Բ Է Ս Է Լ Մ Ա Ն քահանան, Պ Է Տ Է Ր Մ Ա Ն տիրացուն և
Երեք էլ սրիշ մարդ գալիս են:)

ՏԻՐԱՏՈՒՆ

Ի՞նչ կայ:

ԲԵՍԷԼՄԱՆ

Ինչի ևս այդ մարդուն բռնում:

ՖՐԻՍՆԱՐԳՏ

Սա թշնամի է կայսրին, դաւաճան:

ՏԵԼԼ (պինդ բռնում է նորան:)

Ե՞ս դաւաճան — Ես:

ԲԵՍԷԼՄԱՆ

Սխալում ևս, եղբայր:

Սա Վիլհելմ Տէլլն է, աղնիւ մարդ է և

Լաւ քաղաքացի:

ՎԱՆՏԷՐ

(Տեսնում է Վալտէր Ֆիւրստին և վաղում է նորա մօտ:)

Մեծ հայր, ո՛հ, օղնիր,

Հօրս տանում են:

ՖՐԻՍՏՆԵՐԻՏ

Գէհ, ի՛նչ ես կանգնել:

Շուտ, կորիր բանտը:

ՎԱՆՏԷՐ ՖԻՒՐՍՏ (շտապով առաջ դալով:)

Համբերեցէք, ես

Երաշխաւոր եմ:— Տէլլ, Աստուած սիրեա,

Ի՞նչ է պատահել:

Մ է Լ, Խ Թ Ա, Լ և Շ Տ Ա Ո Ի Ֆ Ա Խ Է Ր դալիս են:

ՖՐԻՍՏՆԵՐԻՏ

Սա կուսակալի

Իշխանութիւնը անարգում է և

Չէ ճանաչում:

ՇՏԱՈՒՖԱՆԷՐ

Ի՞նչ: Տէլլ այդ անէ:

Մ է Լ, Խ Թ Ա, Լ

Սուտ ես ասում, լիրք:

ԼԷՅՏՆՈՒՐ

Հն, նա զղակին

Չուղեց զլուխ տալ:

ՎԱՆՏԷՐ ՖԻՒՐՍՏ

Եւ դորա համար

Պիտի բանտը դնայ: Բարեկամ, խնդրեմ

Բաց թողէք դրան: Ես երաշխաւոր եմ:

ՖՐԻՍՏՆԵՐԻՏ

Քո զլխի համար երաշխաւոր կաց.

Մենք կտտարում ենք, ինչ որ մեր պարտքն է:—
ԳԷՏ. շնոր, արաջ դնան:

ՄԷԼԽԹԱԼ (դիպաղակներին:)

Անտանելի է:

Միթէ համբերենք, որ նորան տանեն
Մեր աչքի առաջ:

ՏԻՐԱՑՈՒՆ

Մենք շատ ենք թուով:

Չէ, բարեկամներ, թող չըտանք տանել:

Մենք պարտական ենք միմեանց պաշտպանել:

ՖՐԻՍՉԱՐԳՏ

Ո՞վ է դէմ կենում ֆոխտի հրամանին:

ԷԼԻ ԵՐԵՅ ԳԻԻՂԱՑԻ (զալիս են վազելով:)

Մենք կօղնենք, ինչ կայ: Չարդեյէք դոցա:
(Հիլդէգարդ, Մէլիթիլդ և Էլսթէտ յետ են դառնում:)

ՏԷԼԼ

Գնացէք, սիրելիք. ինքս ինձ կօղնեմ:

Միթէ կարծում էք, թէ նիդակներից

Ես կըլխախենամ, եթէ ուղենամ

Ոյժս դորժ դնել:

ՄԷԼԽԹԱԼ

ԳԷՏ, համարձակուիր

Տանել նրան մեղնից:

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ և ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Հանդարտ, մի շփոթուիք

ՖՐԻՍՉԱՐԳՏ (աղաղակում է:)

Ապրտամբու թիւն:

ՎԱՆԱՅԵ

Ֆոխտը գալիս է:

ՖՐԻՍՀԱՐԴՏ (բարձրացնում է ձայնը):

Ապատամբութիւն, շիւթ, խռովութիւն:

ՇՏԱՌԻՖԱԽԻՐ

Գռան, մինչև որ ճաքես, անպիտան:

ՐԷՍԷԼՄԱՆ և ՄԷԼԽԹԱԼ

Կըլուս, թէ չէ:

ՖՐԻՍՀԱՐԴՏ

(Կանչում է աւելի բարձր ձայնով)

Նկէք, օգնութիւն

Հասէք օրէնքի սպասաւորներին:

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ:

Փոխար դալիս է: Աւանդ, ինչ պիտի

Հիմա մենք անենք:

Գ Է Ս Լ Է Ր ձիով, ձեռի վրայ բաղէն նստած, Բ Ո Ւ Դ Օ Լ Ֆ

Դ Է Ռ Հ Ա Ր Ր Ա Ս, Բ Է Ր Թ Ա և Բ Ո Ւ Դ Է Ն Ց

Վե՞ծ բաղմութիւն ղինուողների, որոնք իրանց նիդակներով մի

չըջան են կաղմում բոլոր տեսարանի շուրջ:

ԲՈՒԴՕԼՖ ԴԷՌ ՀԱՐՐԱՍ

Հանապարհ տաւէք,

Հանապարհ ֆոխտին:

ԳԷՍԼԷՐ

Քչեցէք, դնան:

Ի՞նչ են հաւաքվում այստեղ: Այն ո՞վ էր

Օգնութիւն կանչում:

(Ընդհանուր լռութիւն:)

Ո՞վ էր, ասացէ՛ք:

(Ֆրիսհարդտին)

Այստեղ եկ, ո՞վ ես և ինչքի ես դու

Այս մարդուն բռնում:

(Ըստ տալիս է բազմին ծառաներից մինին:)

ՅՐԻՍՀԱՐԴՏ

Ողորմած տէր իմ,

Ես քո ծառան եմ, պահօտալանս կանգնած

Այստեղ դդակի մօտ: Այս մարդը չուզեց

Պատիւ տալ դդակին և քո հրամանին

Համաձայն սորանս ուղում էի, որ

կաշանաւորեմ. բայց ժողովուրդը

Բռնի խղում է սորանս մեր ձեռից:

ԳԵՍԼԻՐ

Այդպէս ուրեմն արհամարհում ես,

Տէլ, դու քո կայսրին և ինձ, որ այստեղ

Իշխումեմ նրա տեղ, որ դու չես ուղում

Պատիւ տալ դդակին, որ կախ եմ տուել

Հնազանդութիւնը փորձելու համար:

Գրանով ցոյց տուիր դու ինձ չար միտքդ:

ՏԵԼԼ

Ներիր ինձ, իմ տէր: Ակամայ միայն

Պատահեցաւ այդ, ոչ թէ դէպի քեզ

Արհամարհանքից: Ե՛ւ Տէլ չէր վնի

Անունս, եթէ իտե՛ն վնէի:

Խնդրում եմ ներել: Ես խտտանում եմ,

Որ ուրիշ անդամ էլ չի պատահի:

ԳԵՍԼԻՐ (կարճ լռութենից յետոյ:)

Դու մեծ վայրպետ ես նեւ ձգելում, Տէլ:

Ասում են քեզ պէս երկրորդը չըկայ:

ՎԱՍՏԻՐ ՏԵԼԼ

Այդ ճշմարիտ է, պարոն, իմ հայրը

Հարիւր քայլի վրայ խփում է խնձորին:

ԳԵՍԼԵՐ

Սա քո տղան է, Տէլ:

ՏԵԼԼ

Ա, յո՛ր, իմ պարոն:

ԳԵՍԼԵՐ

Շատ որդիք ունիս:

ՏԵԼԼ

Երկու տղայ, պարոն:

ԳԵՍԼԵՐ

Ո՞րին աւելի սրտով սիրում ես:

ՏԵԼԼ

Նորա հաւասար սիրելի են ինձ:

ԳԵՍԼԵՐ

Տէլ, որովհետև հարիւր քայլի վրայ

խփում ես խնձորին, ուրեմն իմ առաջ

Ա յատկապէս կըրտաս քո մեծ արհեսար:—

Վէր առ աղեղը:— Արդէն ձեռիդ է:—

Եւ շուտ պատրաստուիր քո տղայի դիմին

խփել խնձորին:— Բայց խորհուրդ կըրտամ,

Տես, լուսնի տակ, որ մի անգամով

խփես խնձորին: Պատճառ, թէ սխալուես,

Մահով կըրտամ:

ՏԵԼԼ

Ի՞նչ սարսափելի:

Միտք է այդ, տէր իմ:— Ես որդուս դիմին:—

Չէ, չէ, իմ պարոն, այդ քո միտքն է:—

Աստուած ո՛չ անէ:— Գու աղաչես մի բան

կարող չես երբէք պահանջել հօրից:

ԳԵՍԼԵՐ

Դու որդուդ գլխին կըխփես խնձորին:—
Ես այդ կամենում ու պահանջում եմ:

ՏԵՂԼ

Ես իմ սիրելի զաւակի գլուխը
Պիտի աղեղիս նպատակ դնեմ,
Լաւ է կրմեռնեմ:

ԳԵՍԼԵՐ

Հնա, կամ կըճղես,
կամ թէ որդուդ հետ միասին կրմեռնես:

ՏԵՂԼ

Ես պիտի սպանեմ սեփական որդուս:
Ո՛հ, պարոն, դու դեռ զաւակի տէր չես—
Չըզիտես, ինչն է շարժում հօր սիրար:

ԳԵՍԼԵՐ

Է՛յ Տէր, ինչ յանկարծ խելքդ գլուխդ կկտու:
Ինձ սակեմ, որ դու երազող ես
Եւ կեանք ես վարում առանձին տեսակ:
Դու շատ սիրում ես անսովոր բանը:—
Ս. յդ պատճառով էլ այժմ քեզ համար
Ընտրեցի մի նոր և համարձակ փորձ:
Ուրիշը քո տեղ շատ կըմտածէր,
Բայց դու, գիտեմ, որ խիստ աչքերով
կընդունես փորձը:

ԲԵՐԹՍ

Ո՛հ պարոն ասպետ,
կատակ մի անէք այս խեղճ մարդկանց հետ:
Տեսէք, թէ ինչպէս դունաթափուած են

Եւ դողդողում են:—Նորա սովոր չեն
Երբէք ձեր բերնից կատակներ լսել:

ԳԵՍԼԵՐ

Ո՞վ տասց ձեզ, թէ կատակ եմ անում:

(Ձեռք մեկնում է դէպի ծառի ճխղը, որ կախում է նորա վրայ:)

Ահա խնձորը: Ճանապարհ բացէք:—

Թող կանդնի, ինչանդ որ հարկաւոր է.

Ու թառն քայլ հեռու—բայց ոչ աւելի:

Եւ ոչ էլ պակաս:—Նա պարծենում էր

Հարիւր քայլի վրայ խփել մի մարդուն:—

Այժմ, ազնոյնաձիգ, ահա նպատակ.

Խփիր, չըսխալուես:

ԲՈՒԴՈՒՅ ԴԷՌ ՀԱՐՐԱՍ

Տէր Աստուած, բանը

Սասկանում է:—Շնու, այ տղայ, ծունկ չոքիր,

Պաղատիր ֆօխախն քո կեանքի համար:

ՎԱՆՏԵՐ ՖԻԲՍ

(Մի կողմը Սելլիսթալին, որ հազիւ դասում է խր ան համբե,
բուժիւնը:)

Ո՞՞՞ դասիր սիրտդ, ես քեզ խնդրում եմ:

ԲԷՐԹԱ

Հերիք է, պարոն: Անողորմ դործ է

Մի հօր երկիւղով այդպէս դուարձանալ:

Եթէ այս մարդը խր թեթե սխալով

Արժանի է, որ մահապարտ լինի,

Վկայ է Աստուած, որ նա տասն անգամ

Արդէն զգաց այսանդ մահու տանջանքը:

Թողէք անմեղան ցնայ իւր խրճիթը:
 Նա ձեզ ճանաչեց և չի մոռանայ
 Այս ժամը, ինչքան որ կենդանի է:
 ԳՆԱԿԻՐ

Ճանապարհ բացէք:— Շուտ, ինչ եւ սպասում
 կեանքդ իմ ձեռին է, ուզեմ կրտսեանեմ:
 Բայց տես, թէ ինչքան սղորմած եմ ես,
 Որ դնում եմ քո վարպետ ձեռի մէջ
 Ճակատադիրդ: Նա դանդառ անել
 կարող չէ երբէք սաստիկ վճռի դէմ,
 Որին շինում են տէր իւր բաղդի վրայ:
 Գու պարծենում ես քո հաստատ աչքով:
 Դէհ, աղեղնաձիւղ, ցոյց տուր շնորհքդ,
 Արժանաւոր է քո նպատակը,
 Բայց մեծ է նոյնպէս և մրցանակը:
 Սև կէտին խփել մի շրջանի մէջ
 Այդ հեշտ կարող են և օւրիշները,
 Նա է իսկ վարպետ, ով որ ամեն տեղ
 Հաւաստի է իւր արհեստի վերայ.
 Աչքը չի մթնի, սիրտը չի դողայ:

ՎԱՆՏԻՐ ՁԻԻՐՍՏ (ընկնում է նորա առաջ:)
 Ո՛վ տէր կուսակալ, մենք ճանաչում ենք
 Քո մեծութիւնը: Նս սղորմութիւն
 Խնդրում եմ քեզնից իրաւունքի տեղ:
 Վերառ ստաղուածքիս կէսը, բոլորը,
 Միայն այդ տանջանքը մի տայ խեղճ հօրը:

ՎԱՆՏԻՐ ՏԵՂԷ
 Մեծ հայր, մի չաքիւր նենդ մարդու առաջ:

Ասպէք, ինչպէսդ պիտի ես կանգնեմ:
Ես չեմ վախենում: Հայրս թռչունին
Խփում է օդում. նա սխալ չի նետի
Որդու սրտի դէմ:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Պարոն կուսակալ,
Միթէ չէ շարժում քեզ երեխայի
Անմեղութիւնը:

ՐԷՍԵԼՄԱՆ

Ո՛հ, մտածիր, որ
Ատուած կայ վերե, որին դու պիտի
Հաշիւ տաս երբեմն:

ԳԷՍԼԷՐ (ցոյց տալով տղայի վրայ):

Կապեցէք նորան

Ա յն ծառի վերայ:

ՎԱԼՏԷՐ ՏԵԼԼ

Ի՞նչ պիտի կապէք:

Չէ, ես չեմ ուզում: Հանդարտ կը կանգնեմ,
Ինչպէս մի դառը և շունչ չեմ քաշի.
Բայց թէ կը կապէք, ո՛հ, ես կը կռուեմ
Իմ կապերի դէմ:

ԲՈՒԴՕԼՁ ԳԷՌ ՀԱՐՐԱՍ

Աչքերդ միայն

Թող կապենք, այ տղայ:

ՎԱԼՏԷՐ ՏԵԼԼ

Աչքերս, ինչի:

Միթէ կարծում էք, թէ վախենում եմ
Ես իմ հօր նետից: Չէ, անթարթ աչքով

Կրօնապատեմ նորան:—Շնուտ, հանր, ցոյց տուր, որ
 Աղեղնաձիգ ետ: Նա չէ հաւատում
 Եւ ուղում է, որ ոչնչացնէ մեզ:—
 Հանր, ամաչեցրո՛ւ այս բռնակալին,
 Չգիր ու դիպցրո՛ւ:

(Նա դնում է և կանգնում է կակղի ծառի մօտ, մի խնձոր դնում
 էն նորա գլխին:)

ՄԷԼԽԹԱԼ (դիւղացիներին:)

Այս ի՞նչ է: Մի՞թէ
 Մեր աչքի առաջ պիտի կատարուի
 Այս սարսափելի դաղանութիւնը:
 Էլ ինչի համար էր, որ երդուեցինք:

ՇՏԱՌԻՖԱԽԻՐ

Ոչ ինչ կարող չենք: Մենք զէնքեր չունինք:
 Տեսնումես մեր շուրջ այն նիղակները:

ՄԷԼԽԹԱԼ

Երանի իսկոյն վերջացրել էինք:
 Թող Աստուած ներէ, ով խորհուրդ տուեց
 Ուշացնել բանը:

ԳԷՍԼԻՐ (Տէլին:)

Շնուտ արա, սկսիր:

Մարդ զուր տեղ պիտի զէնք չբանանածէ,
 Վտանդալի է, և յետ կըթռչի
 Նետը տիրոջ վրայ: Այդ իրաւունքը,
 Որ շինականը ինքնական իրան
 Սեփականումէ, վիրաւորում է
 Երկրի տիրոջը: Չըհամարձակուի
 Ոչ ոք զէնք կրել, բացի նորանից,

Ով որ իշխումէ: Բայց թէ սիրում էք
կրել ձեզ վերայ աղեղ ու նետեր,
Լնու, ես էլ կըտամ ձեզ նպատակներ:

ՏԵԼԼ

(Ղարումէ աղեղը և նետը դնումէ նորա վրայ:)
Ճանապարհ, հեռու:

ՇՏԱՌԻՖԱԽԻՐ

ՏԵԼԼ, ինչ ես անում,
Մի՞թէ ուզում ես—չէ, չէ, ոչ կրքէք:
Դու բոլոր մնարմնով սաստիկ դողում ես:

ՏԵԼԼ

(Վէր է թողնում աղեղը:)

Աչքս մի՞նում է:

ԿԱՆԱՅԻՐ

Ողորմած Սատուած:

ՏԵԼԼ (կուսակալին)

Տէր, ես չեմ կարող: Ահա իմ սիրտը:

(պատառում է իր կործքը:)

Հրամայիր, թող դան և ինձ սպանեն:

ԳԵՍԼԻՐ

Կեանքդ չեմ ուզում, այլ քո արհեստը:
—ՏԵԼԼ, դու ամեն բան կարող ես անել,
Գիտեմ դժուար չէ ոչ ինչ քեզ համար—
Լաւ բանեցնում ես դէկն էլ, աղեղն էլ,
Քեզ չէ վախեցնում ոչ ինչ փոթորիկ,
Երբ հարկաւոր է միմիկն աղատել:
Այժմ, ով աղատող, օգի՛ր ինքդ քեզ—
Դու բոլորին էլ քեզ հետ կաղատես:

(Տէլլը կանգնած է սաստիկ սրտերաղմի մէջ ինքն իրան հետ,
նորա ձեռները անդադար դողողողում ու ցնցւում են և նորա
բորբոքուող աչքերը ուղղած են երբեմն կուսակալի վրայ և
երբեմն դէպի երկինք: Յանկարծ ձեռը տանում է դէպի կապար-
ճը, հանում է մի երկրորդ նետ և սցում է խո դոտու մէջ:
Կուսակալը նկատում է նորա բոլոր շարժողութիւնները:)

ՎԱՆՏԻՐ ՏԵՂԼ

(Կակղի ծառի տակից:)

Հայր, ձգիր, ես չեմ վախենում:

ՏԵՂԼ

Ա. յ՛մ:

(Շուտ սրտաբաստում է և ուղղում է սղեղը:)

ԲՈՒԴԵՆՅ

(Որ բոլոր ժամանակ կանգնած էր ամենամեծ ակնկալու-
թեան մէջ և հաղիւ կարողանում եր դասել ինքն իրան, առաջ
է դալիս:)

Պարոն կուսակալ, հերիք է արդէն.

Վերջացրէք սնայ:— Ա. յԴ մի փորձ էր միայն:—

Դուք հասաք արդէն ձեր նպատակին:—

Անչափ խստութիւնն անօգուտ բան է.

Աղեղը, սաստիկ լարած, ճաքում է:

ԳԵՍԼԵՐ

Լուցէք, մինչև ձեզ բան կը հարցնեմ:

ԲՈՒԴԵՆՅ

Չէ, ես կը խօսեմ, իրաւունք ունիմ:

Կայսրի պատիւը թանկ է ինձ համար.

Սակայն այս տեսակ կառավարութիւն

Կարող է ծնել միայն ատելութիւն:

Կայսրի կամքը չէ, ինչ դուք անում էք:—

Ես կը հաստատեմ:— Ա. յԵ հալածանքին

Արժան չէ երբէք իմ ժողովուրդը,

Եւ ձեզ տուած չէ այդքան խաւունք:

ԳԻՍԼԻՐ

Համարձակվում էք:

ԲՈՒԳԻՆՑ

Ես լուում էի,

Տեսնելով այնքան անարդար դործեր.

Աչքերս խփում, վրդուված սիրտս

Ճնշում կուրծքիս մէջ, բայց և աւելի

Երկար լուռ կենալ կընշանակէր

Գաւաճանութիւն թէ հայրենիքիս

Եւ թէ կայսրի դէմ:

ԲԻՐԹԱ

(Ընկնում է նորա և կուսակալի մէջ):

Ո՛հ, Տէր Աստուած իմ,

Աւելի սաստիկ դռդուում ես դու

Այս կատաղածին:

ԲՈՒԳԻՆՑ

Ազգս թողեցի,

Հրաժարուեցայ իմ ազգականներից,

Քանզեցի բնութեան բոլոր կապերը,

Ձեզ հետ միացայ, կարծումէի, թէ

Կըրազգաւորեմ իմ ազգը, եթէ

Հաստատեմ կայսրի իշխանութիւնը:—

Այժմ իմ աչքերից վեր ընկաւ կապը:—

Ես սարսափելով տեսնում եմ անձս

Անդունդի վերայ:— Գուք մոլորեցրիք

Ազատ կարծիքս և իմ անխարդախ

Սիրտը խաբեցիք:— Փոքր մնաց, որ

Ինքս իմ ձեռով կործանեմ աղղս :

ԳԻՍԼԷՐ

Յանդուզն, անդպէս ևս խօսում տիրոջդ հետ :

ԲՈՒԴԷՆՅ

Կայսրն է իմ աէրը, ոչ թէ դու:—Նս էլ

Ազատ ևմ քեզ պէս և ասպետական

Առաքինութեամբ հաւատար ևմ քեզ :

Եթէ դու այտեղ կանգնած չլինէիր

Կայսրի վտխանակ, որին պատվում ևմ,

Թէև նրան այտեղ խայտառակում են,

Նս կը ձգէի քեզ իմ ձեռնոցը,

Որ ինչպէս ասպետ տաս ինձ պատասխան :

— Հն, կանչիր, թող դան քո գինուորները —

Նս անպաշտպան չեմ, ինչպէս որ ստքա —

(Յայց տալով ժողովուրդի վրայ:)

Ահն իմ սուրը, և ով մօտ կը գայ —

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ (ձայն է տալիս:)

Խնձորը ընկան :

(Այն ինչ ամենքը դարձել էին այս կողմը և ճերթան ընկել էր ընկնի և կուսակալի մէջ, ՏԷԼԸ արձակել է նետը:)

ԲԵՍԷԼՄԱՆ

Տղան կենդանի է :

ՇՏԱ ՉԱՅՆԵՐ

Խնձորին կպան :

(Ղալաէր Ֆիրսաղ տատանում է և վտր է մնում որ վեր ընկնի: ճերթան բանում է նորան:)

ԳԻՍԼԷՐ (ղարմարած:)

Ի՞նչ: միթէ ձգեց

Այն խեղազարը :



ԲԷՐԹՍ.

Տղանս կենդանի է,

Ուշքի եկ, իմ հայր:

ՎՍԼՏԷՐ ՏԵԼԼ

(Թռչնակով դալիս է խնձորը ձեռին):

Հայր, այն խնձորը: —

Գիտե՛ի, որ դու մնաս չես տայ որդուդ:

ՏԵԼԼ

(Կանգնած էր դէպի առաջ թեքուած մարմնով, կարծես թէ ուզում էր հետևել նետին — աղեղը վեր է ընկնում նորա ձեռից — երբ որ տեսնում է, որ տղան դալիս է, առաջ է վազում տարածած ձեռներով, վեր է թռչնում և սաստիկ ջերմերանդաթեամբ սխմում է նորան խոր կուրծքին, այս դրութեան մէջ վեր է ընկնում ուժաթափ: Ետորը կանգնած են շարժւած:)

ԲԷՐԹՍ.

Ո՛հ, բարի Աստուած:

ՎՍԼՏԷՐ ՖԻԻՐՍՏ (հօրը և որդուն):

Որդի՛ք, իմ որդիք:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Փնփր քեզ, Տէր Աստուած:

ԼԷՅՏՅՕԼԻՒ

Ա՛յ հարուած, որ և

Ապագայումը կը յիշեն մարդիկ:

ԲՈՒԴՕԼՖ ԴԷՆ ՀԱՐԲԱՍ

Անմուտայ կրմնայ Տէլլի անուներ,

Քանի որ հաստատ են այս սարերը:

(Տալիս է խնձորը կուսակալին:)

ԳԷՍԼԷՐ

Իրաւ խնձորը մէջ տեղն է ծակած,

Յաջողակ հարուած, ես ու իմ Աստուած :

ԲԻՍԵԼՄԱՆ

Հարուածը լաւն է, բայց վնջ ստիպողին,

Որ նա նորանով փորձեց Ստեղծողին :

ՇՏԱՌԻՅԱԽԻՐ

Տէւ, ուշքի եկ, Տէւ, վեր կաց դեանիցը :

Գու քեզ թափեցիր, ինչպէս քաջ տղամարդ,

Եւ աղատ դնալ կարող ես քո սուն :

ԲԻՍԵԼՄԱՆ

Եկէք, դնանք, տանենք որդուն իւր մօր մօտ :

(Նոքա ողում են նորան տանել) :

ԳԵՍԼԻՐ

Տէւ, լսիր :

ՏԵԼԼ (յետ է գալիս) :

Ի՞նչ ես հրամայում, իմ աէր :

ԳԵՍԼԻՐ

Դու մի երկրորդ նետ պահեցիր մօտդ :—

Հն, հն, ես տեսայ :— Այդ ինչ մտքով էր :

ՏԵԼԼ (շփոթուած) :

Տէր, այդպէս է մեր սովորութիւնը :

ԳԵՍԼԻՐ

Չէ, Տէւ, հաւան չեմ քո պատասխանին :

Նրեի այդ մի ուրիշ մտքով էր :

Ճշմարիտ խօսիւր, Տէւ, մի վախճնա,

Ինչ կուղէ վինի, կեանքդ ապահով է :

Ինչի համար էր այն երկրորդ նետը :

ՏԵԼԼ

Բարի է, իմ աէր, որովհետեւ դու

Ապահովումես իմ կեանքը—եւ քեզ

Աստուծոյ կատարեալ ճշմարտութիւնը:

(Նա հանում է գոտիկից նեւը և դարձուրելի հայեացքով
նայում է կուսակալի վրայ:)

Այս նկատով ես քեզ—կրասպանէի,

Եթէ սիրելի որդուս խփէի,

Եւ քեզ խփելիս—ձեռս չէր դողայ:

ԳԵՍԼԻՐ

Լաւ ես ասում, Տէլլ, կեանքդ ապահով է.

Ես քեզ խօսք տուի և կրկատարեմ—

Բայց որովհետեւ չար միտքդ խմացայ,

Ես կը հրամայեմ տանել ու պահել

Քեզ մի այնպէս տեղ, ուր ոչ արեղակ

Եւ ոչ էլ լուսին չես տեսնի երբէք,

Որ քո նկատելից ապահով լինիմ:

Բռնեցէք դորան, կապեցէք:

(Տէլլին կապում են:)

ՇՏԱՌԻՑԱԽԵՐ

Պարոն,

Այդպէս ես վարվում դու այս մարդու հետ

Որին ինքն Աստուած յայտնի պաշտպանեց:

ԳԵՍԼԻՐ

Տեսնենք միւս անգամ կրփրկէ արդեօք:

—Տարէք իմ նաւը, ես էլ դալիս եմ.

Իսկոյն ես ինքս կըրտանեմ Արամախատ:

ԲԵՍԵԼՄԱՆ

Չես համարձակուի, ո՛չ դու, ո՛չ կայսրը.

Այդ հակառակ է մեր ազատութեան

Հրովարտակներին:

ԳԷՍԼԷՐ

Ի նշտեղ են նորա:

Կայսրը հաստատեց: Նա չէ հաստատել:—

Այդ շնորհը պիտի առաջ վաստակէք

Ձեր հնազանդութեամբ: Դատաճաններ էք

Ողջդ էլ կայսրի դէմ և պատրաստում էք

Ապստամբութիւն: Ես ճանաչում եմ

Ձեզ—ինձ յայտնի են ձեր խորհուրդները:—

Այժմ ձեր միջից տանում եմ սորան,

Սակայն ամենքդ էլ դուք մասնակից էք

Սորա յանցանքին: Ով որ խեղք ունի,

Թող լուռ կենայ և միշտ հնազանդ լինի:

(Նա հեռանում է, բերթան, բողէնցը և ծառաները հեռանում են նորան: Ֆրիսհարդտ և Վէյտհօլդ մնում են:)

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ:

Հիմա տեսնում եմ, որ նա վճռել է

Ինձ տուն ու տեղով ոչնչացնելու:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ (Տէլլին:)

Ո՛հ ինչի էիր մին էլ դռդռում

Այն կատաղածին:

ՏԷԼԼ

Կարո՞ղ էր արդեօք

Իմ ցաւի տէրը զսպել իւր անձը:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Ո՛հ, այժմ ամեն բան կորսու ու դնայ.

Այժմ բոլորս էլ քեզ հետ կապուած ենք:

ԳԻԼՎԱՅԻՐ (պատում են նորան:)

Քեզ հետ տանում ես մեր վերջին յոյսը:

ԼԷՅՏՆՈՒԴ (մօտենում է նորան)

Տէլլ, ցաւում եմ—բայց պիտի հնազանդուեմ

ՏԵԼԼ,

Մնայք բարով:

ՎԱԼՏԷՐ ՏԵԼԼ,

Ո՛հ, հայր, հայր, սիրելի հայր:

ՏԵԼԼ,

(Բարձրացնում է ձեռները դեպի երկինք:)

Այնտեղ վերևն է հայրդ, նրան կանչիր:

ՏՏԱՌԻՖԱԽԻՐ

Տէլլ, քո կնոջը բան չասեմ քեզնից:

ՏԵԼԼ,

(Սաստիկ ջերմեռանդով ետևի սխմում է տղային իւր կուրծքին:)

Տղան կենդանի է. Աստուած կօղնէ ինձ:

(Շատ խախում է նորանից և դնում է գինուորների հետ:)

ՋՈՐՐՈՐԳ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՂ:



Առաջին տեսարան:

Ֆերվալդշտէդտէր լճի արևելեան
ափը:

(Զարմանալի ձևակերպած դառ ի վայր ժայռեր վազում են տեսարանը արևելեան կողմից: Ղիճը շփոթվում է, լափում է սաստիկ բառանջիւն և թնդիւն և մի և նոյն ժամանակ վայր լատակում է և որոտում:)

ԿՈՒՆՅ ՖՕՆ ԳԻՐԶԱՈՒ, ՉԿՆՈՐՍ և ՉԿՆՈՐՍԻ
ՏՂԱՆ:

Իմ աչքով տեսայ, հաւատա դու ինձ,
Որ ողջ այնպէս էր, ինչպէս ասում եմ:
ՉԿՆՈՐՍ

Տէւը գերի է տարած դէպ' Աիւանախոտ,
Այն ամենալաւ մարդը մեր երկրում,
Ամենակտրիճ կուռը, որ երբեմն

Կարող էր պէտք դալ մեր աղատութեան:

ԿՈՒՆՅ

Կուսակալն ինքը տանում է նորան

Նաւով ծովի վրայ: Նոր ուղում էին

Ճանապարհ ընկնել, երբ ես հեռացայ

Փլիւէլնից. սակայն փոթորիկը, որ

Ահա սկսում է և որ ինձ ստիպեց

Ափի վրայ դուրս գալ, կարելի է, որ

Նոյա գնալն էլ նոյնպէս խափանեց:

ՁԿՆՈՐՍ

Տէւը շղթայած ֆոխափ ձեռին է:

Ո՛հ, հաւատա, որ նա այնպէս խորը

Կըթաղէ նորան, որ լոյս չըտեսնէ:

Պատճառ իրաւամբ պիտի վախենայ

Այն աղատ մարդու արդար վրէժից,

Որին նա այնպէս սաստիկ վշտացրեց:

ԿՈՒՆՅ

Եւ աղնիւ պարոն Ատափնդհաուղէնը,

Ասում են, նա էլ հողեարք դրած է:

ՁԿՆՈՐՍ

Ուրեմն մեր յուսոյ վերջին խարիսխն էլ

Կտորվում է այժմ: Մենակ նա էր, որ

Ազգի իրաւունքը պաշտպանում էր:

ԿՈՒՆՅ

Մրրիկն աւելի սկսեց սաստկանալ:

Մնաս բարով, ձկնորս: Կերթամ օթեան

Կրպտում գիւղում, պատճառ այսօր էլ

Անկարելի է ճանապարհ ընկնել:

(գնում է)

ՁԿՆՈՐՍ

Տէլլը բռնած է, իշխանը մեռած:
Գլուխդ բարձրացրու, բռնակալութիւն,
էլ մի ամաչիր: Այժմ ճշմարտութեան
Բերանը փակ է, արթուն աչքը կոյր,
Եւ փրկող կուռը շղթայով կապած:

ՏՂԱՆ

Կարկուտ է դալիս, հայր, եկ տուն դնանք:
Դուրսը մնալը անկարելի է:

ՁԿՆՈՐՍ

Կատաղիր, մրրիկ, թռէք, կայծակներ,
Ճաքեցէք, ամպեր, թափեցէք երկնից
Հեղեղի գետեր, ծածկեցէք ջրով
Բողոր երկիրը. թող ոչնչանայ
Իւր մօր արդանդում գալոց սեռունդը:
Վայրենի տարրեր, աէր դառէք երկրին:
Արջեր ու գայլեր, եկէք բնակուեցէք
Մեծ անապատում. ձերն է երկիրը:
Էլ ո՞վ կուղենայ արդեօք այս երկրում
Ապրել, ուր չըկայ էլ աղօտութիւն:

ՏՂԱՆ

Լսիր, անդունդը ինչպէս է կատուել
Մրրիկը դուռում ու բառանջում է,
Գեռ այսպէս շփոթուած չեմ տեսել լիճը:

ՁԿՆՈՐՍ

Սեփական որդու զլխին նշան դնել
Նրբէք մի հօրից դեռ շեն պահանջել:
Միթէ բնութիւնը այդ բանի վերայ,

Սաստիկ զայրացած, պիտի չխռովի:—
Ո՛հ, ամենեին ես չեմ զարմանայ,
Եթէ ժայռերը թերուեն ծովի մէջ,
Եթէ սառցապատ այն դադաթները,
Որոնք աշխարհի առաջին օրից
Սառած կանգնած են, հալչեն, ցած գլորուեն,
Եթէ սարերը հիմքից կործանուեն.
Զորերը քանդուեն, երկրորդ ջրհեղեղ
Ծածկէ ու խեղդէ բոլոր երկիրը:

(Զանգակի ձայն է լսվում:)

ՏՂԱՆ

Զանգակի ձայն է լսվում ամբողջից.
Երևի մի նաև վտանգի մէջ է:
Զանգակ են տալիս, որ աղօթք անենք:
(Վերև է գնում մի բարձրութեան վրայ:)

ԶԿՆՈՐՍ

Վայնաւին, որ այժմ ճանապարհին է
Եւ օրօրվում է այս սարսափելի
Օրօրոցի մէջ: Այստեղ կարող չեն
Օգնել ոչ ղեկը, ոչ ղեկավարը.
Մերիկն է իշխան, հողմն ու ալիքներն
Իրանց խաղալիք շինել են մարդուն:—
Այնտեղ չորս կողմը չըկայ ոչ մի ծոց,
Որի մէջ գանէր նա պաշտպանութիւն:
Միայն վայրենի դառ ի վայր ժայռեր
Պատում են նորան, առաջարկելով
Իրանց ապառաժ, անզղայ կուրծքը:

ՏՂԱՆ

(Յոյց է տալիս ձախ կողմը:)

Հայր, տես մի նաւ է դալիս Ֆլիւէլնից:

ՋԿՆՈՐՍ

Աստուած ինքն օգնէ այն խեղճ մարդկանցը:
Թէ մին վեր կացաւ այստեղ մրրիկը,
Ապա կատղում է ինչպէս մի դաղան,
Որ աշխատում է կտարել վանդակը:
Նա բառանջելով պտուում է դուռը:
Բայց ի դուր, պատճառ չորս կողմից նորան
Սխմում են ժայռեր, որոնք մինչ երկինք
Պարիսպների պէս փակում են ձորը:

(Նա վերև է դնում բարձրութեան վրայ:)

ՏՂԱՆ

Հայր, հայր, այն նաւը կուսակալինն է:
Նս ճանաչում եմ դրօշակն ու կարմիր
Տախտակամածը:

ՋԿՆՈՐՍ

Ո՛վ արդար երկինք:

Հա՛, կուսակալն է դնում այնտեղ նաւով—
Եւ իւր յանցանքը տանում է իւր հետ:
Շուտ դտաւ նորան Աստուծոյ կուռը:
Հիմա իմացաւ, որ կայ իրանից
Հղօր մի իշխան: Այս ալիքները
Չեն լսում նորան և այս ժայռերը
Թեքում չեն նորա գդակի առաջ
Իրանց գլխները:— Աղօթք մի անիր,
Տղաս, դառաւորի կուռը մի բռնիր:

ՏՂԱՆ

Լանդֆօստի համար չեմ աղօթք անում,
Այլ Տէլի համար, որ նմանապէս
Այն նաւի վրայ է:

ՁԿՆՈՐՍ

Ո՛հ անմտութիւն
Կատաղած տարրի, միթէ դու պիտի
Մի մեղաւորին պատժելու համար
Կործանես նաւը և նաւավարին:

ՏՂԱՆ

Տես, տես, հայր, նոքա արդէն բաղդաւոր
Անց էին կացել Բ ու զ գ ի ս գ ը ա տ ի մօտ,
Սակայն մրրիկը, էլ՛ յետ վաղելով
Տ է յ Փ է լ ա մ ի լ ն ս տ է ը ի ց , նեառւմ է նոցա
Դէպի Ա.ք ս է ն ը է ը դ:— Այժմ էլ չեմ տեսնում:

ՁԿՆՈՐՍ

Այնտեղ կանգնած է Հ ա կ մ է ս ս է ը ժայռը,
Ուր խորտակուել են արդէն շատ նաւեր:
Եթէ յաջողակ չըկառավարեն,
Նաւը կըջարդուի այն ժայռի վերայ:
— Բայց նոքա շատ լաւ նաւավար ունին:
Տէլը կարող էր միայն վրկել նոցա,
Սակայն կապած են նորա ձեռները:

Վ Ի Լ Հ Է Լ Մ Տ Է Լ Լ (աղեղը ձեռին:)

(Նա դալիս է արագ քայլերով, դարմացած նայում է իւր
չորս կողմը և երևում է, որ սաստիկ շփոթուած է: Երբ որ դա-
լիս է բեմի մէջ տեղը, ընկնում է ծնկների վրայ և տարա-
ծում է ձեռները առաջ դէպի դեպին, յետոյ դէպի երկինք:)

ՏՂԱՆ (նկատում է նորան:)

Տես, հայր, այն ո՛վ է այնտեղ ծնկան վրայ:

ՉԿՆՈՐՄ

Նա երկու ձեռով զրկում է հողը,
Եւ երևում է սաստիկ շփոթուած:

ՏՂԱՆ (դալիս է առաջ:)

Ի՞նչ եմ տեսնում, հայր, հայր, եկ շուտ այտուղ:

ՉԿՆՈՐՄ (մօտ դնալով:)

Այս ի՞նչ է: Տէլը--Տէր իմ և Աստուած:
Ասա ինձ, ինչպէս եկար դու այտուղ:

ՏՂԱՆ

Դու բռնած չէիր նաւի մէջ, կատած:

ՉԿՆՈՐՄ

Չէ որ քեղ նաւով տարան դէպ' Ախւնախառ:

ՏԵՂԼ (վեր կենալով:)

Ես աղատուեցայ:

ՉԿՆՈՐՄՆ ու ՏՂԱՆ

Դու աղատուեցայ:

Ո՛հ, հրաշք երկնային:

ՏՂԱՆ

Ի՞նչ տեղից եկար:

ՏԵՂԼ

Նաւի վրայից:

ՉԿՆՈՐՄ

Ի՞նչ:

ՏՂԱՆ

Կուսակալն ուր է:

ՏԵՂԼ

Ալիքների վրայ:

ՉԿՆՈՐՄ

Մի՞թէ: Սակայն դու,

Դու ինչպէս պրծար քո կապանքներից
Եւ փոթորիկից:

ՏԷԼԼ

Աստուած փրկեց ինձ:
Լսեցէք, պատմեմ:

ՁԿՐՈՐՄՆ ու ՏՂԱՆ

Ո՛հ, շնուտ, շուտ պատմիր:

ՏԷԼԼ

Ինչ որ Ալտորֆում պատահեց, գիտես

ՁԿՆՈՐՍ

Բոլորը գիտեմ, միայն շարունակիր:

ՏԷԼԼ

Որ կուսակալը ինձ կապել տուեց,
Եւ դէպի Կիւսնախտ ուղում էր տանել:

ՁԿՆՈՐՍ

Եւ որ Ֆլիւէլնից նաւով գնացիք,
Բոլորը գիտեմ: Պատմիր, թէ ինչպէս
Ազատուեցար դու:

ՏԷԼԼ

Ես ընկած էի

Նաւի մէջ, կապած պինդ չուաններով,
Թոյլ, անսգնական, մի կորած տղամարդ—
Էլ յոյս չունէի տեսնել մի անգամ
Արևի լոյսը, կնոջս ու երեխանցս
Քաղցր դէմքերը: Յուսահատ աչքով
Նայում էի ես ալիքների վրայ: —

ՁԿՆՈՐՍ

Ո՛հ, խեղճ մարդ:

ՏԵԼԼ,

Այսպէս ճանապարհ ընկանք,

Ինքը Լանդֆօխտը, Բուդօլֆ դեռ Հարրաս
Եւ ծառաները: Իմ կապարճը և

Աղեղը դրած էին դեկի մօտ:

Եւ երբ որ հասանք անկիւնի ժայռին,

Յանկարծ վերկացրեց Աստուած Գօտհարդախ

Խորը ձորերից մի այնպէս սաստիկ

Մրրիկ, որ բոլոր նաւավարները

Յուսահատուեցան և կարծում էին,

Թէ այտակղ պիտի բոլորն էլ խեղդուեն:

Այստեղ լսեցի, որ ծառաներից

Մինը շուռ եկաւ դէպի Լանդֆօխտը

Եւ ասաց այսպէս. Տէր, դու տեսնուակա

Ամենքիս վաանողը, և որ բոլորս էլ

Մահի դռանն ենք—[Թիավարները

Ահից չըզխտեն, թէ ինչպէս վարվին.

Եւ չեն իմանում լաւ կառավարել.—

Բայց ահա Տէլլը ուժեղ աղամարդ է

Եւ [Թիավարել լաւ է իմանում:

Նա մեզ կարող էր պիտանի լինել

Մեր կարիքի մէջ: Տէլլ, ասաց Փօխտը,

Եթէ յոյս ունիս, որ կարող ես մեզ

Փրկել փոթորկից, ես քեզ կազատեմ

Քո կապանքներից: Նս էլ ասացի.

Այո, իմ պարոն, Աստուծոյ օգնութեամբ

Յոյս ունիմ փրկել ես մեզ բոլորիս:

Այսպէս ուրեմն աղատուեցայ ևս

Իմ կապանքներից և կանգնած էի
Ղեկի մօտ, նաւը կառավարելով:
Բայց շուտէի աչքս այն կողմը,
Ինչտեղ դրած էր իմ ղէնքը, և լաւ
Ման էի ածում բոլոր ամիսի վրայ,
Թէ ինչտեղ արդեօք աւելի հեշտ է
Նաւից դուրս թռչել: Եւ նկատելով
Մի ժայռ, որ տափակ մտնում էր ծովը—

ՁԿՆՈՐՍ:

Հա՛, դիտեմ, դա մեծ Ա.ք ս է ն ի մօտ է:
Սակայն չեմ կարծում, թէ կարելի է,
Նաւից թռչելով հասնել նորա վրայ,
Պատճառ կողքերը անմատչելի են:

ՏԵԼԼ

Իսկոյն ձայն տուի ծառաներին, որ
Միասին օգնեն, մինչև որ հասնենք
Այն տափակ ժայռին: Այնտեղ, ասացի
Էլ վտանգ չըկայ:—Եւ երբ որ արագ
Թիավարելով շուտ հասանք նորան,
Մաղթեցի Աստուծոյ ողորմութիւնը,
Եւ բոլոր ոյժս լարելով, կպցրի
Նաւի ետևի կողմը քարափին:
Իսկ յետոյ, շտապով ղէնքս առնելով,
Թռայ ժայռի վրայ և ոտով հեռու
Բոթեցի նաւը ալիքների մէջ:—
Թող որ կողմն ուղէ տանէ նրան Աստուած:
Ես այժմ այստեղ եմ, փրկուած փոթորկից,
Փրկուած մարդկանց չար իշխանութենից:

ՋԿՆՈՐՍ

Տէլլ, յայտնի հրաշքով փրկեց քեզ Աստուած .
 Հաղիւ լսածիս հաւատում եմ ես:—
 Բայց այժմ ասա, ուր միտք ունիս գնալ
 Պատճառ ապահով չես դու ոչ մի տեղ,
 Թէ ֆոխարը անվնաս պրծնի փոթորկից:

ՏԷԼԼ

Երբ ես դեռ կապած էի նաւի վրայ,
 Այնտեղ ասում էր, որ նա ուզում էր
 Բրունէնին մօտիկ դուրս գալ ափի վրայ
 Եւ Շվիցով գնալ դէպ' իւր ամրոցը:

ՋԿՆՈՐՍ

Ցամաքով արդէօք ուզում էր գնալ:

ՏԷԼԼ

Այդպէս միտք ունի:

ՋԿՆՈՐՍ

Ո՛հ, շուտ ուրեմն

Թաք կաց մի լաւ տեղ: Էլ երկրորդ անգամ
 Չի փրկի Աստուած քեզ նորա ձեռից:

ՏԷԼԼ

Ո՞րն է աւելի կարճ ճանապարհը
 Գէպ' Արտ ու Կիւսնասիտ

ՋԿՆՈՐՍ

Մեծ ճանապարհը

Գնում է Շաէյնէնով, բայց մի աւելի
 Կարճ և էլ դադանի ճանապարհով քեզ
 Կըտանէ տղաս Լօվէրցի վերայ:

ՏԷԼԼ

(Տալիս է նորան ձեռը)

Աստուած վարձատրէ քո լաւութիւնը:

Մնաս բարով, եղբայր,

(գնում է և էլի յետ է դառնում:)

Արդեօք չէս երդուել

Գու էլ թիւալի վրայ: Կարծեմ ասացին
Ինձ քո անունը:

ՁԿՆՈՐՍ

Ես էի այնտեղ

Եւ դաշնակցութեան տուի երդումը:

ՏԵՂԼ

Ապա խնդրում եմ շուտ դընձ Բիւրդէն:

Աինս նեղանում կլինի ինձ համար.

Գնձ, յայտնիր նորան, որ ես փրկուած եմ

Եւ ասպանով տեղ:

ՁԿՆՈՐՍ

Բայց ինչ ասեմ, թէ

Ո՞ր կողմը փախար:

ՏԵՂԼ

Նրա մօտ կը դառնես

Իմ աներոջը և ուրիշներին,

Որոնք թիւալի վրայ երդում են կերել—

Թող լաւ կենան և չըյուսահատուին:

Տէլը ազնա է և տէր իւր կուան,

Շուտով իմ մասին կը լսեն մի բան:

ՁԿՆՈՐՍ

Ի՞նչ կայ սրտումդ Տէլ, ասն ինձ բաց:

ՏԵՂԼ

Նրք կը ը կ ա տ ա ր ե մ, ասլա կիմացուի:

(գնում է:)

ՋԿՆՈՐՍ

Ճէննի, գնան, ցոյց տուր նրան ճանապարհը: —
Աստուած թող լինի նորա պաշտպանը:
Նա կը վերջացնէ, ինչ որ յանձն առնէ:

(դնում է:)

Երկրորդ տեսարան:

Իշխան Ատտինգհաուզէնի առևնը:

Ի Շ Խ Ա Ն Ը նստած դահույքի մէջ հողկարք, Վ Ա Լ Տ Է Ր
Ֆ Ի Ի Ր Ս Տ, Շ Տ Ա Ո Ի Ֆ Ա Խ Է Ր, Մ Է Լ Խ Թ Ա Լ Է
Բ Ա Ո Ի Մ Գ Ա Ր Տ Է Ն պարապած էն նորա շուրջ, Վ Ա Լ
Տ Է Ր Տ Է Լ Լ ծնկան վրայ մեռնողի առաջ:

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ

Արդէն վերջացաւ, հողին աւանդեց:

ՇՏԱՈԻՖԱԽԷՐ

Նա մեռելի պէս չէ պարկած:— Տեսէք,
փետուրը շարժվում է շրթունքի վրայ:
Քունը հանգիստ է, և նորա դէմքը
Խաղաղ ժպտում է:

(Բառամզարտէնը գնում է դռան մօտ և խօսում է մի մարդու
հետ:)

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ (Բառամզարտէնին:)

Ո՞վ է:

ԲԱՌԻՄԳԱՐՏԷՆ

Քո դուստրը,

Տիկին Հէղվիզը. քեզ մօտ խօսք ունի,
Եւ իւր տղային ուղում է տեսնել:

(Վաղտէր Տէլլը կանգնում է ոտի վրայ:)

ՎԱՆՏԷՐ ՖԻԻՐՍ

Կարող եմ արդեօք նրան մխիթարել:

Ունիմ ես ինքս մխիթարութիւն:

Ինչի բոլոր ցաւն ինձ վրայ է թափում:

ՀԵՂՎ.ԻԳ. (ներս ընկնելով:)

Ո՞ր է իմ որդին, թողէ՛ք, պիտ' տեսնեմ:—

ՇՏԱՍԻՖԱԽԷՐ

Հանդարտ խնդրում եմ: Միթէ չեա տեսնում,

Որ մահի տան ես:

ՀԵՂՎ.ԻԳ.

(Վաղում է տղայի վրայ:)

Վէլաի, իմ վէլաի:

Ո՛հ, կենդանի է:

ՎԱՆՏԷՐ ՏԵՂԼ

(Փաթաթուելով նորա վզին:)

Խեղճ մայր իմ:

ՀԵՂՎ.ԻԳ.

Միթէ.

Ի՞րաւ է արդեօք: Վիրաւորուած չեա

(Զննում է նորան երկխոլալի հողացողութեամբ:)

Կարելի բան է: Նա կարողացաւ.

Քեզ վրայ նշան դնել: Ի՞նչպէս այդ անել

Կարողացաւ նա:— Ո՛հ, նա սիրտ չունի:—

Նա նեա արձակեց իւր դաւակի վրայ:

ՎԱԼՏԵՐ ՖԻԻՐՍ

Նա ահ ու դողով, ցաւամաշ հողով
 Արեց այդ բանը. ստիպուած արեց նա,
 Պատճառ նրա կեանքը վտանգի մէջ էր:
 ՀԵՂՎԻԳ

Ո՛հ, թէ մի հօր սիրտ լինէր նորա մէջ,
 Նա հաղար անդամ կրմեռնէր, քան թէ
 կանէր այդ բանը:

ՇՏԱՈՒՅԱԽԻՐ

Դու պիտի փառք տաս
 Աստուծոն, որ վերջը այնպէս լաւ բերեց:
 ՀԵՂՎԻԳ

Ի՞նչպէս մոռանում, որ կարող էր և
 Շատ վատ վերջանալ:— Տէր Աստուած, եթէ
 Ութսուն տարի էլ կեանք ունենայի—
 Միշտ կրտեանէի աղաս ծառին կապած,
 Հօրը նորա վրայ աղեղը ուղղած,
 Եւ միշտ կթռչէր նեան իմ սրտի դէմ:

ՄԷԽԹԱԼ

Ահն, դու չըզիտես, թէ ինչպէս Փօխաղ
 Զայրացրեց նորան:

ՀԵՂՎԻԳ

Կոպիտ տղամարդիկ:

Թէ զիպչեն նոցա մեծամտութեանը,
 Էլ ոչ ինչ բանին չեն նայում նոքա.
 Եւ հաւատում են խաղի կոյր բազդին
 Որդու դլուխը ու խեղճ մօր սիրտը:

ԲԱՈՒՄԳԱՐՏԻՆ

Միթէ քո մարդու վիճակը արդէն

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Ո՞վ

ԱՍՏԻՆՔԻ ԱՌԻՁԷՆ

Նա չըկայ այստեղ: Նա ինձ թողնում է
վերջին վայրկենում:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Ազնուականին

է հարցնում: — Արդեօք գնացին կանչելու:

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՏՍ

Նորա ետևից մարդ ենք ուղարկել: —

Մխիթարուիր, տէր: Նա ուղղուեց, մերն է:

ԱՍՏԻՆՔԻ ԱՌԻՁԷՆ

Արդեօք խօսեց նա իւր երկրի համար:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Ինչպէս քաջ տղամարդ:

ԱՍՏԻՆՔԻ ԱՌԻՁԷՆ

Ինչի չէ գալիս

վերջին օրհնութիւնս ընդունելու:

Չգում եմ, որ շուտով կըդայ վախճանա:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Չէ, աղնիւ պարոն, քեզ դուարթացրեց

կարճատև քուր. քո աչքը պարզ է:

ԱՍՏԻՆՔԻ ԱՌԻՁԷՆ

Կեանքն է դաւ, նա էլ այժմ ինձ թողնում է:

Յաւի հետ յոյսն էլ արդ վերջանում է:

(Նա տեսնում է տղային:)

Ո՞վ է այս տղան:

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՏՍ

Օրհնիր, ով իշխանա:

Գա իմ թուռն է և այժմ մի որբ է:

ԱՍՏԻՆԳՆԱՌԻՋԷՆ

Եւ որբ թողնում եմ ևս ձեզ բալորիդ:—

Վայ ինձ, որ պիտի վերջին հայեացքս

Տեսնէր կորուսաւ իմ հայրենիքի:

Ինչի պիտի ևս այսքան ասրէի,

Որ վերջը իսպառ անյոյս մեռնէի:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ (Վալտէր Ֆիւրաւին:)

Միթէ նա պիտի այս ծանր վշտով

Հրածարուի մեզնից և յուսոյ պայծառ

Ճառագայթներով չըլուսաւորենք

Նրա վերջին ժամը:— Իշխան, քո հողին

Թող փառաւորուի, մենք բալորովին

Անօդնական չենք, անյոյս կորած չենք:

ԱՍՏԻՆԳՆԱՌԻՋԷՆ

Ո՞վ կըփրկէ ձեզ:

ՎԱԼՏԷՐ ՖԻՒՐԱՍ

Մենք ինքնեքս մեզ:

Իմացիր ուրեմն: Մենք խօսք ևնք կապիւ

Բռնակալներին մեր երկրից քշել:

Արդէն կազմած է դաշնակցութիւնը,

Ամենքս կապուած ենք սուրբ երդումով:

Գործը կըսկսուի, առաջ քան տարին

Նոր շրջան մտնի: Քո սկիտները

Կըհանդատանան մի աղաւ երկրում:

ԱՍՏԻՆԳՆԱՌԻՋԷՆ

Ո՞ն, ասացէք ինձ, արդեօք կազմած է

Գաշնակցութիւնը:

ՄԷԼԽԹԱԼ

Մի և նոյն օրը

Պիտի վեր կենան երեք դաւառը:
 Ամեն բան պատրաստ ու վերջացած է,
 Եւ ապահով է դադանիքը, թէպէտ
 Շատ հարիւրներով մասնակից են նրան:
 Բռնակալների տակը փորած է,
 Շուտ կանցնի նոցա իշխանութիւնը,
 Եւ նոցա հետքը անգամ չի մընայ:

ԱՍՏԻՆԳՆԱՌԻԶԻՆ

Բայց պի՛նդ բերդերը դաւառների մէջ:

ՄԷԼԽԹԱԼ

Մի և նոյն օրում կը կործանուին:

ԱՍՏԻՆԳՆԱՌԻԶԻՆ

Բայց մասնակից են ձեզ ասպետները:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Մենք ըստասում ենք նոցա օգնութեան:

Այժմ գիւղացին միայն երդուել է:

ԱՍՏԻՆԳՆԱՌԻԶԻՆ

(Նա կամաց բարձրանում է տեղից սաստիկ դարմացած:)

Եթէ գիւղացին մենակ այդ դործին

Վստահանում է առանց օգնութեան

Աղնուակահանների, եթէ նա այդքան

Հաւաստի է իւր կարողութեան վրայ—

Հն, այն ժամանակ կարօտ չէ նա մեզ.

Հանդիսա կարող ենք մտնել դերեզման—

Մեզանից յետոյ ես նա կապրի—

Եւ մարդկութիւնը մի այլ դօրութեամբ

Արտիստաւորութիւն:

(Եւս դնում է իւր ձեռք երեխայի գլխին, որ նորա ասած կանգնած է ծնկան վրայ:)

Այս գլխից անն,

Ինչտեղ խնձորը դրած էր, կըբսնի

Չեղ համար ձեր նոր աղատութիւնը.

Հինը քանդվում է, ամեն ինչ փոխվում,

Եւ նոր կեանք ծաղկում աւերակներից:

ՇՏԱՌԻՖԱԽԻՐ (Վարտէր Ֆիրսափն:)

Տես, թէ ինչպէս պարզ փայլում է աչքը:

Մահի նշան չէ, այլ մի նոր կեանքի

ձառագայթ է դա:

ԱՏՏԻՆԳԶԱՌԻՉԻՆ

Ազնուականը

Յած է իջնում իւր հին ամրոցներից

Եւ քաղաքներին հաւատարմութեան

Տալիս է երդում: Իւ լս ա լ ա ն ո ղ և Տ ու ը ը զ ա ու

Արդէն սկսել են: Եւ աղնիւ Բ է ու ն ը

Բարձրացնում է իւր իշխող գըլուխը,

Փր է յ բ ու ը ը ն է ամուր բերդ աղաաների,

Աշխոյժ Յ իւ ը ի խ ը ղ ի ն աւորում է

Իւր կտրիճներին — և խորատակվում է.

Մշտնջենաւոր այս պատերի դէմ

Թագաւորների կուռ դօրութիւնը —

(Հետեւեալ խօսքերը նա ասում է մարդարէական ձևով, հետզհետէ ողևորութեամբ:)

Իշխան ու ասպետ դէնք ու գրահով

Գալիս են անմեղ հովիւ աղզի դէմ

Պատերազմելու: Մաստիկ է կռիւք,
 կռիւ օրհասական, և կրճաչակուլի
 Արիւնհեղութեամբ այս և այն ձորը:
 կարծքը բաց վազում է շինականը,
 Մի կամաւոր դո՛հ, նիզակների դէմ,
 Փշրում է նոցա և ասպետներին
 Համնում կոտորած, ազատութիւնը
 Բարձրացնում է իւր յաղթական դրօշը:
 (Բռնելով Վալտեր Յիւրատի և Շտաուֆախերի ձեռները:)

Սպա միարան կացէք յաւիտեան—
 Հաստատ պահեցէք ազգութեան կապը—
 Պահապաններ դրէք սարերի վերայ,
 Թող շուտ ժողովուրն դաշնակիցները—
 Միարան կացէք—միարան—միարան—

(Յետ է ընկնում բարձի վրայ: Նա անշնչացած դեռ ևս
 բռնած ունի իւր ձեռների մէջ միւսների ձեռները: Յիւրատը
 և Շտաուֆախերը մի քանի ժամանակ լուռ կանդնած նայում-
 են նորա վրայ, յետոյ հեռանում են իւրաքանչիւրը անձնա-
 տուր լինելով իւր վշտին: Ա. յգ միջոցին կամաց մտնում են
 ծառաները, նոքա մօտենում են մեռելին, նոցանից մի քա-
 նիսը հանդարտ, իսկ միւսները աւելի սաստիկ նշաններով
 արտայատում են իրանց վիշտը, մի քանիսը չտքում են նորա
 առաջ և լաց են լինում, բռնելով նորա ձեռը, այդ անխօս
 տեսարանի ժամանակ լսվում է ամբողջի դանդաղի ձայնը:)

Բ Ո Ւ Գ Է Ն Յ և Ա Ռ Ս Զ Ի Ն Ե Ր Ը

ԲՈՒԳԷՆՅ (շուտ ներս մտնելով:)
 Կենդանի է: Ո՛հ, ասացէք, արդեօք
 Կըլսէ նա ինձ:

Վ.Ս.Ա.ՏԷՐ ՖԻԻՐՍ

(Յոյց է տալիս այն կողմը երեսը դարձնելով:)

Գու այժմ մեր տէրն ևս
Եւ մեր պաշտպանը, և այս ամբողջը
Կըստանայ հիմա մի ուրիշ անուն:

ԲՈՒԳԷՆՑ

(Տեանում է դիակը և մնում է կանգնած սաստիկ վշտահագր:)

Ո՛հ Աստուած: Մի՛թէ ուշ զղջացի ևս:

Է՞ր նա մի քանի վայրկեան աւելի:

Չապրեց, որ տեսնէր իմ ուղղուած ակիտը:

Արհամարհեցի նրա բարի խրատը,

Քանի որ դեռ նա կեանք էր վայելում—

Այժմ նա գնաց, գնաց յաւիտեան,

Եւ ևս մնացի նորան պարտական —

Ո՛հ, ասացէք ինձ, նա հողին փչեց

Գժգոհ ինձանից:

ՇՏԱՌԻՖՍԻՐ

Մեռնելիս լսեց

Նա քո արածը և օրհնեց նա քո

Արիտիւնը:

ԲՈՒԳԷՆՑ

(Չորում է մեռելի առաջ:)

Հն, սուրբ նշխարներ

Մի ազնիւ մարդու, դու անշունչ մարմինս,

Այստեղ երդվում ևմ սատած ձեռիդ վրայ—

Որ ևս քանդել ևմ օտար կապերը,

Նորից ազգիս հետ ևս միացել ևմ,

Ես բոլոր սրտով Շվեյցարացի ևմ:—

(Վերկենալով):

Յաւեցէք ձեր հօր ու բարեկամի
 Կորուսալի վերայ, բայց մի վհաօխք:
 Ոչ թէ միայն նորա կայքը մնաց ինձ,
 Այլ սիրան ու հողին զգում եմ իմ մէջ,
 Եւ կըլճարէ իմ մանկութիւնը,
 Ինչ ձեզ պարտ մնաց նրա ծերութիւնը:
 — Ով պատուական հայր, տուր ինձ քո ձեռք:
 Դուք էլ սուեցէք, Շտաուֆախէր, Մէլխիթալ
 Մի շատ մտածէք, մի շուռ դաք ինձնից,
 Ընդունեցէք իմ երգումն ու ուխտը:

Վ.Ա.ՏԷՐ ՖԻԲՍ (Մէլխիթալին):

Տուր ձեռք, նորա ուղղուած սիրտը
 Արժանի է մեր հաւատարմութեան:

ՄԷԼ.ԽԹ.ԱԼ.

Դու միշտ զիւղացուն բան չես համարել.
 Ասա, էլ ինչ յոյս ունենանք քեզնից:

ԲՈՒԳԷՆՅ

Ո՛հ, մի մանկութեան յիշիր սխալներու:

ՇՏԱ.ՈՒՖԱ.ԽԷՐ (Մէլխիթալին):

Միտքան կացէք, այս էր հանդուցեալ
 Հօր վերջին խօսքը:

ՄԷԼ.ԽԹ.ԱԼ.

Ահա իմ ձեռք:

Հա՛, աղնիւ պարոն, զիւղացու խօսքն էլ
 Տղամարդու խօսք է: Ի՞նչ է առանց մեզ
 Ասպետը: Գիտես, որ մեր կոչումը
 Չկրկոյր հին է:

ԲՈՒԳԵՆՅ

Ես յարդում եմ այն,
Եւ իմ սուրբ միշտ կապաշտպանէ նորան:

ՄԷԼԽԹԱ,

Իշխանս, այն կուռը, որ նուաճել է
կոչա հողը և նրան պտղաբեր շինել,
կարող է մարդու կուրծքն էլ պաշտպանել:

ԲՈՒԳԵՆՅ

Դուք կը պաշտպանէք իմ կուրծքը և ես
կապաշտպանեմ ձերը, և այսպէս ահա
Մինը միւսով մենք զօրեղ կլինինք:

— Բայց ինչ խօսենք, երբ դեռ հայրենիքը
Աւար է օտար բռնակալութեան:

Երբ որ կը մաքրենք հողը թշնամուց,
Ապա կարող ենք խօսել խօսելուն:

(Մի քանի վայրկեան լուռ կենալուց յետոյ:)

Դուք դեռ լռումէք, բան չէք ասում ինձ:
Մի՞թէ արժան չեմ, որ բացուէք ինձ հետ:
Ապա ես ինքս ընդդէմ ձեր կամքի

Պիտի թափանցեմ ձեր գաղտնիքի մէջ:

— Դուք Տիւալի վերայ դաշն էք հաստատել:—

Ես գիտեմ— գիտեմ բոլորը, ինչ որ
Այնտեղ խօսել էք. և ինչ որ դուք ինձ
Չըհաւատացիք, ես պահպանել եմ
Ինչպէս սուրբ աւանդ: Ոչ մի ժամանակ
Չեմ թշնամացել իմ հայրենիքին,

Հաւատացէք ինձ, և երբէք ձեր դէմ

Ես չեմ ներգործել:— Բայց լաւ չարեցիք:

Որ բանը այդքան յեռաձգեցիք,
Հարկաւոր էր շուտ ձեռք զարկել գործին:—
Տէլը զո՛հ դառաւ ձեր դանդաղութեան:—

ՇՏԱՌԻՖԱՆԻՐ

Երդուել ենք սպասել մինչև ծնունդը:

ԲՈՒԴԷՆՅ

Ես այնտեղ չէի, երդում չեմ կերել:
Դուք սպասեցէք, ես կը սկսեմ գործը:

ՄԷԼԽԹԱԼ

Ի՞նչ: Դու ուղում ես:

ԲՈՒԴԷՆՅ

Ազգի մեծերից

Մինն էլ ես եմ այժմ և պարտական եմ,
Որ ձեզ պաշտպանեմ:

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ

Հողին թանկագին

Այս փոշին պահապան է քո առաջին

Սրբազան պարտքը:

ԲՈՒԴԷՆՅ

Երբ հայրենիքը

Կաղատենք, ապա յաղթութեան պսակով

Կրդարդարենք մենք նորա դազադր:

Ո՛վ բարեկամներ, միայն ձեզ համար չէ,

Այլ և սեփական իմ գործի համար

Պիտի կռիւ մանեմ բռնակալի հետ:—

Իմացէք ուրեմն: Չըկայ իմ Բէրթան,

Ծածուկ, լրբարար յախտակել են

Նորան մեր միջից:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Մի՛թէ բռնակալն
Համարձակուել է այդ բանին ազնիւ
Օրիորդի դէմ:

ԲՈՒԴԷՆՅ

Ո՛վ բարեկամներ,
Ես ձեզ խոստացայ օգնել, բայց նախ ես
Պիտի աղերսեմ ձեր օգնութիւնը:
Յափշտակել են իմ սիրականին:
Ո՞վ դիտէ, ինչտեղ է պահում նորան
Այն չար գաղանք, ինչ միջոցներով
Ստիպումէ նորան իրան հարսնանալ: —
Ո՛հ, մի՛ թողնէք ինձ, օգնեցէք, եղբարք,
Ազատել նորան — նա ձեզ սիրում է,
Նա արժանի է ձեր պաշտպանութեան:

ՎԱՆՏԷՐ ՖԻԻՐՍ:

Այժմ դու ինչ ես կամենում անել:

ԲՈՒԴԷՆՅ

Ինքս էլ չըզիտեմ: Այս խաւարի մէջ,
Որով պատած է նորա վիճակը,
Կասկածն ու երկիւղ տիրել են անձիս,
Եւ ես չըզիտեմ, որ կողմը դիմեմ,
Բայց այսքան միայն պարզ հասկանում եմ,
Որ նորան պիտի բռնակալութեան
Աւերակների տակից մեք հանենք.
Բոլոր բերդերին պիտի մենք տիրենք,
Գուցէ թէ այդպէս նրա բանտը մտնենք:

ՄԷԼԻԹԱԼ

Առաջնորդիր մեզ: Մենք կը հետևինք:
Ինչի է դուց վան թողնենք այն, ինչ որ
Այսօր կարող ենք: Տէլը ազատ էր,
Երբ որ Տիւտլի վրայ մեք երդում կերանք,
Գեռ չէր պատահել այն չարութիւնը:
Այլ է ժամանակն, այլ և օրէնքը.
Ո՞վ արդեօք այնքան երկչոտ կըլինի,
Որ կարողանայ այժմ էլ վախենալ:

ԲՈՒԳԷՆՅ

(Շատափախերին և Վալտէր Ֆիրատին:)

Իսկ դուք, զինուորուած, սպարապատ սպասուցէք
Կրակի նշանին սարերի վերայ.
Պատճառ չուտ, քան թէ թռչում է հողմը,
Չեղ մեր յաղթութեան կը հասնի լուրը.
Եւ երբ ցանկալի բոցը կը փայլի,
Ապա շուտ ինչպէս կայծակ վազեցէք
Թշնամիների վրայ և քանդեցէք
Հիմքից շինուածքը բռնակալութեան:

(Գորսու են դնում:)

Երրորդ տեսարան

Նեղ ձորը Աիւսնախառի մօտ:

(Ճանապարհ ժայռերի մէջ բեմի ետևի կողմում, այնպէս որ ճանապարհորդները դեռ բեմի վրայ չմտած արդէն երևում են բարձրութեան վրայ: Եւմը բոլորովին պատած է ժայռերով, որոնցից առաջիններից մինի վրայ կայ մի դուրս ցցուած քարառի թուփերով ծածկած:)

ՏԵՂ,

(Մտնում է աղեղը ձեռին:)

Նա այս նեղ ձորով պիտի անցկենայ,
Ուրիշ ճանապարհ չըկայ դէպ Աիւսնախառ:—
Այստեղ իմ դորձը ես կըվերջացնեմ:—
Միջոցն յարմար է: Այն թանթրուկնին
Ինձ կըթաքցնէ, այնտեղից նեռս
կըհասնի նորան. նեղ ճանապարհը
կարգելէ նոցա ընկնել ետևիցս:
Փօխտ, կրկնքի հետ տես քո հաշիւը,
Դու պիտի դնաս, զարկից քո ժամը:

Ես ապրում էի խաղաղ—իմ նետը
Անտառի որսի վրայ էր միայն ուղղած,

Միտքս սպանութեամբ չէր ապականուած —
Դու վրդուկեցիք խաղաղութիւնս,
Թունաւորեցիք անարատ միտքս,
Անսովոր բանին ինձ սովորեցրիք —
Ով որդու գլխին նետ է արձակել,
Թշնամու սիրտն էլ կարող է ծակել:

Անմեղ երեխանցս, սիրելի կնոջս
Քո կատաղութեան, դէմ պիտ' պաշտպանեմ,
Լանդֆօստ — Երբ որ ես աղեղիս լարը
Լարեցի — երբ որ ձեռս դողդղաց —
Երբ որ դիւական չարախնդութեամբ
Ստիպեցիք որդուս գլխին նշան դնել —
Երբ ես յուսահատ ընկած քո առաջ
Աղերսում էի որդուս խնայել,
Այն ժամանակ ես սրտիս մէջ ծածուկ
Ուխտեցի անքակ և սուրբ երգումով,
Որ լսելի էր միայն Աստուծոն,
Որ իմ հ ե տ և ե ա լ նետի առ ա ջ ի ն
Նպատակը քո սիրտը կըլինի:
Եւ այն տանջանքով լի վայրկենի մէջ
Ինչ որ ինքս ինձ ես խոստացել եմ,
Է իմ սուրբ պարտքը — և կըլծարեմ

Դու իմ տէրն ես և կայսրի տեղակալ,
Բայց ինքը կայսրը չէր վատահանայ
Անել ինչ որ դու: — Նա քեզ ուղարկեց
Այստեղ, որ արդար դատաստան անեա —

Ոչ թէ անողորմ չարախնդութեամբ
Ամեն չարութիւն անես անպատիժ.
Կայ Աստուած, գլխիդ կըթափէ պատիժ:

Գարս եկ, դու պատճառ դառն ցաւերի,
Այժմ իմ թանկագին ամենամեծ դանձ—
Ես քեզ մի այնպէս նպատակ կըտամ,
Որ մինչև այսօր անթափանցելի
Էր աղերսանքին:— Բայց քեզ կարող չէ
Նա ընդդիմանալ— եւ դու, փորձուած լար,
Որ այնքան անդամ ուրախ խաղերում
Ծառայել ես ինձ հաւատարմարար,
Ո՛հ, չըթողնես ինձ այս ծանր ժամում:
Այժմ միայն պինդ կաց, հաւատարիմ լար,
Որ այնքան յաճախ թռցրել ես հետս—
Թէ որ նա հիմայ պրծնի իմ ձեռից,
Երկրորդը չունիմ թռցնում ետևից:

(Ճանապարհորդներ անց են կենում բեմի վրայ:)

Այս քարի վերայ կընտանւմ այստեղ,
Յողնած անցորդի համար պատրաստած:—
Ո՞ր է հայրենիք:— Այստեղ ամեն մարդ,
Առանց հարցնելու ուրիշի ցաւին,
Անցնում է մօտից ինչպէս մի օտար—
Այստեղ գնում է և հողակերով լի
Վաճառականը և ուխտաւորը—
Բարի արեղան, մռայլ աւաղակը,
Ուրախ խաղացողն ու դրաստաւարը,

Որ հեռու տեղից բերում է բերք:
Ամեն ճանապարհ տանում է մինչև
Աշխարհի վերջը: Եւ ահա նորա
Բայրն էլ իրանց գործին են գնում—
Իսկ ես սպանութիւնս ունիմ իմ մտքում:

(Նստում է:)

Առաջ ձեր հայրը երբ տանից կերթար,
Սիրելի որդիք, ինչ խնդութիւն էր
Ձեզ համար, երբ որ նա յետ կըդառնար.
Նա միշտ ձեզ համար մի բան կըբերէր,
Կամ արպեան ծաղիկ, կամ մի նոր թռչուն
Եւ կամ խեցեմորթ հնուց քարայած,
Որոնց անցորդը տեղ տեղ գտնում է
Սարերի վերայ:— Այժմ այլ բանով
Պարապած է նա, խուլ ճանապարհին
Նստած, մտածում է սպանութեան վերայ.
Թշնամու սրտին է նա աչք անում:
— Բայց էլի ձեզ վրայ, ձեզ վրայ է մտածում,
Սիրելի որդիք:— Ձեզ պաշտպանելու,
Ձեր անմեղ կեանքը չար բռնակալի
Վրէժխնդրութենից փրկելու համար
Ուղում է լարել նա այժմ ազեղը:

(Աեր է կենում:)

Ես աչք եմ անում մի ազնիւ որսի—
Երբէք որսորդը չէ դժուարանում
Յուրտ ձմեռուան մէջ անբողջ օրերով
Չափել սարերը, համարձակ թռչել

Ժայռից ժայռի վրայ, վերև կաննել
 Մերկ պատերի վրայ, ուր նա կաշոււմ է
 Սեփական արնով—մի թշուառ այժեամբ
 Որսալու համար: Բայց ես կըտրամ
 Աւելի թանկ բան—թշնամուտ սիրար,
 Որ կամենում է ինձ ոչնչացնել:

(Հետոյ լսում է մի ուրախ երաժշտութիւն, որ հետզհետեւ
 մտնում է:)

Բոլոր կեանքիս մէջ բանեցրել եմ ես
 Աղեղը և միշտ վարժուել կանոնով.
 Շատ անգամ խփել եմ սև նշանին,
 Եւ շատ եմ ստացել լաւ լաւ պարգևներ
 Հանդէսների մէջ—Այսօր ուղում եմ
 Ամեն՝ յաջողակ հարուածը ես տալ,
 Եւ ամենալաւ վարձը ըստանալ:

Մի հարսանիք անց է կենում բեմի վրայ և ձորով դնում,
 քարձրանում է: Տէլը նայում է նորան, թեք ընկած խրտուկ-
 դի վրայ:

Շ Տ Ի Ի Ս Ի աղեղնաւորը ընկերանում է նորան

Շ Տ Ի Ի Ս Ի

Մեռելիչախ վանքի կանաչատէրն է
 Հարսանիք անում—շատ հարուստ մարդ է,
 Տասը հօտ ունի սարերի վերայ,
 Եւ այժմ Իսդէն տանում է հարսին,
 Լաւ ուրախութիւն կանենք այս գիշեր
 Կիւսնախառում: Արի, դնանք միասին,
 Բոլոր լաւ մարդիկ կանչուած են այնտեղ:

ՏԵՆԼ

Ես տխուր հիւր լմ հարսնիքի համար:

ՇՏԻՒՍԻ

Թէ մի վիշտ ունիս, հեռացրու սրտից,
Շատ մի մտածիր: Վատ ժամանակ է,
Պէտք է աշխատել ուրախ կեանք վարել:
Այստեղ պսակում են, ուրիշ տեղ թաղում:

ՏԵՆԼ

Երբեմն երկումն էլ միասին լինում:

ՇՏԻՒՍԻ

Աշխարհն այդպէս է: Տարարադդութիւն
Շատ է պատահում ամեն տեղ—Ահա
Գլարուս հահանդում փուլ եկաւ մի ժայռ,
Այլ և Գլէրնիշի մի կողքը քանդուեց:

ՏԵՆԼ

Միթէ սարերն էլ տեղից շարժվում են:
Էլ ոչինչ հաստատ չէ երկրի վերայ:

ՇՏԻՒՍԻ

Ուրիշ տեղեր էլ հրաշքներ են լինում:
Նոր մի Բաղէնից եկող ինձ պատմեց.
Մի ասպետ ձիով դնում է եղել
Թաղաւորի մօտ, որ ճանապարհին
Պատահում են նրան անթիւ պիծակներ,
Որոնք ընկնում են նորա ձիու վրայ
Եւ այնքան խայթում, մինչև շարժարուած
Չին վեր է ընկնում: Ասպետը ոտով
Գնում հասնում է թաղաւորի մօտ:

ՏԵՆԼ

Տկարին նոյնպէս տուած է խայթոց:

Ա Ր Մ Գ Ա Ր Տ գալիս է շատ երեխանցով և կանգնում է ձորի
բերանում:

ՇՏԻՒՍԻ

Գուշակում են մեծ տարաբաղդութիւն
Եւ ծանր գործեր ընդդէմ բնութեան:

ՏԵԼԼ

Առանց հրաշքի էլ խրաքանչիւր օր
Շատ են պատահում այդ տեսակ գործեր:

ՇՏԻՒՍԻ

Երանի նորան, ով օր իւր հողը
Հանդիստ մշակում է և միշտ ապահով
Ապրում է տանը:

ՏԵԼԼ

Ամենահամեստ

Մարդն էլ կարող չէ հանդիստ կեանք վարել
Թէ այդ ընդդէմ է չար հարևանին:

(ՏԵԼԼը շուտ-շուտ և անհանդիստ սպասելով նայում է հանուս
պարհի կողմը:)

ՇՏԻՒՍԻ

Մնաւ բարով—Մարդն ևս սպասում:

ՏԵԼԼ

Այն:

ՇՏԻՒՍԻ

Ուրախ տուն համեւա:—Գու Ուրեցի՞ ևս:
Մեր ողորմած տէր լանդֆօխտին այսօր
Մնում ենք այն տեղից:

ՃԱՆՍՊԱՐՀՈՐԳ (գալիս է:)

Այսօր մի սպասէք:

Ֆօխտին: Ջրերը շատ մեծացել են:

Սաստիկ անձրևից. դետը տարել է

Ողջ կամուրջները:

(Տէլը վեր է կենում:)

ԱՐՄԳԱՐՏ (տաջ է դալիս:)

Ֆոխար դալու չէ:

ՇՏԻՍԻ

Գործ ունիս մտադ:

ԱՐՄԳԱՐՏ

Ա՛խ, հա իհարկէ:

ՇՏԻՍԻ

Ուրեմն ինչ էս այս նեղ անոցքի մէջ

ճանապարհ կարո՞ւմ:

ԱՐՄԳԱՐՏ

Այտակալ կարող չէ

իմ ձեռից դնալ. պիտի լսէ ինձ:

ՖՐԻՍՏԱՐԳՏ

(Պատկերապես դալիս է նեղ ճանապարհով և ձայն է տալիս բեմի վրայ:)

Ճանապարհ տուէք — իմ ողորմած տէր

Լանդֆոխար անն իսկոյն դալիս է:

(Տէլը դուրս է գնում:)

ԱՐՄԳԱՐՏ (ուրախացած:)

Ֆոխար դալիս է:

(Կա իսր երեխանցով դալիս է բեմի առաջակողմի վրայ Վէսէր և Րուդոլֆ Ղէս Հարրաս ձիով երևում են ճանապարհի գլխին:)

ՇՏԻՍԻ (Ֆրիստարդին:)

Ի՞նչպէս անցկացարք

Ջուրը, ատում են, դետը տարել է

Ողջ կամուրջները:

ՖՐԻՍՏԱՐԳՏ

Եղբայր, ծովի հետ
Պատերազմեցինք և չենք վախենում
Ալպեան ջրերից:

ՇՏԻՍԻ

Գուք այն փոթորիում
Նաւի վրայ էիք:

ՖՐԻՍՏԱՐԳՏ

Այն: Ողջ կեանքում:
Միաս կըստահեմ:—

ՇՏԻՍԻ

Կայէք, պատմեցէք:

ՖՐԻՍՏԱՐԳՏ

Թող, թող, շտապում եմ լանդֆոլստի դարը
Յայտնել ամբողջում:

(Գնում է:)

ՇՏԻՍԻ

Թէ որ լաւ մարդիկ
Լինէին նաւում, ծովը անպատճառ
Կուլ կըտար նոցա: Է՛հ, ժողովուրդին
Ոչ ջուրն է օգնում և ոչ էլ հուրը:

(Նայում է դէս ու դէն:)

Ո՞ր է այն մարդը, որի հետ այստեղ
Խօսում էի ես:

(Դուրս է գնում:)

Գ Է Ս Լ Է Ր Կ Ր Ո Ւ Գ Օ Լ Ֆ Դ Է Ռ Զ Ա Ր Ր Ա Ս ձիով:

ԳԷՍԼԷՐ

Ինչ որ ուղում ես
Ասն, սակայն ես կայսրի ծառան եմ,

Պիտի աշխատեմ, որ դուր դամ նորանու
Նա ինձ հուղարկեց այստեղ այս աղգին
Շողորթեղու, կամ գլուխը եղել—
Հնադանդութիւն է սպասում նորանից,
Եւ վէճը այն է, թէ ո՞վ պիտ' իշխէ
Այստեղ, գիւղացին արգեօք, թէ կայսրը:

ԱՐՄԳԱՐՏ

Յարմար բոպէ է: Հիմայ կարող եմ:

ԳԷՍԼԷՐ

Ես ցից հարեցի գդակը Ալտօրֆում
Կատակի համար, կամ ժողովուրդի
Սիրտը փորձելու. դա ինձ յայտնի է:
Ես ցից արեցի, որ սովրեն նորա
Վիզը ծռելուն, որ այժմ այնպէս
Ուղիղ են պահում—Ես այն անյարմար
Բանը ցցեցի ճանապարհի վրայ,
Ինչտեղ որ նորա միշտ անց են կենում
Որ նոցա աչքը ծակէ անդադար,
Եւ յիշեն նորա, թէ ունին մի տէր,
Որին ուղում են իսպառ մուանալ:

ԲՈՒԴՕԼՖ

Բայց ժողովուրդը ունի նոյնպէս իւր
Իրաւունքները—

ԳԷՍԼԷՐ

Որոնց կշռելու

Ժամանակը չէ— Համաշխարհական
Գործեր են խմորվում: Կայսրական սուներ
Ուղում է աճել, և ինչ որ հայրը

Փառաւորապէս սկսեց, ուղում է
 Որդին լրացնել: Այս փոքրիկ աղղը
 Փուշ է մեր աչքում—Այսպէս կամ այնպէս
 Պիտի հնազանդուի:

(Նորա ուղում են անցկենալ: Այնք վեր է ընկնում լանդ
 ֆոխտի առաջ:)

ԱՐՄԳԱՐՏ

Խղճան, ողորմիր

Մեզ տէր կուսակալ:

ԳԵՍԼԷՐ

Ի՞նչ ես առաջս

կարում—Յետ դրնա

ԱՐՄԳԱՐՏ

Մարդս բանտունն է,

Եւ խեղճ որբերը հայ են պահանջում—

Կարեկից եղիր, սվ մեծազօր տէր,

Մեր թշուառութեան:

ԲՈՒԴՕԼՖ

Ո՞վ ես դու: Ո՞վ է

Քո մարդը:

ԱՐՄԳԱՐՏ

Մի խեղճ խոտ հնձող է նա

Բիզեսրէրդից, տէր, որ անդունդի վրայ

Զարիվայրներից հնձում է խոտը,

Ուր անասունն էլ վերեւ ելանել

Չէ վատահանում:—

ԲՈՒԴՕԼՖ (կուսակալին:)

Ողորմելի կեանք

Ես ու իմ Աստուած: Ես ձեզ խնդրում եմ

Աղասեղ խնդճինս: Ինչքան և կուղէ
Մեղաւոր լինի, փոքր պատիժ չէ
Նորա ստեղծի այն պարագմունքը:

(Անոջը:)

Քեզ արդար լճիւս կըտան — սամրոցում
Խնդիրքը ասա — Ա. յատեղ տեղը չէ:

ԱՐՄԳԱՐՏ

Չէ, ևս այստեղից մի քայլ չեմ անի,
Մինչև որ մարդուս չաղատէ ֆոխար:
Արդէն վեց ամիս ընկած բանտի մէջ,
Նա դատաւորի լճուինս ապաստւմ է:

ԳԵՍԼԷՐ

Աին, դու ուզում ևս ինձ ստիպել: Հեռու:

ԱՐՄԳԱՐՏ

Արդարութիւն, ֆոխտ: Դու դատաւոր ևս
Ա. յատեղ և կայսրի և Աստուծոյ տեղ:
Կատարիր պարտքդ: Նժէ ակն ունիս
Ինքդ երկնքի արդարութեանը,
Նղիր և մեզ հետ դու արդարադատ:

ԳԵՍԼԷՐ

Հեռացրէք այս լիւրք կնոջը իմ աչքից:

ԱՐՄԳԱՐՏ

(բռնում է ձիու սանձը)

Չէ, ևս էլ ոչ ինչ չեմ կարող կորցնել:
— Գոխտ, չեմ թողնի քեզ այստեղից, մինչև
Ինձ լճիւս չըտաս — կնճախր ճակատդ,
Պատյա տուր աչքիդ, ինչքան ուզում ևս —
Մենք այն աստիճան արդէն դժբաղդ ենք:

Որ էլ չենք նայում քո բարկութեանը:

ԳԼՍԼԵՐ

Ճանապարհ, թէ չէ ձիւ վրէժ կանցկենայ:

ԱՐՄԳԱՐՏ

Թո՛ղ անցկենայ վրէժ — Ահա —

(Նա շտապով բռնում է իւր երեխանցը և նոցա հետ միասին վեր է ընկնում նորա առաջ ճանապարհի վրայ:)

Ընկած ևս

Իմ երեխանցով — Թող խեղճ որբերը

Ոտնակոխ լինին այստեղ քո ձիուց:

Աւելի վատ բան չատ ևս արել դու —

ԲՈՒԴՕԼՖ

Կին, խելագար ևս:

ԱՐՄԳԱՐՏ

(Աւելի տաքացած շարունակում է:)

Արդէն վաղուց ևս

Կայարի երկիրը ոտի տակ արել:

— Ո՛հ, ևս կին իմ միայն: Թէ որ լինէի

Տղամարդ, աւելի լաւ բան կանէի,

Քան թէ հողի վրայ սողալ քո առաջ: —

(Ղարում է առաջուան երած շտաբիւնը ճանապարհի դիմին, քայց խուլ:)

ԳԼՍԼԵՐ

Ո՞ր ևն մարդիկս: Հեռացրէ՛ք սուրան,

Թէ չէ կարող ևս ևս ինձ մտանալ,

Եւ անեղ, ինչ որ յետայ կըղղջամ:

ԲՈՒԴՕԼՖ

Տէ՛ր, ծառաները չեն կարող անցնել,

Անցքը բռնած է մի հազսանիքով:

ԳԵՍԼԵՐ

Չէ, եւ դեռ էլի շատ ներողամիտ
 կառավարիչ եմ այս աղղի համար—
 Դեռ լեզուները ազատ են, նա դեռ
 Իսպառ զսպած չէ, ինչպէս որ հարկն է—
 Բայց երգվում եմ եւ, որ ողջ կրփոխուի:
 Ես կըկոտրեմ այդ յամառութիւնը,
 Կըխոնարհեցնեմ այդ ազատ հողին,
 Ես մի նոր օրէնք կըճրատարակեմ—
 Ես կամենում եմ—

(Աի նեւ ծակում է նորա կուրծքը. նա ձեռը տանում է դէպի
 սիրտը և ուզում է վեր ընկնել: Յոյլ ձայնով:)

Աստուած օգնէ ինձ:

ԲՈՒԴՈՒՑ

Պարոն կուսակալ— Աստուած: Այս ինչ է
 Ո՛ր տեղից եկաւ:

ԱՐՄԴԱՐՏ (վեր թռչելով:)

Մարդասպանութիւն:

Նա տատանում է, նա վեր է ընկնում:
 Ի մահ խօցուած է:

ԲՈՒԴՈՒՑ (Յած է թռչում ձիուց:)

Տէր— Ինչ ստակալի

Պատահմունք է այս— Աստուած— խնդրեցէք
 Երկնից գթութիւն: Դուք մահու զոհ էք:

ԳԵՍԼԵՐ

Այս Տէլլի նեան է:

(Վեր է թողնվում ընդօրի դեռ չարասի կաների վրայ և
 նորան վեր են դնում նախ սրանի վրայ:)

ՏԵՂԷ

(Ազնուաւ է վերեր ժայռի դիւան:))

Գու ճանաչում ես

Ազնուաւորին, ուրեմն ուրիշին

էլ մի որսնիր: Այժմ ազաւ եմ

Մեր խորհիթները, ապահով քեզնից

Անմեղութիւնը: Գու էլ կարող չես

վնասել այս երկրին:

(Ժածկում է ժայռի ետե: Ներս է ընկնում ժողովուրդ:)

ՇՏԻՒՍԻ (ամենից առաջ:)

Ի՞նչ է պատահել:

ԱՐՄԳԱՐՏ

Կուսակալը մի նկատով սպանուած է:

ԺՈՂՈՎՈՒՐԴ (Ներս վազելով:)

Ո՞վ, ո՞վ է սպանուած:

(Այն ինչ հարսանքատրնների առաջինները մտնում են
բեմի վրայ, յետմնները դեռ ճանապարհի դիւին են և երած-
շատիները շարունակում է:)

ԲՈՒԴՈՒՅ ԴԵՆ ԶԱՐԲԱՍ

Արեաքամիւում է:

Եկէք, օգնեցէք: Շուտ մարդասպանի

Ետնից ընկէք:— Ո՛հ, տարարաղղ մարդ,

Այդ էր քո վերջը. բայց չըկամեցար

Լսել խորհուրդիս:

ՇՏԻՒՍԻ

Իրաւ պահաթափ

Ընկած է անշարժ:

ՇԱՏ ԶԱՅՆԵՐ

Ո՞վ, այդ ո՞վ արեց:

ԲՈՒԴՈՒՅ ԳԷՌ ԶԱՐԲԱՍ

Կատողել են, ինչ են երաժշտութիւն

Ածում: Ասացէք, որ խակոյն լուսն:

(Երաժշտութիւնը յանկարծ դադարում է, էլի անելի շատ ժողովուրդ է մտնում:)

Պարոն Կուսակալ, խօսեցէք, եթէ

Կարող էք—էլ բան չունիք ասելու:

(Գեղելը ձեռով նշաններ է տալիս, որոնց նա սառտիք օխեամբ կրկնում է, որովհետեւ շատ շէն հասկանում նորան:)

Ո՞ր դնամ—Այն մնախօտ—չեմ հասկանում ձեզ:

Ո՛հ, մի շփոթուէք—թողէք հողեղէն:

Այժմ մտածեցէք Ասածոյ հետ հաշտուել:

(Բոլոր հարսանքաւորները պատում են մեռնողին և նայում են նորա վրայ անդդայ զարհուրանքով:)

ՇՏԻՍԻ

Ինչպէս գեղնում է—Ահա տիրում է

Մահը նրա սրտին—Աչքերը հանդան:

ԱՐՄԳԱՐՏ բարձրացնում է մի երեխայ

Ա՛յ, աեւէք, որդիք, ինչպէս մեռնում է

Չար բռնակալը:

ԲՈՒԴՈՒՅ ԳԷՌ ԶԱՐԲԱՍ

Խելագար կանայք,

Միթէ սիրտ չունիք, որ ձեր աչքերը

Ըղմայլեցնում էք այս տեսարանով.

—Եկէք—օգնեցէք—մահաբեր նեւը

Հանել կուրծքիցը:

ԿԱՆԱՅԻ (յետ քաշուելով:)

Մենք ձեռք տանք դրան,

Ասածոյ պատմածին:

ԲՈՒԳՕՒՅ ԳԷՌ ԶԱՐԲԱՍ

Անէծք ու նզովք

Թափուի ձեր գլխին:

(Քաշում է սուրբ:)

ՇՏԻՍԻ

Չքհամարձակուհա,

Պարոն: Անցաւ ձեր իշխանութիւնը:

Իռնակալն ընկաւ: Մենք էլ բռնութեան

Համբարողը չենք: Մենք այժմ ազատ ենք:

ԲՈՒՐԸ

Մենք այժմ ազատ ենք:

ԲՈՒԳՕՒՅ ԳԷՌ ԶԱՐԲԱՍ

Բանն այդտեղ հասաւ:

Ա. յղպէս շուտ ուրեմն երկիւղը անցաւ

Հրապանութեան հետ:

(Չինուորներին, որոնք ներս են վազում:)

Ահա տեսում էք

Ստակալի դործը, այստեղ պատահած—

Պղնեղ հնար չէ— Ի դուր կըլինի

Ա. յժմ հարապարծի քամակից ընկնել:

Մենք ուրիշ հոգսեր ունինք հողալա—

Շուտ դէպի Արւանախա, որ կայսրի բերդը

Պահենք նրա համար: Պատճառ քանդուած են

Ա. յս բոպէի մէջ բոլոր կապերը,

Թէ կարդի և թէ պարտականութեան,

Եւ ոչ մի մարդու կարելի չէ այժմ

Հաւատ ընծայել:

(Ա. յն ինչ նա դարս է գնում զինուորներէ հետ դալիս

են Վ. Ն. Յ. Կ. Ր. Օ. Ն. Ա. Ի. Ո. Տ.):

ԱՐՄԳԱՐՏ

Ճանապարհ տուեցէք:

Ահա դալիս են դժբաժ եղբայրներ:

ՇՏԻԻՍԻ

Ձոհը ընկած է—խջնում աղուաւներ:

ԿՐԹՆԱԻՈՐՆԵՐ

(Կանգնում են մեռածի շուրջ և երգում են խուլ եղանակով:)

Մահը մարդուն շուտ է հասնում

Բայց երբ, ծածկուած է մեղանից,

Ճանապարհին վեր է ձգում,

Յափշտակում ուրախ կեանքից:

Պատրաստ է նա, կամ չէ գնալու,

Ասածոյ առաջն է կանգնելու:

(Այն ինչ վերջին տողերը կրկնվում են, վարադրոյը դաժ է ընկնում:)

ՀԻՆՓԵՐՈՐԳ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ



Մռաջին տեսարան.

Հրապարակ ՍԼՄՈՐՓԻ մօտ:

Բեմի յեանակողմում դէպի աջ երևում է Ուրի նուաճող բերդը, որի վերելակները դեռ կանգնած են, ինչպէս առաջին դարձողութեան երրորդ տեսարանում, ձախ կողմը բայ և արձակ տեսարան շատ սարերի մէջ, որոնց ամենի վրայ կրակներ են վառվում: Նոր յուսանում է: Զանգակների ձայն է լսվում դանաղան հեռաւորութենից:

Բ Ո Ւ Ո Դ Ի, Կ Ո Ւ Ո Ն Ի, Վ Է Բ Ն Ի, Վ Ա Բ Պ Ե Տ Շ Տ Է Յ Ն Մ Է Յ Լ
Ե արիշ շատ Գ Ի Ի Ղ Ա Յ Ի Ք, այլ և Կ Ա Ն Ա Յ Ք Լ
Ե Բ Ե Խ Ա Յ Ք:

ԲՈՒՈԴԻ

Տեսնում էք կրակը սարերի վրայ:

ՇՏԷՅՆՄԷՅ

Լսում էք զանգակների ձայն:

ԲՈՒՈԴԻ

Թշնամին քշած է:

ՇՏԻՅՆՄԻՅ

Բերդերն առնուած են:

ԲՈՒՈԳԻ

Իսկ մենք Ուրեցիք մեր հողի վերայ
Ի հնչալէս ենք թողնուած այս բերդը կանդնած:
Մի՛թէ ամենից յետոյ պիտի մենք
Մեզ ազատ յայտնենք:

ՇՏԻՅՆՄԻՅ

Թողնենք, որ մնայ

Այս լուծը, որ մեզ պիտի հուսաձէր:
Սկէք, քանդեցէք:

ԲՈՒՈՐԸ

Քանդենք, հա քանդենք:

ԲՈՒՈԳԻ

Ո՞ր է փողածարն Ուրի դաւառի:

ՈՒՐԻ ԳԱԻԱՌԻ ՓՈՂԱԶԱՐԸ

Այստեղ: Ի՞նչ անեմ:

ԲՈՒՈԳԻ

Վերն գլնա և

Փողը հնչեցրու այնպէս, որ լսուի

Բոլոր սարերում, և ամեն ձորում

Արձագանք սալով, շուտ բոլոր մարդկանց

Մի տեղ ժողովէ:

Ուրի դաւառի փողածարը գուրս է դնում: Գալիս է Վ Ա Լ Տ Ի Բ

Ֆ Ի Ի Ր Ս Տ Ը

ՎԱԼՏԻՐ ՖԻԻՐՍ

Նայէք, մի շտապէք,

Բարեկամներ: Մենք դեռ լուր չենք ստացել

Ունտէրվալդէնից և ոչ էլ Շվեյցից:

Սպասենք, մինչև դան մարդիկ այնտեղից:

ԲՈՒՈԴԻ

Էլ ինչի սպասենք: Արդէն մեռած է

Մեր բռնակալը, և աղատութեան

Օրը լուսացաւ:

ՇՏԻՅՆՄԷՑ

Բաւական չէն մեզ

Ահա բորբոքուող այն լրարներները,

Որոնք փայլում են սարերի վերայ:

ԲՈՒՈԴԻ

Եկէք ամենքդ, մարդիկ ու կանայք,

Եկէք փշրեցէք վերելակները,

Շուտ կործանեցէք ողջ կամարները,

Քար ու քանդ արէք բոլոր պատերը,

Թող էլ չըմնայ քարը քարի վրայ:

ՇՏԻՅՆՄԷՑ

Իմ բարեկամներ, եկէք, մեր ձեռով

Շինածը մենք լաւ կիմանանք քանդել:

ԲՈՒՈՐԸ

Եկէք, դնանք, քանդենք:

(Բոլորը ամեն կողմից յարձակում են շինութեան վրայ:)

Վ.Ա.Լ.ՏԷՐ ՖԻԻՐՍՑ

Ի դուր է: Հիմայ

Ես էլ կարող չեմ յետ պահել նոցա:

Գալիս են Մ Է Լ, Խ Թ Ա Լ, Բ Ա Ո Ի Մ Գ Ա Ր Տ Է Ն

Մ Է Լ Խ Թ Ա Լ

Այս ինչ եմ տեսնում: Դեռ կայ այս բերդը:

Արդէն Սարնէնը մոխիր է դարձած,

Բոսրէրդն աւերակ:

ՎԱՆՏԷՐ ՖԻԻՐՍ

Ա, յդ դու ես Մէլիսթալ:

Աղատութիւնս ես բերում մեղ համար:

Արդեօք մաքրած է հողը թշնամուց:

ՄԷԼԻՍԹԱԼ

Իստակ է հողը: Ուրախացիր, հայր:

Ա, յս վայրկեանին, որ քեղ հեա խօսում ենք,

Մի հատ բռնակալ չըկայ ողջ երկրում:

ՎԱՆՏԷՐ ՖԻԻՐՍ

Շուտ պատմիր, ինչպէս առաք բերդերը:

ՄԷԼԻՍԹԱԼ

Բուդէնցն աներկիւղ և քաջ յարձակմամբ

Տիրեց Սարնէնին, Բոսրէրդն ես էի

Մի զիշեր առաջ արդէն վեր առել —

Բայց այժմ լսեցէք, թէ ինչ պատահեց:

Երբ որ թշնամուն քշեցինք բերդից

Եւ ուրախ ուրախ կրակ տուեցինք,

Արդէն մինչ երկինք խփում էր բոյը,

Տեսնենք վաղէվաղ եկաւ Գիթհէլմը

Գէսլէրի ծառան, և աղաղակեց,

Որ Բէրթա Բրունէկ մէջը այրվում է:

ՎԱՆՏԷՐ ՖԻԻՐՍ

Բարերար Աստուած:

(Վտվում է ինչպէ՛ս վեր են թափում վերելակների դերանները)

ՄԷԼԻՍԹԱԼ

Նա այստեղ ծածուկ

Փակում էր եղել Փօխախի հրամանով:

Կատաղած վիր թռաւ Բուդէնցը — պատճառ

Լսեցինք արդէն վեր էին թափուում
Վերանները և ամուր սիւները,
Նւ ծուխի միջից լսեցինք խեղճի
Ողբալի ձայնը:

ՎԱՆՏԷՐ ՖԻԻՐՍ

Աղատուած է նա:

ՄԵԼԻԹԱԼ

Շուտ և համարձակ պէտք էր մեզ լինիլ:
— Նժէ նա լինէր միայն մեր երկրի
Աղնուականը, ի հարկ է որ մենք
Կսիրէինք կեանքը, բայց դաշնակից էր
Նա մեզ, և Բէրթան յարդում էր ազգին—
Այսպէս մեր գլխից ձևուր վեր առանք
Ու կըրտին ընկանք:

ՎԱՆՏԷՐ ՖԻԻՐՍ

Աղատուած է նա:

ՄԵԼԻԹԱԼ

Այն: Բուզէնցը և ես դուրս բերինք
Նրան բոցի միջից, և մեր կակից,
Սաստիկ ճայթելով, վլաւ տանիքը:
— Նւ հիմա, երբ նա աղատուած տեսաւ
Իրան և աչքը բաց արեց, ընկաւ
Իշխանը գիրկս, և անխօս մեր մէջ
Կապուեցաւ մի դաշն, որ սաստիկ կրակում
Մխած, կըղիմնայ ամեն փորձերին:

ՎԱՆՏԷՐ ՖԻԻՐՍ

Կանդէնքէրդն ուր է:

ՄԷԼԹԱԼ

Բրիւնիզով անցաւ:

Եւ չէի ուզում, որ աչքի լոյսը
 Տանէր նա իւր հետ, նա, որ կուրացրեց
 Հօրս աչքերը: Ընկած եակից,
 Վրայ հասայ նորան և վեր ձգեցի
 Կոյր հօրս առաջ: Արդէն խաղում էր
 Սուրս նրա գլխին, սակայն ծերունու
 Ողորմութենից որպէս մի պարզև
 Ստացաւ նա կեանքը: Սաստիկ երդումով
 Խոստացաւ երբէք էլ յետ չըղտանալ:
 Նա կըկատարէ իւր խօսքը, պատճառ
 Ըզգաց մեր կուռը:

ՎԱՍՏԷՐ ՖԻԻՐՍ

Լաւ է, որ արնով

Չապակահնեցիր մեր յարկթութիւնը:

ԵՐԵՒԵՐԻ

(Վերկահնեցի կորուստները ձեռներին վազում են բեմի վրա

Աղատութիւն, աղատութիւն:

(Որի գառառի փողը սաստկութեամբ հնչեցնում են:)

ՎԱՍՏԷՐ ՖԻԻՐՍ

Տեսէք,

Թէ ինչ հանդէս է: Այս երեխայքը

Խոր ծերութեան մէջ կ'յիշեն այս օրը:

(Աղջիկներ բերում են գդակը մի փայտի վրայ ծածկած.

բոլոր բեմը լցվում է ժողովուրդով:)

ԲՈՒՈՂԻ

Անձ գդակը, որի առաջ մենք

Պիտի թեքուէինք:

ԲԱՍԻՄԳԱՐՏԻՆ

Ասացէք, արդեօք

Ի՞նչ անենք սորան:

ՎԱԼՏԵՐ ՖԻԻՐՍ

Աստուած, նորա սակ

Թուս կանգնած էր:

ՇԱՏ ՁԱՅՆԵՐ

Ոչնչացրեցէք

Այդ նշանակը բռնակալութեան:

Ձգեցէք կրակը:

ՎԱԼՏԵՐ ՖԻԻՐՍ

Ձէ, թողէք պահներ:

Որպէս մի դործիք ծառայում էր դա

Բռնակալութեան, թող այսուհետեւ

Լինի նշանը մեր աղափութեան:

Վաղացիք մտրդիկ, կանայք և երեխերք կանգնած ու նստած
են քանդուած վերելակների դերանների վրայ դեղեցիկ կար-
գաւորուած, կազմելով մի կիսաշրջան բ՛նի շուրջ:

ՄԵԼԻԹԱԼ

Այսպէս ուրեմն, ով դաշնակիցներ,

Ուրախ կանգնած ենք բռնակալութեան

Աւերակի վրայ, և Տիւալի վերայ

Ինչ որ կղզուեցինք, ահա կատարուեց

Փառաւորապէս:

ՎԱԼՏԵՐ ՖԻԻՐՍ

Գործը սկսած է,

Բայց չէ աւարտած: Այժմ հարկաւոր է

Արիութիւն և միարանութիւն:

Հաւաստի եղէք, որ թագաւորը

Կըշտասի առնել իւր կուսակալի

Մահուան վրէժը, և արատքսածին
Բռնի յետ դարձնել:

ՄԷԼԽԹԱԼ

Թող դայ խր բոլոր

Ջորութեամբ: Ներսից թշնամին քշած է:
Դրսից եկողին մեր կըհանդիպենք:

ԲՈՒՈԳԻ

Միայն մի քանի նեղ ձորեր կան բաց,
Որոնց կըծածկենք մեր մարմինններով:

ԲԱՈՒՄԳԱՐՏԷՆ

Կատուած սուրբ կապով մինչև յաւիտեան,
Մենք չենք վախենում նորա դորքերից:

Բ Է Ս Է Լ Մ Ա Ն և Շ Տ Ա Ո Ի Ֆ Ա Խ Է Ր դալիս են
ԲԷՍԷԼՄԱՆ (ներս մտնելով:)

Այ սարսափելի երկնային սլաափ:

ԳԻԻՂԱՅԻՆԵՐ

Ի՞նչ կայ:

ԲԷՍԷԼՄԱՆ

Ի՞նչ տեսակ ժամանակներ կն:

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ

Ասացէք ի՞նչ կայ: Այդ դու ևս վերներ:
Ի՞նչ համբաւ:

ԳԻԻՂԱՅԻՆԵՐ

Ի՞նչ կայ:

ԲԷՍԷԼՄԱՆ

Ահա լսեցէք:

Եւ կըղարմանաք:

ՇՏԱՈՒՖԱԽԷՐ

Մի մեծ երկիւղից

Աղատուած ենք մենք:

ԲԷՍԷԼՄԱՆ

Կայսրը սպանուած է:

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ

Ողորմած Աստուած:

(Ղիսղացիները շփոթվում են և շրջապատում են Շասուֆա-
խէրին:)

ԲՈՒՈՐԸ

Սպանուած, ինչ, կայսրը.

Լսում էք, կայսրը:

ՄԷԼԽԹԱԼ

Անկարելի է:

Այդ լուրն ո՞վ բերեց:

ՇՏԱՈՒՖԱԽԷՐ

Չէ, հաստատ բան է

Բրուկի մօտ ընկաւ արքայ Ալբրէխտը

Մի մարդասպանից—Մի արժանահաւատ

Ճշմարտախօս մարդ, Յովհաննէս Միւլլէր

Բերեց այդ լուրը Շաֆհաուզէնիցը:

ՎԱԼՏԷՐ ՖԻԻՐՍ

Ո՞վ համարձակուեց այդ սարսափելի

Գործը կատարել:

ՇՏԱՈՒՖԱԽԷՐ

Դա ևս առելի

Սարսափելի է, պատճառ սպանողը

Իւր եղբայրորդին է, Յովհաննէսը,

Շվարխայի դաքտը:

ՄԷԼԽԹԱԼ

Ի՞նչը ստիպից նրան

Հայրասպան դառնար:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Կայսրը չէր տալիս
Նորան հայրական ժառանգութիւնը,
Թէ և անհամբեր պահանջում էր նա:
Չայն կար, թէ կայսրը միաք ունի իսպառ
Ջրկել նորանից և եպիսկոպոս
Չեռնադրել տալ նրան: Ինչպէս և իցէ—
Երիտասարդը բարեկամների
Չար խօսքին լսեց, և որովհետև
Յոյս չուներ ստանալ կայսրից իրաւունք,
Վճռեց ֆօն Էշէնբախ, ֆօն Տէգէրֆէլդ,
Ֆօն Վարտ և ֆօն Պալմ պարոնների հետ
Սեփական ձեռով վրէժ առնել կայսրից:

ՎԱՆՏԷՐ ՖԻԻՐՍ

Պատմիր խնդրում եմ, ինչպէս կատարուեց
Ստակալի դործը:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Արքան գնում էր

Շտէյնից դէպ Րէյնֆէլդ, ուր այն ժամանակ
Ունէր բնակութիւն: Նորա հետ էին
Հանս և Ղէօպօլդ արքայազները
Եւ մեծ բազմութիւն այլ ասպետների:
Եւ երբ որ հասան Րէյխի ափին,
Ուր նաւով պիտի անցկենալ դետը,
Բնկան նաւի մէջ մարդասպանները
Եւ այդպէս կայսրին բաժանեցին իւր
Ուղեկիցներից: Յետոյ, երբ կայսրը

Չիտլ դնում էր մի արտի միջով —
Ասում են այնտեղ տակը թաղած է
Մի հին մեծ քաղաք հեթանոսական
ժամանակներից — Հարսուրդ ամրոցին
Հանդէպ, ուր նորա տան մեծ ութ խնւր
Ըսկիզբն է առել — դուքս Յովհաննէսը
Յցեց դաշնակը կայսրի կտկորդում,
Բուղօլֆ Փօն Պալմը նիզակով ծակեց
Նորա կուրծքը և Փօն Նշէնրախը
Գլուխը ճեղքեց, և նա վեր ընկաւ
Իւր արխնի մէջ, սպանուած իւրերից,
Իւր հողի վերայ: Միւս ամից տեսան
Այդ դործը, սակայն գետով բաժանուած,
Բացի ողբալուց բան չըկարացին:
Մի խեղճ կին նստած էր ճանապարհին,
Նորա դրկի մէջ կայսրը սուեց հողին:

ՄԷԼԻԹԱԼ

Այդպէս վաղօրօք ինքը իւր համար
Փորեց գերեզման, որ անհաղ սրտով
Ուզում էր տիրել բոլոր աշխարհին:

ՇՏԱՌԻՖԱԽԵՐ

Սաստիկ երկիւղ է տիրել օղջ երկրին.
Կապած են բոլոր ճանապարհները:
Ամեն նահանգ իւր սահմանն է սրահում,
Եւ մինչև անդամ Յիւրիխն էլ կողպեց
Գաները, որոնք երևաւն տարի
Բաց էին կանգնած, երկիւղ կրելով

Չարագործներին և ևս աւելի —
Վրիժահաններին: Պատճառ նզովքով
Չինուորուած գալիս է Մաճառների
Թաղուհին Աղնէս, որ չէ ճանաչում
Իւր քնքուշ սեռի համեատութիւնը,
Գալիս է առնել հօր արքայական
Արիւնի վրէժը նրա սպանողների
Բողոր ցեղիցը, նոցա ճորտերից,
Չաւակ ու թռուից և ամբողջների
Քարերից անդամ: Նրդուել է ածել
Ամբողջ սերունդներ հօր գերեզմանում,
Եւ արիւնի մէջ լողանալ ինչպէս
Մայիսեան ցողում:

ՄԷԼԻԹԱԼ

Ո՞ր կողմն են փախել չարագործները:

ՇՏԱՈՒՖԱԽԻՐ

Այդ գործից յետոյ շուտ փախան նոքա
Հինգ ուրիշ ուրիշ ճանապարհներով,
Որ էլ չըտեսնեն միմեանց այս կեանքում:
Գուքս Յովհաննէսի մասին ասում են,
Թէ նա շրջում է այստեղ սարերում:

ՎԱԼՏԻՐ ՖԻԻՐՍ

Այսպէս ոչ ինչ պտուղ չըրերեց նոցա
Իրանց չար գործը: Վրէժը պտուղ չունի:
Ինքն է սեփական իւր կերակուրը,
Սպանութիւնն է նրա վայելչութիւնը,
Եւ հետեանքը երկիւղն ու սարսափ:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Մարդաստանններին օգուտ չըլերեց
 Խրանց յանցանքը. իսկ մենք կըքաղենք
 Մեր մաքուր ձեռով արիւնտա դործի
 Օրհնած պտուղը: Մենք աղատուեցանք
 Մի մեծ երկիւղից: Ընկաւ թշնամին
 Մեր աղատութեան, և, ինչպէս ձայն կայ,
 Իշխանութիւնը Հաբարուրդի ցեղից
 Կանցնի անպատճառ ուրիշ ցեղի վրայ:
 Կայսիրութիւնը ուղում է պահել
 Իւր ընտրողական իրաւունքները:

ՎԱՆՏԷՐ ՖԻԻՐՍ և ՇԱՏԵՐԸ

Բան ևս խմացել:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Արդէն շատերից

Նշանակուած է կոմս Լաքսէնբուրգը:

ՎԱՆՐԷՐ ՖԻԻՐՍ

Լու է, որ հաստատ մնացինք աէրութեան,

Կարող ենք սպասել այժմ արդարութեան:

ՇՏԱՌԻՖԱԽԷՐ

Նոր կայսրին պէտք են քաջ բարեկամներ

Նա մեզ կպաշտպանէ Աւստրիայի վրէժից:

(Գլխաւորները դրկում են մ'իմեանց:)

Տ Ի Ր Ա Յ Ո Ւ Ն մ ի Թ . Ա . Գ . Ա . Ի . Ո . Ր . Ա . Կ . Ա . Ն Ս Ո Ւ Ր Հ Ա Ն Գ . Ա . Կ . Ի

հետ

ՏԻՐԱՅՈՒՆ

Ահա այստեղ են աղգի մեծերը:

ԲԵՍԷՆՄԱՆ և ՇԱՏԵՐԸ

Տիրացու, ինչ կայ:

ՏԻՐԱՅՈՒ

Թագաւորական

Սուրհանդակն անա բերեց այս դիրք:

ԲՈՒՈՐԸ (Վալտեր Ֆերասին:)

Բայ արա, կարդա:

ՎԱՆՏԷՐ ՖԻՐՐՏ (կարդում է)

«Ուրի, Շվիցի և

«Ունտերլալդէնի համետ մարդկանցը

«Աւաջարկում է թագուհին Էլսթա

«Իւր շնորհը:

ՇԱՏ ՉԱՅՆԵՐ

Ի՞նչ է ուղում թագուհին,

Վերջացաւ նորա իշխանութիւնը:

ՎԱՆՏԷՐ ՖԻՐՐՍ (կարդում է)

«Իւր այրիութեան սաստիկ վշտի մէջ,

«Որի մէջ ձգեց ամուսին արտջ

«Արիւնաշաղաղ մահը թագուհուն,

«Գեւ ևս յիշում է նա Շվեյցարացուց

«Վաղուայ սէրը և հաւատարմութիւն:

ՄԷԼԻԹԱԼ

Բաղդի օրերում նա այդ չէ արել:

ԸՆԾԷԼՄԱՆ

Սուս, սուս, թող լսենք:

ՎԱՆՏԷՐ ՖԻՐՐՍ (կարդում է)

«Եւ նա սպասում է այդ հաւատարիմ

«Ու բարի ազգից, որ իբաւացի

«Զգուանք ցոյց կըտայ նա այն անիծեալ

«Զարադուրծներին: Եւս և յոյս ունի

«Նրեք դաւառից, որ չէթէ կօղնեն
«Մարդասպաններին, այլ ընդհակառակ
«Հաւատարմարար կաշխատեն մատնել
«Վրբէժինդրութեան ձեռք, յիշելով
«Այն սերն ու շնորհը, որ ըստացել են
«Նորա թուղօլֆի իշխանական տնից:
(Անբաւականութեան նշաններ գիւղացիների մէջ:)

ՇԱՏ ՁԱՅՆԵՐ

Սէր ու շնորհը:

ՇՏԱՌԻՖԱԽԵՐ

Մենք շնորհ ստացել ենք
Հօրից, բայց սրդուց ինչով պարծենանք,
Հաստատեց նա մեր ազատութեան դիր,
Ինչպէս առաջին կայսրերն արել են:
Կատարել է նա արդար դատատան,
Եւ անսկզբեան կողմ է պաշտպան,
Կամ դոնէ լսեց մեր նուիրակներին
Արանց կարիքում մօտն ուղարկեցինք:
Չէ, այդ ամենից մինն էլ չէ արել
Մեզ թագաւորը, և, թէ ինքներս
Չեաք չրբերէինք մեր իրաւունքը,
Երբէք չէր շարժի նրան մեր կարիքը—
Շնորհակալութիւն—Չէ, նա այս երկրում
Նրբէք չէ ցանել շնորհակալութիւն:
Նա անչափ բարձր էր կանգնած, կարող էր
Բարի հայր լինել բոլոր ազգերին:
Իրերի համար միայն հոգս էր քաշում,
Ուրեմն նորա թող լան նրա համար:

ՎԱԼՏԵՐ ՖԻԻՐՍ

Նորա անկման վրայ չենք սրախանում,
Չենք յիշում նորա վատութիւնները,
Որ մեզ արել է: Հեռու մեզանից:
Սակայն վրէժ առնել մի թագաւորի
Մահուան, որից մենք երբէք չենք տեսել
Մի հատ լաւութիւն, կամ թէ հալածել
Նոցա, որոնք մեզ չեն վշտացրել,
Այդ մեզ վայել չէ: Սէրն աղատ դո՛հ է:
Մահն աղատում է սպիտուած պարտքերից:
— Նորան մենք ոչ ինչ էլ չենք պարտական:

ՄԷԼԻԹԱԼ

Թող լայ թագուհին իւր սենեակի մէջ,
Թող նա գանդատէ իւր ցաւն երկնքին.
Այտնել տեսնում էք մի աղատուած աղք,
Որ նոյն երկիւնքը դո՛հարանում է—
Ով որ ուզում է արտասուք քաղել,
Այնպիսին պէտք է ինքն էլ սէր ցանէ:
(Թագաւորական սուրհանդակը դուրս է դնում:)

ՇՏԱՌԻՖԱԽԵՐ (Ժողովուրդին)

Բայց ուր է Տէլը: Ինչի մեզ մօտ չէ,
Նա, որ հիմնադն է մեր աղատութեան:
Ամենամեծը նա է կատարել,
Ամենածանրը նա է համբերել:
Եկէք ամենքս էլ նորա տուն դիմենք,
Կեցցե՛ս, աղատող, բարձրաձայն կանչենք:
(Բոլորը դուրս են դնում:)

Երկրորդ անասրան

Տէլլի տան բակը:

(Արաւիարանի վրայ կրակ է վառւում: Բայց դռն երկից երևում է հեռաորութիւնը:)

Հ Է Գ Վ Ի Գ, Վ Ա Լ Տ Է Բ Է Վ Ի Լ, Հ Է Լ Մ:
Հ Է Գ Վ Ի Գ.

Ա յսօր, իմ որդիք, կըզայ ձեր հայրը:

Նա կենդանի է, ազատ է, և մենք

Ամենքս ազատ ենք, և հայրենիքն էլ

Ձեր հայրն ազատեց:

Վ Ա Լ Տ Է Բ

Նա էլ հետն էի,

Մայք ինձ էլ պիտի միասին յիշեն:

Հօրս նետը շատ մօտ թռաւ ինձնից,

Բայց չըղողացի:

Հ Է Գ Վ Ի Գ (դրկում է նորան:)

Քեզ կրկին ստացայ:

Երկու անգամ ծնայ, և երկու անգամ

Զգացի մօր ցարը: Բայց բոլորն անցաւ.—

Երկուսդ էլ իմն էք: Նւ այսօր կըզայ

Սիրելի հայրը:

Մի ԿՐՕՆԱԽՈՐ երևում է տան գոների մէջ:

Վ.Խ.ՀԷԼ.Մ

Մայրիկ, տես այնտեղ

Մի բարեպաշտ հայր, անպատճառ մեղնից

Մի սուրբ կըլնեղրէ:

ՀԷԳՎ.ԻԳ

Գնա ներս բեր նորան,

Որ պատուասիրենք: Թող զգայ նա մեր տան

Ուրախութիւնը:

(Մանում է տան և շուտ յետ է դառնում մի դաւաթ ձեռին:)

Վ.Խ.ՀԷԼ.Մ (կրօնատրին)

Մայր, բարի հայր,

Մայրս ուղում է քեզ մի բան խմեցնել:

ՎԱՆՏԷՐ

Հանգստացիր, հայր և յետոյ զընա:

ԿՐՕՆԱԽՈՐ

(Երկիւղալի նայում է դէս ու դէն շփոթուած դէմքով:)

Ասացէք ինչտեղ եմ ես, որ երկրում:

ՎԱՆՏԷՐ

Հայր, մտորուել ես որ այդ չըզիտես:

Գու թիւրդէնումն ես, Ուրի գաւառում,

Ինչտեղ իջնում են Շէխէնի ձորը:

ԿՐՕՆԱԽՈՐ

(Հէղվիղին, որ յետ է դառնում)

Ղու միայնակ ես: Տանն է քո տէրը:

ՀԷԳՎ.ԻԳ

Իսկոյն սպասում եմ—Սակայն այս ինչ է:

Քո դէմքից լաւ բան չեմ գուշակում ես:

— Ով կուզէ լինես, կարօտ ես, ան, խմէ:
(Տալիս է նորան դաւաթը)

ԿՐԾՆԱԽՈՐ

Թէ ե ծառայից այրվում է սիրտս,
Չեմ առնի, մինչև չի խոստանաս ինձ—
ՀԵՂՎԻԳ

Որդու մի ձեռ տա, մի մօտենար ինձ,
Հեռու կանց մեղնից, եթէ ուզում ես,
Որ ես քեզ լսեմ:

ԿՐԾՆԱԽՈՐ

Երդուեցնում եմ քեզ
Այս կրակարանի հիւրընկալ կրակով,
Եւ քո երեխանց թանկագին գլխով,
Որ ես գրկում եմ—

(բռնում է երեխանցը:)

ՀԵՂՎԻԳ

Այ մարդ ինչ ունիս
Մտքումդ: Հեռու, իմ երեխանցից—
Կու կրօնաւոր չես: Խաղաղութիւնը
Պետի բնակի այդ հանդերձի մէջ,
Բայց քո դէմքի մէջ նա չէ բնակում:

ԿՐԾՆԱԽՈՐ

Ես մի տարաբաղդ ու թշուառ մարդ եմ:
ՀԵՂՎԻԳ

Տարաբաղդութեան կարեկից եմ ես,
Բայց քո հայեացքը սխմում է կուրծքս:
ՎԱՆՏԷՐ (վեր թռչելով:)

Մայրիկ, տես, ահա հայրս դալիս է:

(Դուրս է վազում)

ՀԵՂՎԻՊ

Ո՛հ Աստուած:

(Ուզում է հետևել նորան, դողում է և կանգնում է)

ՎԻԼՀԵԼՄ (դուրս վազելով)

Հայր:

ՎԱԼՏԵՐ (դուրսը)

Ահա դու եկար:

ՎԻԼՀԵԼՄ (դուրսը)

Հայր, սիրելի հայր:

ՏԵԼԼ (դուրս)

Ահա ես եկայ—

Ո՞ւր է ձեր մայրը:

(Ներս են մտնում:)

ՎԱԼՏԵՐ

Գռան մէջ կանգնած

Չէ կարողանում նա շարժուել տեղից

Եփոթում ահից և ուրախութենից:

ՏԵԼԼ

Ո՛հ Հէդվիգ, Հէդվիգ, մայր իմ որդկերանց:

Աստուած վճռեց— Մեղ էլ չի բաժանի

Ոչ մի բռնակալ:

ՀԵՂՎԻՊ

(փաթաթուելով նորա վզին)

Ո՛հ, ՏԵԼԼ «ՏԵԼԼ» ինչքան

Ահ ու դող կերայ:

(Արժանաւոր ուշադրութիւն է դարձնում)

ՏԵԼԼ

Այժմ մտաւրիք

Եւ ուրախացիր: Ահա այստեղ եմ

Ա. 10 իմ խորհիւթն է: Նորից ձեզ հետ եմ:

Վ.Ի.Հ.Ե.Մ

Բայց աղեղդ ուր է, հայր, ես չեմ տեսնում:

ՏԵՂԼ

Գու էլ չես տեսնի նորան, իմ որդի:

Նա այժմ պահուած է մի սրբազան տեղ,

Եւ այսուհետեւ ծառայելու չէ:

Նա որսի համար:

ՀԵԴՎ.ԻԳ

Ո՛հ, ՏԵՂԼ, ՏԵՂԼ

(Թողնում է նորա ձեռք և յետ է քաշվում)

ՏԵՂԼ

Ի՞նչ է,

Ինչից վախեցար, սիրելի կին իմ:

ՀԵԴՎ.ԻԳ

Ո՛հ, ինչպէս եկար դու էլի ինձ մօտ—

Ա. 17 ձեռք—Արդեօք կարող եմ բռնել—

Ա. 17 ձեռք—Աստուած:

ՏԵՂԼ

Սա ձեզ պաշտպանեց

Եւ հայրենիքը աղատեց: Ազատ

կարող եմ մեկնել դէպի երկինքը:

Կրօնատըրը ուղում է առջ զայ, ՏԵՂԼ նկատում է նորան:)

Ո՞վ է այս հայրը:

ՀԵԴՎ.ԻԳ

Ախ՛, մտադայ նրան:

Խօսիք դու հետը, ես վախենում եմ:

ԿՐՕՆԱՏՐԸ (մօտ է դալիս)

Գու ես ՏԵՂԼ, որ սպանեց լանդֆօխտին:

ՏԵՂԼ

Ես եմ, ոչ ոքից չեմ թաքցնում այդ:

ԿՐՕՆԱԽՈՐ

Դու Տէլլն ես: Ուրեմն Աստուծոյ ձեռք
Բերեց ինձ քս տուն:

ՏԵՂԼ

(Չափում է նորան աչքերով:)

Դու կրօնաւոր չես:

Ապա ո՞վ ես դու:

ԿՐՕՆԱԽՈՐ

Դու սպանեցիր

Լանդֆօխտին, որ քեզ վատութիւն արեց—

Ես էլ սպանեցի թշնամուս, որ խլեց

Իմ իրաւունքը— Նա թշնամի էր

Քեզ էլ, ինչպէս ինձ— Ես աղատեցի

Երկիրը նրանից:

ՏԵՂԼ (յետ քաշուելով)

Դ՞ու ես— Ո՞՞՛՛ Աստուած:

Որդիք տուն գնացէք, գնան, կլին իմ, զընտ—

Տարարաղղ, դ՞ու ես:

ՀԵՒՎԻԳ

Աստուած, ո՞վ է սա:

ՏԵՂԼ

Մի հարցնիր: Գնան: Երեխերքը այդ

Պիտի չխմանան: Դուրս գնա տանից—

Հեռու գնա: Սրա հետ կարող չես մնալ

Դու մի յարկի տակ:

ՀԵՒՎԻԳ

Վանց, այս ի՞նչ է: Գնանք:

(Գուրա է գնում երեխանց հետ։)

ՏԵՆԼ, (կրօնատրին)

Գու Աւստրիայի դուքսն ես—դու նա ես։
Գու սպանել ես կայսրին, տիրոջդ
Նւ հօրեղբորդ։

ՅՈՎ. ՀԱՆՆԵՍ ՀԱՅՐԱՍՊԱՆ

Իմ ժառանգութեան

Յափշտակողն էր։

ՏԵՆԼ,

Սպանեցիր կայսրին։ Նւ դեռ գետինը
կրում է քեզ իւր վրայ, էլի արևը
լոյս է տալիս քեզ։

ՀԱՅՐԱՍՊԱՆ

Տէլլ, դեռ իմացիր։

ՏԵՆԼ,

Հայրասպանութեամբ արիւնհաշաղաղ,
Համարձակվում ես դու իմ անարատ
Տան շեմքը կոխել։ Համարձակվում ես
Յոյց տալ քո դէմքը մի բարի մարդու,
Նւ խնդրել նրանից հիւրասիրութիւն։

ՀԱՅՐԱՍՊԱՆ

Ես յոյս ունէի քո կարեկցութեան.

Գու էլ վրէժ առար թշնամուց։

ՏԵՆԼ,

Թշուառ,

Գու յանդգնում ես փառասիրութեան
Արիւնի դործը համեմատել հօր
Իւր անձնի արդար պաշտպանութեան հետ։
Պաշտպանեցիր դու արդեօք երեխանց

Թանկագին կեանքը, տան սրբութիւնը:
Հեռացրիր արդեօք քո գերդաստանից,
Ինչ որ վերջինն է ու սարսափելին:
— Ես դէպի երկինք բարձրացնում եմ
Իմ մաքուր ձեռները, անիծում եմ քեզ
Եւ քո դորձը— Ես վրէժխնդիր եղայ
Սուրբ բնութեան համար, որ դու պղծեցիր—
Ես քեզ ընկեր չեմ— Գու մարդասպան ես,
Ես պաշտպանեցի ինչ որ ամենից
Թանկ է ինձ համար:

ՀԱՅՐԱՍՊԱՆ

Գու անմխիթար

Եւ յուսահատուած քշում ես ինձ քեզնից:

ՏԵՂԷ

Ես սարսափում եմ հեռդ խօսելիս:
Գնահ զարհուրելի քո ճանապարհով:
Գնահ, դու պղծում ես իմ անմեղ սուներ:

ՀԱՅՐԱՍՊԱՆ

(Շար է գալիս, որ գնայ:)

Այսպէս չեմ կարող, ոչ էլ ուղում եմ
Աւելի ապրել:

ՏԵՂԷ

Էլի խղճում եմ

Ես քեզ— Տէր Աստուած, դեռ այդպէս մատաղ
Եւ ազնիւ ցեղից, իմ տէր ու կայսր
Բուղօլքի թողը, որպէս մարդասպան
Եւ փախստական կանգնած է ինձ պէս
Ինչ՞ մարդու դռանը— խեղճ և յուսահատ

(ծածկում է երեսը:)

ՀԱՅՐԱՍՊԱՆ

Ո՛հ, թէ կարող ես լալ, թող շարժէ քեզ
իմ վիճակը, դա դարձուցելի է:
Ես մի իշխան եմ—ես իշխան էի—
Ես կարող էի բաղդաւոր լինիլ,
Եթէ անհամբեր սիրտս դասէի:
Նախանձը սաստիկ տանջումէր հոգիս—
Ես տեսնում էի իմ երիտասարդ
Հօրեղբորորդուն պատուով դարդարած
Սէ երկիրներով առատ վարձատրած,
Իսկ ինձ տարիքով նրա հասակակցին,
Պահում էին ինչպէս անչափահասին:

ՏԵՂԷ

Տարաբաղդ դու, լաւ ճանաչում էր քեզ
Քո հօրեղբայրը, որ չուզեց քեզ տալ
Երկիր ու մարդիկ: Դու քո վայրենի
Խելագար գործով արդարացնում ես
Նորա վճիռը:—Ո՛ւր են այժմ քո
Չարագործութեան օգնականները:

ՀԱՅՐԱՍՊԱՆ

Ուր ողիները վրէժխնդրութեան
Քշել են նոցա: Ես էլ չեմ տեսիլ
Նոցա տարաբաղդ այն գործից յետոյ:

ՏԵՂԷ

Գիտես, որ դու այժմ դուրկ ես օրէնքի
Պաշտպանութենից, որ բարեկամին
Արգելուած ես դու, թշնամուն թոյլ տուած:

ՀԱՅՐԱՍՊԱՆ

Այդ պատճառով էլ փախչում եմ ես մեծ
 Հանապարհներից, չեմ համարձակվում
 Մեծել մի տան դուռ—Գէպի անասպատ
 Ուղղում եմ դնաջքս: Ինքս եմ դարձուրանք,
 Քափառում եմ ես սար ու ձորերում,
 Եւ սարսափում եմ ինքս ինձանից,
 Երբ որ մի վտակ ցոյց է ապրիս ինձ
 Թշուառ պատկերս: Ո՛հ, թէ ըղզում ես
 Կարեկցութիւն և մարդասիրութիւն—

(Ընկնում է նորա առաջ)

ՏԷԼԼ ԵՐԵՍՐ ԴԱՐՃՆԵՐՈՎ

Վեր կաց, վեր կաց:

ՀԱՅՐԱՍՊԱՆ

Չէ, մինչև չըտաս ինձ

Օգնութեան ձեռք:

ՏԷԼԼ

Ի՞նչպէս օգնել քեզ:

Ո՞ր մահկանացու կարող է օգնել:

Բայց վեր կաց— թէպէտ և շատ մեծ է քո

Մեղքը— բայց էլի ինձ պէս մի մարդ ես:

Տէլլն անմխիթար չի թողնի մարդուն,

Պատրաստ եմ անել, ինչ որ կարող եմ:

ՀԱՅՐԱՍՊԱՆ

(Վեր թռչելով և սաստկութեամբ բռնելով նորա ձեռք.)

Ո՛հ, դու փրկում ես, Տէլլ, իմ խեղճ հաղին

Յուսահատութենից:

ՏԷԼԼ

Թո՛ղ, թո՛ղ իմ ձեռք—

Հեռացիր: Այտուղ դու ապահով չես—
Ո՞ր կերթաս, ինչտեղ յոյս ունիս գտնել
Դու հանգստութիւն:

ՀԱՅՐԱՍՊԱՆ

Աւաղ, չըղիտեմ:

ՏԷԼԼ

Ա՛յ ինչ է աղղում Աստուած սրտիս մէջ—
Գնա Իտալիա, Հռոմ քաղաքը,
Ընկիր սրբաբան պապի ոտները,
Խոստովանիր նրան քո ծանր մեղքը
Եւ ազատիր քո հողին:

ՀԱՅՐԱՍՊԱՆ

Բայց արդեօք

Չի մատնի նա ինձ թշնամուս ձեռը:

ՏԷԼԼ

Ինչ նա քեզ կանէ, Աստուծոյ կամքը
Պիտի համարես:

ՀԱՅՐԱՍՊԱՆ

Բայց ինչպէս համեմ

Ես այն երկիրը: Ինձ անծանօթ են

Ճանապարհները, և ընկերանալ

Մարդու կարող չեմ:

ՏԷԼԼ

Ա՛յ լսիր, ասեմ

Քեզ ճանապարհը: Դու կըբարձրանաս

Իէյս դետի ձորով, որ սարից կատղած

Յած է գլորվում—

ՀԱՅՐԱՍՊԱՆ (վախեցած)

Իէյսը պետ՝ տեսնեմ:

Նա վկայ է իմ չարագործութեանս

ՏԵԼԼ,

Անդունդի վրայ է գնում ճանապարհը,
Եւ շատ տեղ կանգնած են խաչեր, որոնք
Յոյց են տալիս այն տեղերը, ինչտեղ
Չնում թաղուած են ճանապարհորդներ:

ՀԱՅՐԱՍՊԱՆ

Ոչ ինչ են բնութեան արհաւիրքները,
Միայն թէ դապէի սրտիս ցաւերը:

ՏԵԼԼ,

Ամեն մի խաչի առաջ կշռքես,
Քո ծանր մեղքը լալովկըքաւես—
Եւ յաջողութեամբ թէ անցկրկենաս
Դու սարսափելի այն ճանապարհը,
Եւ չի ուղարկի քեզ վրայ մրրիկներ
Սառցապատ լեռք իւր զազաթներից,
Ապա կը հասնես կամուրջի վերայ,
Որ օր օր վում է. թէ չի կոտորւի
Նա քո մեղքի տակ, և թէ բաղդատը
Վրէն անցկրկենաս, ապա կը բացուի
Յանկարծ քո առաջ մի սև ժայռի դուռ—
Ուր միշտ գիշեր է—կըմտնես նրա մէջ,
Նա քեզ կը քանէ դէպի մի պայծառ
Եւ ուրախ հովիտ—բայց շուտ քայլերով
Պիտի առաջ գնաս. դու չես կարող մնալ
Ինչտեղ բնակում է խաղաղութիւնը:

ՀԱՅՐԱՍՊԱՆ

Ո՛հ, Բուդօլֆ, Բուդօլֆ, արքայական պապ,

Այսպէս քո թողը թշուառ շրջում է
Գոտէրութեան մէջ:

ՏԵՆԼ

Եւ այդպէս ահա

Միշտ բարձրանալով, վերջապէս կը դաս

Գօթարդի վերայ, մշտնջենաւոր

Լճերի ափը, որոնք լցվում են

Երկնքի ջրերով: Այնտեղ դու կը տաս

Վերջին բարովի Գերմանիայի հողին,

Եւ մի ուրիշ գետ արագ ընթացքով

Կազմորէ քեզ դէպ իտալիա,

Որ է քեզ համար աւետեաց երկիր:—

(լսվում է փողահարութիւն:)

Չայներ եմ լսում: Գնան շուտ:

ՀԵՒՎԻԳ (շտապովներս է մտնում:)

Ո՞ր ես, Տէլլ:

Հայրը դալիս է, և մտանում են

Ուրախ բաղմութեամբ դաշնակիցները:—

ՀԱՅՐԱՍՊԱՆ

Վայ ինձ, չեմ կարող բաղդաւորներին

Ես ընկերանալ:

ՏԵՆԼ

Գնա, սիրելի կին,

Չովացրու սորան: Առատ պաշար սուր,

Պատճառ հեռու է սորա ճանապարհը,

Եւ չէ գտնելու մի տեղ ապաստան:

Շտապիր, գալիս են:

ՀԵՒՎԻԳ

Ո՞վ է:

ՏԵԼԼ

Մի հարցնիր:

Եւ երբ որ կերթայ, դարձրու աչքերդ,

Որ չըտեսնես, թէ որ կողմը գնաց:

(Հայրասպանը շուտ մտա է գնում Տէլլին, բայց սա ձեռով
ցոյց է տալիս, որ հեռանայ և ինքը դուրս է գնում: Երբ որ
երկուսն էլ դուրս են գնում դանազան կողմեր, տեսարանը
փոխվում է և երևում է

Վերջին տեսարանի մեջ

Բոլոր ձորը Տէլլի տան առաջ մերձակայ սարերով, որոնք
պատում են ձորը: Բոլոր լեռների վրայ երևում են զխաղաղի-
ներ, որոնք փոքր առ փոքր ժողովիլերով կազմում են մի մեծ
խումբ: Արիշները իջնում են լեռնաշաւիղով, որ տարածվում է
տեսարանի վրայ: Այլտէր Ֆիւրաւոր երկու տղերանցով,
Մէլիսթայը և Շտաուֆախէրը առաջ են գալիս, միասնորը հե-
տևում են նոցա. հենց որ Տէլլը դուրս է գալիս, ամենքը
ընդունում են նորան բարձրաձայն խնդութեամբ:

ԱՄԵՆՔԸ

Կեցցէ քաջ Տէլլը, մեր ազատողը:

Այն ինչ առաջինները շրջապատում են Տէլլին և դրկա-
խառնում են նորան, գալիս են Բ Ո Ւ Դ Ե Ն Յ Ը և Բ Ե Բ-
Թ Ա Ն, որոնցից առաջինը փաթաթվում է զխաղաղիներին,
խակ երկրորդը Հեղվիզին: Երաժշտութիւնը սարի վրայ շա-
րունակվում է այդ սնիստ գործողութեան ժամանակ: Երբ որ
դա վերջանում է, Բերթան խնում է ժողովուրդի մէջ:

ԲԷՐԹԱ

Ո՛վ դաշնակիցներ, վեր առէք ինձ ձեր
Գաշնակցութեան մէջ, ինձ բողոքաւորիս,
Որ պաշտպանութիւն դատու այս երկրում:
Ձեր քաջ կռներին հաւատում եմ եւ
Իմ իրաւունքը: Յօժար էք դուք ինձ
Պաշտպանել որպէս ձեր քաղաքացուն:

ԳԻՒՂԱՑԻՆԵՐ

Ա. յ՛՛, չենք խնայի ստացուածք եւ արիւն:


ԲԷՐԹԱ

Ապա տալիս եմ ձեռս այս պատանուն,
Ազատ աղջիկս ազատ աղամարդուն:

ԸՈՒԳԻՆՑ

Նս էլ ճորտերիս ազատ եմ յայտնում:

(Ա. յ՛ն ինչ երաժշտութիւնը շատ նորից սկսում է, վարագոյրը
ցած է ընկնում:)




ՏՊԱԳՐԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ

Երես	տող	տպած է	պէտք է կարդայ
4	13	վէրնի	կունի
8	15	ալէկօծվում է	ալէկօծվում է
19	6	իրաւունքները	իրաւունքները
25	12	լսել	լսել
26	20	ծրխօսներ	կրխօսներ
30	12	բառանշել	բառանշել
39	7	Իւնդֆրատն	Իւնդֆրատն
43	23	միմիանց	միմեանց
47	11	կրմնայ լօկ	կրմնայ միայն լօկ
50	21	դրոշակների	դրօշակների
57	5	սանդուխտներ	ստնդուղքներ
61	1	առօտատեղը	արօտատեղը
62	20	եմ սրաի մէջ	իմ սրաի մէջ
»	28	բանակալների	բռնակալների
63	4	անհաղ	անյաղ
»	25	շռայլութեամբ կեր ու խմելիս	շռայլութեամբ ուտել խմելիս
78	19	գործուն էլ	գործունն էլ
80	18	եւ հողեր ունիմ	եւ հողեր ունիմ
89	14	առուցը	սառուցը
91	22	կարտտեմ	կարտիմ
93	25	վախեցել	վախեցել է
96	24	ձեռ	ձեռս
111	2	արաջ	առաջ
134	15	չեմ տեսնում	չեմ տեսնում

141	6	տունք	տունք
143	6	հօր սիրտ	մօր սիրտ
»	13	խնչպէս մտածում	խնչպէս մտանամ
»	21	Յայրացրեց	Ջայրացրեց
162	2	հիւր իմ	հիւր եմ
180	10	սաստիկ երգում	սաստիկ երգումով
185	4	ժամանակներց	ժամանակներից
»	19	անհաղ	անյաղ

Բացի սորանից ընթերցողից խնդրում ենք ուղղել մի քանի երկրորդական տառասխալներ, խնչպէս են՝ ա և տ, ո և ս, դ և ղ, է և ե, որոնք մի քանի տեղ միմեանց տեղ դրած են: Աւելորդ համարեցինք նոյնպէս մի քանի հատուկ անունների մէջ մտած սխալները ուղղել, որովհետև այդ անունները շատ անգամ կրկնվում են, հետևաբար և ինքը ընթերցողը կարող է սխալ տեղը ուղիղ կարգալ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0341032

